

**Ա. Ա. ԱՎԱԳՅԱՆ
Վ. Ռ. ԲՈՅՆԱԳՐՅԱՆ**

**ԳԵՈՒՆՑՈՐՄԱՏԻԿԱՅԻ, ԳԵՈՂԵՉԻԱՅԻ
ԵՎ ՔԱՐՏԵՉԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԻՄՆԱԿԱՆ
ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՆԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՌԱԼԵՉՈՒ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ
(ռուսերեն-անգլերեն-հայերեն)**

ԵՐԵՎԱՆ - 2018

ՀՀ ԳԱԱ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ա. Ա. ԱՎԱԳՅԱՆ, Վ. Ռ. ԲՈՅՆԱԳՐՅԱՆ

19594
ԳԵՈՒՆՏՈՐՄԱՏԻԿԱՅԻ, ԳԵՈՂԵԶԻԱՅԻ ԵՎ
ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ
ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱԼԵԶՈՒ
ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ
(ռուսերեն-անգլերեն-հայերեն)

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

2018



ИНСТИТУТ ГЕОЛОГИЧЕСКИХ НАУК НАН РА
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

А. А. АВАКЯН, В. Р. БОЙНАГРЯН

ТРЕХЪЯЗЫЧНЫЙ
ПОЯСНИТЕЛЬНЫЙ СЛОВАРЬ
ОСНОВНЫХ ТЕРМИНОВ И ПОНЯТИЙ
ПО ГЕОИНФОРМАТИКЕ, ГЕОДЕЗИИ И
КАРТОГРАФИИ
(русско-англо-армянский)

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» РА
2018

INSTITUTE OF GEOLOGICAL SCIENCES OF NAS RA
YEREVAN STATE UNIVERSITY

A. A. AVAGYAN, V. R. BOYNAGRYAN

THREE-LANGUAGE EXPLANATORY
DICTIONARY OF BASIC TERMS AND
NOTIONS ON GEOINFORMATICS, GEODESY
AND CARTOGRAPHY
(russian-english-armenian)

YEREVAN
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2018

ՀՏԴ 528(038)
ԳՄԴ 26.1+92
Ա 770

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի և ԵՊՀ
աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշումներով

Գլխավոր խմբագիր՝ տ.գ.դ. Հ.Ս.Պետրոսյան

ԱՎԱԳՅԱՆ Ա. Ա., ԲՈՅՆԱԳԻՅԱՆ Վ. Ռ.

Ա 770 Գեոինֆորմատիկայի, գեոդեզիայի և քարտեզագրության
հիմնական տերմինների և հասկացությունների եռալեզու բա-
ցատրական բառարան (ռուսերեն-անգլերեն-հայերեն). - Եր.:
«Գիտություն» հրատ., 2018.- 207 էջ:

Բառարանը, որը ներառում է գեոինֆորմատիկայի, գեոդեզիայի,
քարտեզագրության և հետազոտությունների հեռահար եղանակների
մոտ 1000 տերմինների և հասկացությունների հայերեն բացատրու-
թյունը, առաջինն է Հայաստանում՝ նվիրված այս թեմային: Բառարանը
նախատեսված է ինչպես մասնագետների և հետազոտողների, այնպես
էլ ուսանողների համար: Մասնագիտական առօրյայում օգտագործվող
մեծ թվով օտարալեզու տերմինների փոխարեն բառարանում առա-
ջարկվում են հայալեզու տերմիններ: Հեղինակները հուսով են, որ
դրանք կընդունվեն հայ մասնագետների կողմից:

ՀՏԴ 528(038)
ԳՄԴ 26.1+92

ISBN 978-5-8080-1339-1

© Ավագյան Ա. Ա., 2018
© Բոյնագրյան Վ. Ռ., 2018

ՆԱԽԱԲԱՆ

Վերջին երկու տասնամյակների ընթացքում Հայաստանում աշխարհագրության և երկրաբանության ասպարեզում լայնորեն տարածում են ստացել աշխարհագրական տեղեկատվական համակարգերը, հեռահար զոնդավորման մեթոդները, սկսել են կիրառվել նոր օտարալեզու տերմիններ, որոնք բացակայում են հայերենում: Ելնելով այս հանգամանքից, ինչպես նաև հայերեն լեզվով մասնագիտական գրականության պակասով, հեղինակները կարծում են, որ ռուսերեն-անգլերեն-հայերեն եռալեզու բացատրական բառարանի հրատարակումը խիստ արդիական է: Հեղինակները սույն աշխատանքը ձեռնարկել են նշված բացը լրացնելու նպատակով: Գիտակցելով խնդրի կարևորությունը, վերջիններս ուշադրությամբ են վերաբերվել ինչպես հայալեզու նոր տերմիններ առաջարկելուն, այնպես էլ հրաժարվելուն այն օտարալեզու տերմիններից, որոնք մասնագիտական լեզվում հիմնավորվել են շատ վաղուց: Նման հարցերի լավագույն լուծում գտնելու նպատակով աշխատանքը ներկայացվել է լայն քննարկման ՀՀ ԳԱԱ ԵԳԻ-ում, ԵՊՀ քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնում, ԵՃՊՀ գեոդեզիայի ամբիոնում, ՀՀ ՊԱԳ կադաստրի գեոդեզիայի և քարտեզագրության ինստիտուտում, ՀՀ լեզվի պետականությունում: Հեղինակները շնորհակալություն են հայտնում բոլոր նշված հաստատությունների մասնագետներին և հատկապես Ա.Նազարյանին, տ.գ.թ. Գ.Մանուկյանին արժեքավոր խորհուրդների և դիտողությունների համար:

Բառարանը կազմվելու աշխատանքին մեծապես օժանդակել են ե.գ.թ. Ա.Սաթիբեկյանը, տ.գ.թ. Ա.Առաքելյանը, որոնց էական դիտողությունները և խորհուրդները հաշվի են առնվել բառարանի վերջնական տարբերակում: ՀՀ ԳԱԱ ԵԳԻ գեոինֆորմատիկայի բաժնի աշխատակիցներ Հ.Ուլոյանը, Լ.Սարգսյանը, Ա.Ներսիսյանը, Ն.Տարայանը մեծապես օժանդակել են բառարանը հրատարակման պատրաստելու աշխատանքներին:

Հեղինակները խորին երախտագիտությունն են հայտնում նշված անձանց, ինչպես նաև ե.գ.թ., դոցենտ Ն.Մանուկյանին՝ բազմաթիվ տերմինների բացատրություններ կազմելու և հայերեն լեզվով թարգմանելու աշխատանքի համար:

Հեղինակները շնորհակալ կլինեն բոլոր այն անձանց, որոնք տերմինների իրենց դիտողություններով և առաջարկություններով կնպաստեն դրանց բացատրությունների բարելավմանը:

ԲԱՌԱՐԱՆՈՒՄ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՈՐՈՆՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Բառարանում տերմինները դասավորված են ռուսերեն այբբենական կարգով: Յուրաքանչյուր տերմին ունի տառից և թվից կազմված ինդեքս: Ռուսերեն տերմինի առաջին տառի խմբում համարակալումը սկսվում է մեկ թվից: Այսպիսի ինդեքսավորումը թույլ է տալիս հայերեն և անգլերեն տերմինների բացատրության որոնման համար օգտագործել համապատասխան լեզվով կազմված «Ուղեցույց ցանկ»-երը: Ցանկերում տերմինները դասավորված են համապատասխան լեզվի այբբենական կարգով, և յուրաքանչյուր տերմին կից ունի հղում՝ բառարանի համապատասխան տերմինին: Օրինակ՝ **A-2. Абрис** տերմինին հայերեն ցանկում համապատասխանում է **Ուրվագիծ, A-2**, իսկ անգլերենում՝ **Sketch, A-2**: Եթե հայերեն կամ անգլերեն բացատրությունների ռուսերեն տերմինը ունենում է մեկից ավելի տարբերակներ, ապա դրանք միմյանցից բաժանվում են թեք գծիկով (/):

A

A-1. Аберрация - Aberration [*լատ. aberratio - գեղում, հեռացում, խտտորում*] - Աբերացիա (աստղագիտական աղավաղում) - 1. Պատկերի աղավաղում, որն առաջանում է օպտիկական համակարգերում, երբ կիրառվում է ճառագայթների՝ լայն կամ օպտիկական առանցքի նկատմամբ թեք փունջ: 2. Երկնային լուսատուների ուղղությունների չափման արդյունքների աղավաղում, որի պատճառներն են՝ Երկրագնդի տարեկան պտույտն Արեգակի շուրջը (տարեկան աղավաղում) և օրական պտույտն իր առանցքի շուրջը (օրական աղավաղում):

A-2. Абрис - Sketch (outline) [*գեր. abriß - գծագիր, պլան*] - Ուրվանկար - Տեղանքի աչքաչափական գծագիր, որը պատկերում է տեղագրական հանույթի ենթակա օբյեկտները: Օգտագործվում է քարտեզների և պրոֆիլների կազմման համար:

A-3. Абсолютная высота - Altitude - Բացարձակ բարձրություն - Տե՛ս *Высота абсолютная*:

A-4. Абстрактные геометрические знаки - Abstract geometric(al) marks - Աբստրակտ երկրաչափական նշաններ - Շրջանագիծ, քառանկյուն, բուրգ և այլն, որոնցով քարտեզի վրա նշանակվում են տարբեր բնույթի օբյեկտներ: Նշանների չափերը համապատասխանում են օբյեկտի որևէ քանակական բնութագրիչի: Մանրագծիկներով կամ գույնով արտահայտվում են նրա որակական հատկանիշները:

A-5. Автоматизированная картография - Automated cartography / Computer Aided mapping - Ավտոմատացված քարտեզագրություն - Քարտեզագրության բաժին, որն ընդգրկում է ավտոմատացված քարտեզագրական համակարգերի, սարքերի և ծրագրային միջոցներով քարտեզներ, ատլասներ և այլ քարտեզագրական ստեղծագործություններ (գրաֆիկական, թվային և էլեկտրոնային ձևաչափերով) կազմելու և օգտագործելու տեսությունն ու մեթոդաբանությունը:

A-6. Автоматизированное дешифрирование снимков - Automated interpretation of photographs - Նկարների ավտոմատացված վերծանում - Նկարների վրա պատկերված օբյեկտների

խմբավորում (դասակարգում) ըստ նրանց որևէ ֆորմալ հատկանիշի (պայծառության կամ կառուցվածքի): Դասակարգումը իրականացվում է մաթեմատիկական եղանակներով՝ առանց ուսուցման (unsupervised classification) և ուսուցումով (supervised classification): Առաջին եղանակը հիմնված է դասակարգման հատկանիշի նվազագույն տարբերության սկզբունքի վրա, երկրորդն օգտագործում է նախապես որոշված էտալոնային մեծություններ:

A-7. Автоматизированное картографирование - Automated mapping / Computer aided mapping - Ավտոմատացված քարտեզագրություն - Տեխնիկական և սարքածրագրային միջոցների, համակարգչային տեխնոլոգիաների և մաթեմատիկական մոդելավորման կիրառում՝ քարտեզների և այլ քարտեզագրական ստեղծագործությունների կազմման, ձևավորման, խմբագրման և օգտագործման նպատակով:

A-8. Автоматическая векторизация растрового изображения - Automatic vectorization of raster image - Ռատրային պատկերի ավտոմատացված թվայնացում - Պատկերների թվայնացում՝ հատուկ ծրագրային միջոցներով (vectorizer), որոնք ներառված են ԱՏՀ և գրաֆիկական ծրագրերում:

A-9. Автоматическая или алгоритмическая генерализация - Automatic or algorithmic generalization - Ավտոմատացված կամ ալգորիթմական ընդհանրացում - Քարտեզի վրա պատկերված օբյեկտների գլխավոր հատկանիշների որոշում՝ տրված ալգորիթմներով և ֆորմալ չափանիշներին համապատասխան:

A-10. Автоматическая картографическая система (АКС) - Automatic cartographic system (ACS) - Ավտոմատացված քարտեզագրական համակարգ (ԱՔՀ) - Սարքավորումների և ծրագրային միջոցների ամբողջություն, որն ապահովում է քարտեզների կազմումը և օգտագործումը: ԱՔՀ-ն բաղկացած է մի քանի ենթահամակարգերից, որոնցից կարևորագույններն են տվյալների ներմուծման, մշակման և քարտեզների տեսանելիացման ենթահամակարգերը:

A-11. Автор карты - Map author - Քարտեզի հեղինակ - Քարտեզի հեղինակ է համարվում այն քարտեզագիրը կամ մաս-

նագետը, ով մշակում է քարտեզի բովանդակությունը: Բարդ քարտեզների, բազմաթերթ քարտեզների և ատլասների կազմմանը սովորաբար մասնակցում է հեղինակների խումբ:

A-12. Авторский эскиз - Work sheet - Հեղինակային էսքիզ - Ուրվանկար, որն արտահայտում է քարտեզի և բացատրագրի պայմանական նշանների ընդհանուր մտահղացումը, բովանդակությունը և օգտագործվում է հետագա աշխատանքների համար:

A-13. Авторский макет - Compilation plot - Հեղինակային մակետ - Քարտեզի գրաֆիկական նախագիծ՝ կազմված ոչ անհրաժեշտ ճշտությամբ և ձևավորմամբ: Այն սովորաբար կազմվում է խոշոր մասշտաբով:

A-14. Авторский оригинал - Compilation sketch / Draft / Outline - Հեղինակային բնօրինակ - Ճշգրիտ ձեռագիր քարտեզ, որը կազմված է հրատարակման համար նախատեսված մասշտաբով, գրաֆիկական որակով, ամբողջությամբ և ճշգրիտ:

A-15. Азимут астрономический - Astronomic(al) azimuth - Աստղաբաշխական ազիմուտ - Տե՛ս *Астрономический азимут*:

A-16. Азимут географический - Geographic(al) azimuth - Աշխարհագրական ազիմուտ - Տե՛ս *Географический азимут*:

A-17. Азимут геодезический - Geodetic azimuth / Surveying azimuth - Գեոդեզիական ազիմուտ - Տե՛ս *Геодезический азимут*:

A-18. Азимут магнитный - Magnetic azimuth / Compass direction / Compass bearing - Մագնիսական ազիմուտ - Տե՛ս *Магнитный азимут*:

A-19. Азимут - Azimuth [*արաբ. as-samut - ճանապարհ*] - Ազիմուտ - Անկյուն, որը կազմվում է գծի հորիզոնական պրոյեկցիայով և աշխարհագրական միջօրեականով՝ հաշված աշխարհագրական միջօրեականի հյուսիսային ծայրից՝ ժամացույցի սլաքի պտտման ուղղությամբ:

A-20. Азимут обратный - Reverse azimuth - Հակադարձ ազիմուտ - Կատարված գեոդեզիական չափումների հակադարձ ուղղության ազիմուտ: Այն որոշելու համար ուղիղ ազիմուտին գումարվում է 180° (եթե ուղիղ ազիմուտը փոքր է 180° -ից) կամ հանվում է 180° (եթե ուղիղ ազիմուտը մեծ է 180° -ից):

A-21. Азимутальные проекции - Azimuthal projections. - Ազիմուտային պրոյեկցիաներ - Դրանք երկրագնդի մակերևույթի պրոյեկցիաներն են՝ երկրագունդը հասող կամ շոշափող հարթության վրա: Տարբերում են նորմալ ազիմուտային պրոյեկցիաներ, երբ պրոյեկցիայի հարթությունը ուղղահայաց է երկրագնդի պտտման առանցքին, լայնակի ազիմուտային պրոյեկցիաներ, երբ պրոյեկցիայի հարթությունը ուղղահայաց է հասարակածի հարթությանը, և շեղ ազիմուտային պրոյեկցիաներ, երբ պրոյեկցիայի հարթությունը հասարակածի հարթության նկատմամբ կազմում է որոշակի անկյուն:

A-22. Активная аэрокосмическая съёмка - Active aerocosmic survey - Օդատիեզերական ակտիվ հանույթ - Երկրի մակերևույթից անդրադարձվող արհեստական ճառագայթման գրանցման միջոցով իրականացվող հանույթ:

A-23. Актуализация - Updating / Actualization - Արդիականացում - Տվյալների բովանդակության փոփոխություն՝ արդի վիճակին համապատասխանեցնելու նպատակով:

A-24. Алгебра карт - Map-algebra - Քարտեզի հանրահաշիվ - Քարտեզագրական և մաթեմատիկական մոդելների համադրում, որն օգտագործվում է բարդ տարածական և ժամանակային տեղեկատվության վերլուծության և սինթեզի նպատակով: Քարտեզագրական հանրահաշիվի առավել տարածված ալգորիթմները ներառված են US2-երում, օրինակ՝ ArcGIS Spatial Analyst մոդուլում:

A-25. Алгоритм - Algorithm - Ալգորիթմ - Վերջավոր թվով հրահանգների և կանոնների ամբողջության ճշգրիտ նկարագրություններ, որոնք որոշում են գործողությունների կատարման կարգը: Վերջնական արդյունքին հասնելու համար ծրագրավորման լեզվով իրականացված ալգորիթմը կոչվում է ծրագիր:

A-26. Алидада - Alidade [արաբ. *al-ahada* - կողմ, քանոն] - Ալիդադ - Անկյունաչափական կամ աստղաբաշխական սարքավորումների հորիզոնական կամ ուղղաձիգ շրջանի մաս, որը լիմբի (բաժնօղակի) հետ միասին միևնույն առանցքի վրա է, օգ-

տագործվում է հորիզոնական և ուղղաձիգ անկյունների չափման համար:

A-27. Анаглифическая карта - Anaglyphic(al) map [*հուն. anaglyphos - ռելիեֆային*] - Անագլիֆային քարտեզ - Քարտեզներ, որոնք տպագրվում են միմյանց փոխադարձաբար լրացնող՝ ստերեոզույգ (տարածային զույգ) առաջացնող գույներով (օրինակ՝ կապույտ-կանաչ և կարմիր, «հատուկ կարմիր» կամ կապտա-կանաչ): Ծավալադիտական ակնոցներով քարտեզը դիտողի աչքերը տեսնում են տարբեր պատկերներ, և արդյունքում դրանք ընկալվում են որպես միասնական սև-սպիտակ ծավալային պատկեր:

A-28. Анализ близости - Proximity analysis - Մերձակայության վերլուծություն - 1. Տարածական տարբեր մեթոդների խումբ, որոնցով տրված բազմությունից ընտրվում են երկու՝ միմյանց ամենամոտ կետերը: 2. Ռաստրային տիպի ԱՏՀ-ներում ռաստրի տարրին նոր արժեքի վերագրում՝ որպես հարակից տարրերի որոշակի ֆունկցիայի մեծություն:

A-29. Анализ видимости/невидимости - Visibility / Unvisibility analysis - Տեսանելիության / Անտեսանելիության վերլուծություն - Ռելիեֆի թվային մոդելների վերլուծական գործողություն, որով տրված մեկ կամ մի քանի տեղադիրներից գնահատվում է մակերևույթի առանձին հատվածների տեսանելիությունը կամ անտեսանելիությունը:

A-30. Анализ и оценка карт - Map analysis and evaluation - Քարտեզների վերլուծություն և գնահատում - Քարտեզի հատկությունների, որակի ուսումնասիրություն և որոշակի խնդիրների լուծման համար նրա պիտանելիության գնահատում:

A-31. Анализ сетей (сетевой анализ) - Network analysis - Ցանցերի կամ ցանցային վերլուծություն - Ծառանման կամ ցիկլային ցանցեր կազմող գծային օբյեկտների (գծերի) տոպոլոգիական և երկրաչափական հատկությունների տարածական վերլուծություն: Այս եղանակները օգտագործվում են գետային ցանցի, ջրբաժանների, հաղորդակցման ցանցերի կառուցվածքի ուսումնասիրության նպատակով:

A-32. Аналитическая карта - Analytic(al) map - -
Վերլուծական քարտեզ - Քարտեզ, որն արտահայտում է
երևույթի մեկ որակական (գյուղատնտեսական կուլտուրաների
տեղաբաշխումը, բնակչության ազգային կազմը և այլն) կամ
քանակական (արևափայլի տևողությունը, տեղումների քանակը,
բնակչության խտությունը և այլն) բնութագիրը:

A-33. Аналитический стереофотограмметрический прибор -
Analytic(al) stereophotogrammetric instrument - Ծավալային
լուսանկարաչափական վերլուծական սարք - Սարքավորում,
որում համակարգչի օգնությամբ, վերլուծական (անալիտիկ) մե-
թոդով, ստեղծվում է հանույթի առարկայի ծավալադիտական
մոդելը:

A-34. Аналоговый стереофотограмметрический прибор -
Analog (analogous) stereophotogrammetric instrument - Ծավալային
լուսանկարաչափական անալոգային սարք - Սարքավորում,
որում օբյեկտի հանույթի ծավալային լուսանկարաչափական մո-
դելը կազմվում է օպտիկական, օպտիկամեխանիկական և մե-
խանիկական սարքավորումների միջոցով:

A-35. Анаморфическая карта - Anamorphosic map [հին հուն.
αναμόρφωσις, anamorphosis, հուն. αναμόρφωση, μορφή - պատ-
կեր, ձև] - Անամորֆիկ քարտեզ - Տոպոլոգիապես փոխակերպ-
ված քարտեզ, որի պրոյեկցիայի հավասարման մեջ աշխարհա-
գրական կոորդինատներից բացի, որպես փոփոխական, մտնում
է նաև քարտեզագրվող ցուցանիշը (օրինակ՝ էկվիդեմիկ անամոր-
ֆիկ քարտեզի վրա՝ բնակչության խտությունը, կամ անամորֆիկ
էկվիդիստանտ քարտեզի վրա՝ հեռավորությունը կենտրոնից և
այլն):

A-36. Анероид - Aneroid [հին հուն. *α - ոչ և νηρόν - ջրի*] -
Աներոյդ - Ճնշումաչափի (բարոմետրի) տեսակ, որը մթնոլոր-
տային ճնշման փոփոխությունները որոշում է բարձր վակուու-
մով մետաղյա տուփի ձևախախտմամբ:

A-37. Анимация картографическая - Cartographic animation -
Քարտեզագրական անիմացիա - Տե՛ս *Картографическая анима-
ция*:

A-38. Аннотация - Annotation [*լատ. annotation - նշում*] - Անոտացիա - Տեքստային, թվային, սիմվոլային, գրաֆիկական կամ այլ տարրերի նշումային ամբողջություն, որը դրվում է քարտեզագրական պատկերի դաշտում կամ նրանից դուրս: Ծառայում է որպես քարտեզի կամ ԱՏՀ-ի որևէ գրաֆիկի օժանդակ կամ լրացուցիչ բաղադրիչ:

A-39. Апогей - Apogee [*հուն. apogaiōn apo - հեռու և gea - երկիր*] - Երկրահեռակետ (ապոգեյ) - Լուսնի (կամ Երկրի արհեստական արբանյակի) ուղեծրի առավել հեռավոր կետը Երկրից:

A-40. Аппаратное обеспечение (Аппаратные средства, аппаратура технические средства) - Hardware support (Hardware environment, equipment, hardware) - Ապարատային ապահովում (Ապարատային միջոցներ, սարքավորումներ, տեխնիկական միջոցներ) - Տեղեկատվության մշակման տեխնիկական համակարգ, որը ներառում է համակարգիչ, մեխանիկական, մագնիսական, էլեկտրական, էլեկտրոնային կամ օպտիկական արտաքին սարքեր, որոնք աշխատում են ինքնուրույն կամ ղեկավարվում են համակարգչով, ինչպես նաև այլ սարքեր, որոնք անհրաժեշտ են համակարգերի աշխատանքի համար:

A-41. Аппаратно-программное обеспечение - Hardware software support - Սարքածրագրային ապահովում - Տեղեկատվության մշակման համակարգերի ապարատային և ծրագրային ապահովման ամբողջություն:

A-42. Аппроксимация - Approximation [*լատ. approximate - մոտեցում*] - Մոտարկում - Մաթեմատիկայում մոտարկում է համարվում բարդ կամ անհայտ ֆունկցիայի փոխարինումն ավելի պարզ ֆունկցիայով, որի հատկությունները հայտնի են:

A-43. Ареал - Area / range / areal) [*լատ. area - տարածք, տարածաշրջան, ոլորտ*] - Արեալ - Երևույթի համատարած կամ կենտրոնացված տարածք, որն առանձնացված է քարտեզում: Արեալները լինում են բացարձակ և հարաբերական: Բացարձակ է այն արեալը, որի սահմաններից դուրս տվյալ երևույթն ընդհանրապես չի հանդիպում, իսկ հարաբերական արեալներն ար-

տահայտում են տվյալ երևույթի ամենամեծ կենտրոնացվածությունը:

A-44. Астролябия - Astrolabe [*հուն. στρολάβον, astrolabon - աստղեր վերցնելու*] - Աստրոլյաբիա - Անկյունաչափական գործիք, որն օգտագործվում է աստղագիտության մեջ աշխարհագրական լայնության և երկայնության, ինչպես նաև հորիզոնական անկյունների չափման համար:

A-45. Астрономический азимут - Astronomic(al) azimuth - Աստղաբաշխական ազիմուտ - Տե՛ս *Азимут астрономический*:

A-46. Астрономия геодезическая - Geodetic astronomy / Astrogeodesy / Field astronomy [*հին հուն. αστρονομία, որը կազմվել է հունարեն բառից՝ αστήρ, αστρον (աստերոնիդ, աստրոն) - սթար, աստղ և νόμος (nomos) - սովորություն, օրենք*] - **Գեոդեզիական աստղաբաշխություն** - Աստղաբաշխության բաժին, որը երկնային լուսատուների դիտարկումներով ուսումնասիրում և մշակում է Երկրի մակերևույթի կետերի աշխարհագրական կոորդինատների և ուղղությունների ազիմուտների որոշման եղանակները:

A-47. Астрономия сферическая - Spherical astronomy - **Մֆերիկ աստղաբաշխություն** - Աստղաբաշխության բաժին, որը մշակում է մաթեմատիկական մեթոդներ երկնային լուսատուների (աստղեր, Արեգակ, Լուսին, մոլորակներ, արհեստական երկնային մարմիններ) երկնային սֆերայի վրա երևացող դիրքի և շարժման խնդիրները լուծելու նպատակով: Մֆերիկ աստղաբաշխությունը ծագել է հին դարերում և հանդիսանում է աստղաբաշխական երևույթների ուսումնասիրման առաջին քայլը:

A-48. Астрономо-геодезическая сеть - Astro-geodetic(al) net - Աստղաբաշխական գեոդեզիական ցանց - Գեոդեզիական ցանց, որի կետերի աստղաբաշխական կոորդինատները և ազիմուտները որոշված են:

A-49. Астрономо - геодезический пункт - Astro-geodetic(al) station - Աստղաբաշխական գեոդեզիական կետ - Երկրի մակերևույթին ամրացված կետ, որի կոորդինատները որոշվել են գեո-

դեգիական չափումների և աստղագիտական հետազոտությունների միջոցով:

A-50. Астрономо-гравиметрическое нивелирование - Astrogravimetric leveling - Աստղաբաշխական ծանրաչափական (գրավիմետրական) նիվելիրացում - Ելակետի նկատմամբ Երկրի մակերևույթի կետերի բարձրությունների որոշում՝ կետերի աստղաբաշխական և գեոդեզիական կոորդինատների համեմատության մեթոդի օգտագործմամբ:

A-51. Атлас - Atlas - Ատլաս - Քարտեզների համակարգված հավաքածու, որը կազմված է միասնական ծրագրով՝ որպես ամբողջական ստեղծագործություն:

A-52. Атмосферная или воздушная дымка - Atmospheric fog / Optical haze / Haze - Մթնոլորտային կամ օդային մշուշ - Լույսի ցրումը օդում՝ նրա անհամասեռության պատճառով, որը պայմանավորված է օդում ջրի, փոշու և այլ մասնիկների պարունակությամբ, կամ՝ երբ լուսանկարող ապարատի հեռավորությունն օբյեկտից բավական մեծ է (օրինակ՝ օդանկարահանման ժամանակ), երբ օդային մշուշը նվազեցնում է նկարի կոնտրաստը և նրա վրա ստեղծում է «շղարշ»:

A-53. Атрибут - Attribute [լատ. *attribution* - վերագրում, նշան] - Ատրիբուտ - Տարածական օբյեկտը նկարագրող հատկություն, որակական կամ քանակական հատկանիշ, որն ուրույն համարով՝ նույնացուցիչով (*identifier*) ասոցացվում է օբյեկտի հետ:

A-54. Афелий - Aphelion [հին հուն. *από* - հեռու և *ηλιος* - «Հելիոս» - Արեգակ] - Արևահեռ կետ - Արեգակի շուրջը պտտվող երկնային մարմնի ուղեծրի՝ Արեգակից առավել հեռավոր կետը: Արեգակահեռ կետ ունեն բոլոր մարմինները (մոլորակներ, աստղակերպներ (աստերոիդներ), որոշ երկնաքարեր (մետեորիտներ), ինչպես նաև տիեզերական զոնդեր, որոնք պտտվում են Արեգակի շուրջը՝ ոչ շրջանային ուղեծրով: Այդպիսի մարմինների՝ Արեգակին առավել մոտ կետը կոչվում է արեգակամերձ կետ:

A-55. Ахроматическое поглощение - Achromatic absorption - Աքրոմատիկ կլանում (գույներ կլանող, ընդհանրապես՝ կլանում) - Լույսի ոչ ընտրողական կլանում. օրինակ՝ չգունավորված (սպիտակ, սև, մոխրագույն) էկրանները նույն կերպ են կլանում կամ անդրադարձնում լույսի սպեկտրի բոլոր գույները:

A-56. Аэрокосмическая генерализация снимков - Aerocosmic generalization of photographs / Pictures - Նկարների օդատիեզերական ընդհանրացում - Օդատիեզերական նկարների ընդհանրացում, որն ընդգրկում է պատկերի երկրաչափական, լուսային և տոնային ամփոփումը: Դրա արդյունքում Երկրի մակերևույթի պատկերը ազատվում է որոշ մանրամասներից, և, միևնույն ժամանակ, առանձին մանր առարկաները համախմբվում են որպես ամոռջություն: Այդպիսով ավելի ցայտուն են երևում բարձր դասերի օրինաչափությունները և առարկաները, ինչպիսիք են տարածաշրջանային և գլոբալ կառուցվածքները:

A-57. Аэрокосмический мониторинг - Aerocosmic monitoring - Օդատիեզերական մշտադիտարկում (մոնիտորինգ) - Շրջակա միջավայրի և նրա առանձին բաղադրիչների վիճակի օպերատիվ վերահսկողություն հեռազննման նյութերի և քարտեզների կիրառմամբ:

A-58. Аэрокосмический снимок - Aerocosmic / Aerospace photograph / Picture - Օդատիեզերական նկար - Երկչափ պատկեր, որը ստացվում է հատուկ սարքավորումներով՝ բարձրությունից (օդանավից կամ տիեզերքից) կապարվող հանույթի արդյունքում:

A-59. Аэрокосмическое зондирование - Remote sensing - Օդատիեզերական հեռազննում - Գիտական ուղղություն, որն ուսումնասիրում է աշխարհագրական օբյեկտների տարածաժամանակային հատկությունները և հարաբերությունները, որոնք հայտնաբերվում են պասիվ կամ ակտիվ հանույթի միջոցով: Առաջին դեպքում ֆիքսվում է Երկրի մակերևույթի սեփական կամ անդրադարձված արեգակնային ճառագայթումը, իսկ երկրորդ դեպքում՝ անդրադարձված արհեստական էլեկտրամագնիսական ճառագայթումը:

A-60. Аэроснимок перспективный - Perspective aerial photograph - Հեռանկարային օդալուսանկար - Այն ստացվում է, երբ լուսանկարչական խցիկի օպտիկական առանցքը մեծ չափով թեքված է նկարահանվող մակերևույթի նկատմամբ: Այդպիսի նկարները պատկերավոր կերպով են ներկայացնում տեղանքի առարկաները և ռելիեֆը:

A-61. Аэроснимок плановый - Planimetric aerial photograph - Հարթ կամ հատակագծային օդալուսանկար - Այն ստացվում է, երբ լուսանկարչական խցիկի օպտիկական առանցքն ուղղաձիգից շեղված է ոչ ավել, քան 30°-ով: Այդպիսի լուսանկարներն առավել ճշտությամբ են պատկերում տեղանքը:

A-62. Аэроснимок трансформированный - Transformed aerial photograph - Տրանսֆորմացված (Կերպափոխված) օդալուսանկար - Ճշգրիտ լուսանկարչական փաստաթուղթ, որը ստացվում է, երբ լուսանկարչական տրանսֆորմատորի միջոցով օդանկարները բերվում են մեկ մասշտաբի և վերածվում են քարտեզի ճշտության պլանային նկարների:

A-63. Аэросъемка - Aerial mapping / Aerial photography - Օդային (աէրո) հանույթ / Օդալուսանկարահանում (աէրոլուսանկարահանում) - Տեղանքի լուսանկարահանում, որը հիմնականում կատարվում է ինքնաթիռներից՝ 500 մ-ից մինչև 10.000 մ բարձրությունից, բայց ոչ ավել, քան 30.000 մ-ը: Տարբերում են օդահանույթի պլանային և հեռանկարային տեսակներ:

A-64. Аэрофотограмметрия - Aerial photogrammetry - Օդալուսանկարաչափություն - Լուսանկարաչափության (ֆոտոգրամետրիայի) բաժին, որը տեղանքի լուսանկարաչափական պատկերների միջոցով ուսումնասիրում է տարբեր օբյեկտների չափերը, ձևը և տեղադիրքը:

A-65. Аэрофоторазведка - Aerial photoprospecting - Օդալուսանկարչական հետախուզություն - Տեղանքի լուսանկարահանում օդից՝ ռազմական նպատակներով:

A-66. Аэрофотоснимок - Aerial photograph - Օդալուսանկար (աէրոլուսանկար) - Որոշակի բարձրություններից, թռչող սարքի

վրա տեղադրված ֆոտոխցիկի միջոցով ստացվող տեղանքի լուսանկար:

A-67. Аэрофотосъемка - Aerial photography - Օդալուսանկարչական հանույթ - Տե՛ս *Аэросъемка*:

A-68. Аэрофототопография - Aerial phototopography - Օդալուսանկարչական տեղագրություն - Տեղագրության բաժին, որն օդահանույթի նյութերի հիման վրա ուսումնասիրում է տեղագրական քարտեզներ կազմելու մեթոդները:

Ե-1. База данных (БД) - Data base / Data-base / DB -Տվյալների հենք - Որոշակի կանոններով կազմավորված տվյալների ամբողջություն, որոնք սահմանում են տվյալների նկարագրման, պահպանման և փոփոխության ընդհանուր սկզբունքները:

Ե-2. База знаний - Knowledge base - Գիտելիքների հենք - Որոշակի առարկայական տիրույթի վերաբերյալ գիտելիքների ամբողջություն, որը ներկայացնում է համակարգված փաստեր, կանոններ և մասնագիտական փորձ: Այն հնարավորություն է տալիս տվյալ ասպարեզի հարցերի վերաբերյալ կատարել դատողություններ և տալ որոշակի պատասխաններ: Հանդիսանում է «փորձագիտական համակարգերի» հիմնական բաղադրիչը:

Ե-3. Базис геодезический - Geodetic base [հին հուն. *βασισ* - *հիսթ*] - Գեոդեզիական բազիս (հիմնագիծ) - Տեղանքում ամրացված երկու կետերի միջև բարձր ճշտությամբ չափված հեռավորություն, որն օգտագործվում է գեոդեզիական ցանցի կողմերի երկարությունների որոշման, ինչպես նաև գործիքների ստուգման նպատակով:

Ե-4. Базис засечки - Mark base - Փոխհատման բազիս - Տեղանքում նշված, ճշգրիտ չափված և, ապա, քարտեզի վրա տեղադրված ուղիղ գծի հատված, որի օգտագործմամբ եռանկյունիների կամ հատույթների եղանակով կառուցվում է տեղագրական հիմքի ցանց:

Ե-5. Базис фотографирования при аэросъемке - Photography base by aerial survey - Օդային լուսանկարահանման բազիս - Տարածություն, որն անցնում է հանույթ կատարող թռչող սարքը երկու կից նկարահանման կետերի միջև: Հաշվարկվում է երկայնակի բազիս՝ թռչող սարքի թռիչքի ուղղությամբ և լայնակի բազիս՝ երկու կից երթուղիների համապատասխան կետերի միջև:

Ե-6. Банк данных (БД) - Data bank - Տվյալների բանկ - Տվյալների կենտրոնացված պահպանման և կոլեկտիվ օգտագործման տեղեկատվական համակարգ: Այն ընդգրկում է տվյալների հենքեր, դրանց կառավարման համակարգերը և կիրառական ծրագրեր:

Б-7. Барометр - Barometer [հին հուն. βάρος - ծանրություն» և μέτρον - չափում] - Ճնշաչափ (Բարոմետր) - Մթնոլորտային ճնշումը չափող սարք:

Б-8. Барометрическое нивелирование - Barometric leveling - Ճնշաչափային (բարոմետրական) նիվելիրացում - St'u Нивелирование барометрическое:

Б-9. Батиметрическая шкала - Bathymetrical scale [հուն. βαθύς (bathus) - խորություն և μέτρον (metron) - չափել] - Բաթիմետրական սանդղակ - Խորության սանդղակ՝ ջրային տարածությունների հատակի ռելիեֆի պատկերման համար օգտագործվող ավանդական միագույն՝ երկնագույն սանդղակ, որում, ըստ խորության, ավելանում է գույնի հագեցվածությունը և նվազում լուսավորվածությունը:

Б-10. Башмак - Shoe (socket) - Ծայրակալ - Սկավառակի տեսքով մետաղական տակդիր՝ նախատեսված նիվելիրային չափաձողի տեղադրման համար: Դրանց փոխարեն օգտագործվում են նաև հողի մեջ ամրացվող կեռաբևեռները:

Б-11. Бергстрих - Bergstrich [գեր. berg - լեռ] - Բերգշտրիխ - Հորիզոնականներին (իզոհիպսերին) ուղղահայաց գծիկ, որն ազատ վերջավորությամբ ցույց է տալիս լանջի թեքության ուղղությունը:

Б-12. Бланковая карта - Outline map - Բլանկային քարտեզ - Տեղագրական կամ հատուկ քարտեզ՝ տպագրված մեկ գույնով կամ թույլ գույներով, որն օգտագործվում է անհրաժեշտ լրացուցիչ տվյալների տեղադրման համար:

Б-13. Блик - Speck / Patch of light / Highlight - Փայլք, ցուլք - Լույսի ուղղված անդրադարձ, լույսի փայլք, լուսավոր բիծ առարկայի մակերեսին՝ լույսի անդրադարձի տեղում:

Б-14. Блок - диаграмма - Block - diagram - Բլոկ դիագրամ - Եռաչափ մարմնի ներկայացման եղանակ՝ քարտեզագրական հարթ պատկերներով, որոնք արտահայտում են մարմնի երկայնակի և լայնակի կտրվածքները:

Б-15. Болотова способ - Bolotov's method - Բոլոտովի եղանակ - Քարտեզի վրա երեք կետերի միջոցով չորրորդ կետի

դիրքի որոշման գրաֆիկական եղանակ (Պոտենտի խնդիր):

Б-16. Браузер - Browser [անգլ. browser - սյունակագիր, դիտման ծրագիր] - Բրաուզեր - Համացանցի կայքերը դիտելու պարզ, տեսանելիացնող համակարգ:

Б-17. Буквенные условные знаки - Symbols in letters / Conventional signs in letters - Տառային պայմանական նշաններ - Պայմանական նշաններ, որոնք արտահայտվում են հայերեն կամ լատիներեն տառերի տեսքով: Օրինակ՝ А1-ը նշանակում է այլումինիումի հանքավայր:

Б-18. Буссоль - Surveying compass [ֆր. boussole - կողմնացույց] - Կողմնացույց (բուսոլ) - Տեղանքում մագնիսական ազիմուտների կամ ումբերի չափման համար նախատեսված սարք, որը բաղկացած է անկյունային բաժանմունքներով շրջանաձև օղակից և մագնիսական սլաքից, որը պտտվում է իր առանցքի շուրջը:

Б-19. Буферная зона (Буфер) - Buffer zone [անգլ. buffer, buff-մեղմել, փափկեցում] - Բուֆերային գոտի (Բուֆեր) – Բազմանկյունային (պոլիգոնալ) թեմատիկ շերտ ԱՏՀ-ում: Այն սահմանափակվում է գծերով, որոնք հավասարաչափ են հեռացված տրված տարածական (կետային, գծային, պոլիգոնալ) օբյեկտներից: Բուֆերային գոտիները հաշվարկվում և կառուցվում են ԱՏՀ «Բուֆերացում» գործողությամբ:

Б-20. Буферный слой - Buffer layer / Stratum - Բուֆերային շերտ - ԱՏՀ-ի թեմատիկ շերտ, որը կազմված է ընտրված օբյեկտների բուֆերային գոտիներից, որոնցից յուրաքանչյուրը կառուցվել է տրված կանոններով:

B-1. Веб-сайт - Website - Վեբ-կայք - Որոշակի տեղ համացանցում, որը հասանելի է Վորլդ Վայդ Վեբ-ի (World Wide Web-ի) ցանկացած կետից, քանի որ ունի իր ուրույն հասցեն: Վեբ-կայքը բաղկացած է վեբ-էջերից, որոնց միավորում է ընդհանուր բովանդակությունը, ձևավորումը և տեղեկատվական նպատակը: Վեբ-էջը կատարում է համացանցի հիմնական տեղեկատվական գործառույթը: Վեբ-էջերի աշխատանքը համացանցում կատարվում է վեբ-մատուցչի (վեբ-սերվերի) կողմից:

B-2. Веб-страница - Web page - Վայք-էջ - Վեբ-կայքի հիմնական բովանդակային բաղադրիչ. որպես կանոն, ցանկացած վեբ-կայք բաղկացած է մի քանի կայք-էջից, որոնք ներառում են տեքստեր, գրաֆիկական պատկերներ, իրականացվող հրամաններ՝ գրված վեբ-բրաուզերին հասկանալի լեզվով:

B-3. Вектор - Vector [*լատ. vector - կրող, տանող*] - **Վեկտոր** - 1. Մեծություն, որը բնութագրվում է թվային մեծությամբ և ուղղությամբ: 2. Ուղիղ գծի հատված, որն ունի ուղղություն, ելնում է սկզբնակետից և ավարտվում է վերջնակետում: 3. Ուղղված հատված, հասկացություն, որն օգտագործվում է վեկտորական մեթենայական գրաֆիկայի միջոցով՝ տարածական տվյալների վեկտորական ներկայացման համար:

B-4. Векторизатор - Vectorizer - Վեկտորիզատոր - Տարածական տվյալների ռաստրային-վեկտորական փոխակերպման ծրագրային միջոց:

B-5. Векторизация - Vectorization - Վեկտորացում - Համակարգչային գրաֆիկայում ռաստրային պատկերի փոխակերպումը վեկտորականի: Տե՛ս *Векторно-растровое преобразование*:

B-6. Векторное представление (Векторная модель данных) - Vector representation - Վեկտորական տեսքով ներկայացում (Տվյալների վեկտորական մոդել) - Տարածական, կետային, գծային և մակերեսային (պոլիգոնային) օբյեկտների թվային ներկայացում՝ կոորդինատային զույգերի բազմությամբ, որը կարող է ներկայացնել ինչպես օբյեկտների երկրաչափությունը, այնպես էլ երկրաչափության և տոպոլոգիայի համադրումը:

В-7. Векторно-растровое преобразование - Vectorial-rasteral transformation - Վեկտորատաստրային ձևափոխություն - Վեկտորական տեսքով ներկայացված տարածական օբյեկտների փոխակերպումը ռաստրային տեսքի: Փոխակերպման արդյունքում ռաստրի տարրերին վերագրվում են մեծություններ (օրինակ՝ 0 կամ 1), որոնք ցույց են տալիս, թե ռաստրի տարրը ներկայացվող օբյեկտի մաս ընդգրկում է (1), թե ոչ (0):

В-8. Векторно-топологическое представление (Линейно-узловое представление) - Vectorial-topological presentation (Linear-main presentation) - Վեկտորատոպոլոգիական ներկայացում (Գծահանգուցային ցուցադրում) - Գծային և բազմանկյունային տարածական օբյեկտների վեկտորական ցուցադրման տարատեսակ, որը բնութագրում է ոչ միայն օբյեկտների երկրաչափությունը, այլև բազմանկյունների, աղեղների և հանգույցների տոպոլոգիական հարաբերությունները:

В-9. Величина геодезическая - Geodetic value - Գեոդեզիական մեծություն - Գեոդեզիական չափումների առարկա հանդիսացող ֆիզիկական մեծություն: Այդպիսի մեծություններ են՝ հորիզոնական անկյունը, ուղղաձիգ (թեքության) անկյունը, զենիթային տարածությունը, գեոդեզիական հենակետերի կոորդինատներն ու բարձրությունները և այլն:

В-10. Величина масштаба - Scale size - Մասշտաբի մեծություն - Տեղանքում տարածություն՝ արտահայտված մետրերով կամ կիլոմետրերով, որը համապատասխանում է քարտեզի 1 սանտիմետրին:

В-11. Величина пространственного разрешения - Spatial resolution - Տարածական լուծաչափ - Նկարում արտաբերված ամենափոքր մասնիկի իրական չափերը տեղանքում:

В-12. Верньер - Vernier (nonius) - Վերնիեր - Օժանդակ հաշվարկային սանդղակ, ճշտասանդղակ, որի օգնությամբ հաշվում են թեոդոլիտի լիմբի (եզրակողի) մեկ բաժանման մասերը:

В-13. Вертикал - Vertical - Ուղղաձիգ շրջան - Երկնոլորտի (բարձրության) շրջան, որն անցնում է զենիթով և երկնոլորտի սվյալ կետով:

B-14. Вертикальная съёмка - Vertical survey - Ուղղաձիգ հանույթ - Տե՛ս *Съёмка вертикальная*:

B-15. Вертикальный угол - Vertical angle - Ուղղաձիգ անկյուն - Հարթ անկյուն, որը գտնվում է ուղղաձիգ հարթության մեջ և կազմված է հետագոսվող առարկայի ուղղությամբ և նրա հորիզոնական պրոյեկցիայով կամ՝ զենիթի ուղղությամբ: Առաջին անկյունը ցույց է տալիս թեքություն, երկրորդը՝ զենիթային հեռավորություն:

B-16. Вешение - Ranging - Չողանշում - Գծի նշում տեղանքում՝ ուղղաձիգ նշաձողերի տեղադրման միջոցով:

B-17. Взаимное превышение точек - Mutual exceeding of points - Կետերի փոխադարձ վերազանցում - Տրված երկու կետերի բացարձակ բարձրությունների տարբերությունը:

B-18. Видимая область спектра - Visible spectrum area - Սպեկտրի տեսանելի տիրույթ - Սպեկտրի 0,4-ից մինչև 0,8 մկմ ալիքի երկարությամբ տիրույթ, որն ընկալում է մարդու տեսողությունը:

B-19. Видимое излучение - Visible radiation - Տեսանելի ճառագայթում - 0,4-ից մինչև 0,8 մկմ երկարությամբ էլեկտրամագնիսական ալիքների տիրույթ:

B-20. Видимость (геодезическая) - Visibility - (geodetic) - Տեսանելիություն (գեոդեզիական) - Օդերևութաբանական պայմանների վիճակը, որը գեոդեզիական սարքավորման դիտախողովակից, դիտման ընթացքում, ազդում է օբյեկտների դիտարկման վրա:

B-21. Виды картографирования - Mapping types - Քարտեզագրման տեսակները - Քարտեզները տեսակավորվում են՝ ըստ քարտեզագրման օբյեկտի (տիեզերքի, մոլորակների, Երկրի, ցամաքի, օվկիանոսների), ըստ մեթոդի (երկրային, օդատիեզերական, ստորջրյա), ըստ մասշտաբի (փոքր, միջին, խոշոր), ըստ ընդհանրացման բնույթի (անալիտիկ, համալիր, սինթետիկ), ըստ օպերատիվության (բազային և օպերատիվ) և այլն:

B-22. Визир - Cursor / Hair line / Sight - Դիտոց (վիզիր) - Գեոդեզիական գործիքների վրա ամրացված սարք, որի միջոցով

դիտակը մոտավոր ուղղվում է դիտակետին:

B-23. Визирная линейка - Sight line - Դիտասևեռման քանոն - Քանոն, որն օգտագործվում է տեղանքում կատարվող դիտասևեռման աշխատանքների կամ քարտեզի և այլ գրաֆիկական նյութերի վրա ուղղություններ նշելու, տարածություններ չափելու նպատակով:

B-24. Визирная ось зрительной трубы - Sight axis of telescope - Սևեռային առանցք - Ուղիղ գիծ, որն անցնում է դիտակի օբյեկտիվի օպտիկական կենտրոնով և ակնապակու մոտ տեղադրված ցանցաթելերի խաչման կետով:

B-25. Визирование - Alignment / Aiming - Դիտասևեռում - Գեոդեզիական գործիքի դիտակի ցանցաթելերի և դիտակետի միատեղում:

B-26. Визирование круговое - Circular alignment - Շրջանաձև դիտասևեռում - Դիտարկվող կետերի բևեռային կոորդինատները որոշելու գործողություն, որն իրականացվում է դիտորդի կանգնած կետից, որի դիրքը քարտեզի վրա որոշված է:

B-27. Визирование обратное - Reverse alignment - Հակադարձ դիտասևեռում - Դիտասևեռման գործողություն, որն ուղղված է դիտարկվող առարկայից դեպի դիտորդը: Այս դեպքում նախ կողմնորոշում են քարտեզը, այնուհետև նրա վրա նշված կետում տեղադրվում է քանոնի սկզբնակետը, քանոնը ուղղվում է դեպի դիտորդն ու քարտեզի վրա նշվում է դիտորդի հեռավորությունը քարտեզի կետից:

B-28. Визирование прямое - Direct alignment - Ուղիղ դիտասևեռում - Դիտասևեռման գործողություն, որն ուղղված է դիտորդից դեպի քարտեզագրվող առարկան: Այս դեպքում նախ կողմնորոշում են քարտեզը, այնուհետև նրա վրա նշված դիտորդի կետին տեղադրվում է քանոնի սկզբնակետը, քանոնն ուղղվում է դեպի քարտեզագրվող կետը և այն նշվում է քարտեզի վրա:

B-29. Визуализатор (Вьювер) - Visualizer (Viewer) - Տեսանելիացման ծրագիր (Վյուվեր) - Տվյալները տեսանելի դարձնող (վիզուալացնող) ծրագրային միջոց, ԱՏՀ-ում ծրագրային

միջոցների տեսակ, որը հնարավորություն է տալիս մոնիտորի էկրանի վրա տեսանելի դարձնել քարտեզագրական պատկերները: Պարզ տեսակի վյուվերը անվանում են «բրաուզեր»:

В-30. Визуализация (Графическое воспроизведение, отображение) - Visualization (Graphic reproduction, reflection) - Տեսանելիացում (Գրաֆիկական պատկերում) - Քարտեզագրության ոլորտում, ԱՏՀ-ում և համակարգչային գրաֆիկայում թվային տվյալների հիման վրա որոշակի կանոններով և ալգորիթմներով պատկերների, այդ թվում երկրապատկերների և այլ գրաֆիկայի ստեղծում արտաբերման սարքերի միջոցով, հիմնականում՝ մոնիտորի:

В-31. Визуальный анализ карт - Visual analysis of maps - Քարտեզների տեսողական վերլուծություն - Քարտեզի ընթերցում, ուսումնասիրվող օբյեկտների դիտողական գնահատում և աչքաչափական համադրում:

В-32. Виртуальная реальность - Virtual reality - Վիրտուալ իրականություն - Արհեստական իրականություն, որն իր բոլոր կողմերով նման է իրականությանը և գրեթե չի տարբերվում նրանից: Ընդ որում՝ արհեստական իրականության և մարդու կողմից նրա ընկալման միջև ձևավորվում է երկկողմանի կապ: Իրականության դինամիկ մոդելը ստեղծվում է եռաչափ համակարգչային գրաֆիկայի միջոցով և իրական ժամանակի ռեժիմում ապահովում է օգտագործողի մասնակցությունը վիրտուալ օբյեկտների կառուցվող սցենարներում և իրադարձություններում:

В-33. Внемасштабные условные знаки - Out of scale conventional signs / Symbols - Արտամասշտաբային պայմանական նշաններ - Նշաններ, որոնք քարտեզի վրա պատկերում են տեղանքի փոքր չափեր ունեցող առարկաների ճշգրիտ դիրքը, սակայն համեմատական չեն նրանց չափերին:

В-34. Воздушное фотографирование - Aerial photography - Օդալուսանկարահանում - Տե և *Аэрофотосъемка*:

В-35. Восточное сближение меридианов - East rapprochement of meridians - Միջօրեականների արևելյան մոտեցում - Կոորդինատային ցանցի ուղղաձիգ գծի հյուսիսային ծայրի շե-

դումն իրական միջօրեականից դեպի արևելք, որը նշանակվում է գումարման «+» նշանով:

B-36. Восточное склонение - East declination - Արևելյան հակում - Հակում՝ գումարման «+» նշանով, երբ մագնիսական սլաքի հյուսիսային ծայրը շեղվում է իրական միջօրեականից դեպի արևելք:

B-37. Временное разрешение снимков - Time resolution of photographs - Նկարների ժամանակային լուծաչափ - Ժամանակային միջակայք՝ կրկնվող նկարահանումների միջև (այն կարող է լինել 15-30 րոպեից մինչև մի քանի տարի):

B-38. Выделенный сервер - Dedicated server - Առանձնացված սերվեր - Առանձնացված ֆիզիկական համակարգիչ, որն օգտագործվում է այնպիսի կիրառական ծրագրերի համար, որոնք համատեղելի չեն այլ ծրագրերի հետ կամ պահանջում են մեծ համակարգչային ռեսուրսներ:

B-39. Высота - Altitude / elevation - Բարձրություն - Երկրի մակերևույթի վրա գտնվող կետի կոորդինատներից մեկը՝ այդ կետի ուղղաձիգ հեռավորությունը մինչև պայմանական մակերևույթ, որն ընդունված է որպես բարձրությունների հաշվարկի սկիզբ:

B-40. Высота абсолютная - Altitude - Բացարձակ բարձրություն - Երկրի մակերևույթի որևէ կետի ուղղաձիգ ուղղությամբ հեռավորությունը՝ օվկիանոսի միջին մակարդակից՝ մետրերով: Գործնականում՝ տարբեր գեոդեզիական համակարգերում որպես հաշվարկի սկիզբ ընդունում են տարբեր մակարդակներ: Օրինակ՝ Բալթյան գեոդեզիական համակարգում որպես ելակետային մակերևույթ ընդունված է Բալթիկ ծովի բազմամյա միջին մակարդակը:

B-41. Высота геодезическая - Geodetic elevation - Գեոդեզիական (էլիպսոիդայ) բարձրություն - Երկրի մակերևույթին գտնվող կետի գեոդեզիական բարձրություն է կոչվում էլիպսոիդին ուղղահայաց գծի հատվածի երկարությունը նրա մակերևույթից մինչև այդ կետը: Ֆիզիկապես էլիպսոիդը գոյություն

չունի, այդ պատճառով գեոդեզիական բարձրությունը հնարավոր է որոշել արբանյակային չափումների միջոցով:

B-42. Высота относительная - Relative height - Հարաբերական բարձրություն - Տվյալ կետի հեռավորությունը ուղահայաց ուղղությամբ՝ կամայական մակարդակային մակերևույթից, որն ընդունված է որպես սկզբնական բարձրություն:

B-43. Высота светила - Height of luminary - Լուսատուի բարձրություն - Ուղղաձիգ աղեղ հորիզոնի և լուսատուի միջև, որի բարձրությունը հաշվում են հորիզոնից սկսած 0° մինչև 90° :

B-44. Высота сечения рельефа - Relief cross section height - Ռելիեֆի հատույթի բարձրություն - Ռելիեֆի հորիզոնականներով պատկերվող՝ Երկրի մակերևույթը հատող երկու հարևան մակարդակային հարթությունների բարձրությունների տարբերությունը:

B-45. Высотная отметка - Spot height / Bench mark - Բարձունքային նիշ - Քարտեզների վրա կետերի կողքին տեղադրված թիվ, որը ցույց է տալիս այդ կետի բացարձակ կամ հարաբերական բարձրությունը:

B-46. Высотный ход - Altitude course - Բարձունքային ընթացք - Տե՛ս *Ход высотный*:

B-47. Высотомер - Altimeter - Բարձրաչափ - Գործիք, որն օգտագործվում է օդային լուսանկարչության ժամանակ՝ լուսանկարվող կետերի բարձրությունները որոշելու համար:

B-48. Вычислительная геометрия - Calculating geometry - Հաշվողական երկրաչափություն - Մաթեմատիկայի բաժին, որն ուսումնասիրում և մշակում է երկրաչափական խնդիրների լուծման ալգորիթմներ: Այդպիսի խնդիրներ առաջ են գալիս համակարգչային գրաֆիկայում՝ նախագծման աշխատանքների ժամանակ:

B-49. Вычленение - Exarticulation - Մասնատում - Քարտեզի վրա բարդ երկրափամակարգերի, բաղադրիչների առանձնացում և այլ մանրամասների հեռացում:

B-50. Вьювер - Viewer - Վյուվեր - Տե՛ս *Визуализатор*:

Դ

Դ-1. Газеттир - Gazetteer - Գազետիր - Աշխարհագրական տեղեկատու՝ քարտեզում կամ ԱՏՀ տվյալների հենքում աշխարհագրական օբյեկտների տեղադիրքի նշամբ ցանկ:

Դ-2. Гамма-лучи - Gamma-rays - Գամմա ճառագայթներ - 0,0001-0,001 մկմ երկարությամբ էլեկտրամագնիսական ալիքներ:

Դ-3. Гелиотроп - Heliotrope [*հին հուն. ἥλιος, hēlios - արև և τροπεῖν, tropein - պտտվել*] - Արևադարձ - Սարք, որն օգտագործվում է գեոդեզիական աշխատանքների ժամանակ՝ լուսային ազդանշան արձակելու համար:

Դ-4. Генерализация пространственных данных - Generalization of spatial data - Տարածական տվյալների ընդհանրացում - ԱՏՀ-ում ավտոմատ կամ ինտերակտիվ ռեժիմում տարածական օբյեկտների մասին դիրքորոշիչ և ատրիբուտային տվյալների ընդհանրացում՝ օգտագործելով հատուկ օպերատորներ, որոնք համապատասխանում են քարտեզագրական ընդհանրացման եղանակներին և մեթոդներին: Դրանց թվում հիմնականներն են՝ պարզեցումը, հարթեցումը, գծերի բարակացումը, ընտրությունը, վերադասակարգումը և այլն:

Դ-5. Генерализация - Generalization [*լատ. generalis-ընդհանուր, գլխավոր*] - Ընդհանրացում - Փոքր մասշտաբի երկրապատկերների ամփոփում և ընդհանրացում, իրականության օբյեկտների ընտրություն, նրանց քանակական և որակական ցուցանիշների ընդհանրացում՝ կախված քարտեզի բովանդակությունից, մասշտաբից, նշանակությունից և տարածքի հատկություններից:

Դ-6. Геоанализ - Geoanalysis - Երկրավերլուծություն - *St' u Пространственный анализ.*

Դ-7. Географическая долгота - Geographic longitude - Աշխարհագրական երկայնություն - Տվյալ կետի միջօրեականի և սկզբնական միջօրեականի հարթություններով կազմված երկնիստ անկյուն. զրոյական միջօրեականից դեպի արևելք՝ մինչև 180° անկյուններն անվանում են արևելյան երկայնության, իսկ զրոյական միջօրեականից դեպի արևմուտք՝ մինչև 180° անկյուն-

ները՝ արևմտյան երկայնության:

Г-8. Географическая информационная система - Geographic information system - Աշխարհագրական տեղեկատվական համակարգ - 1. Տեղեկատվական համակարգ, որն ապահովում է տարածության մեջ որոշված տվյալների մուտքը, մշակումը, պահպանումը, պատկերումը և տարածումը: ԱՏՀ-ների հիմնական գործառույթն էլեկտրոնային քարտեզների, ատլասների և այլ քարտեզագրական ստեղծագործությունների ստեղծումն ու օգտագործումն է: 2. Հատուկ ծրագրային համակարգ, որն իրականացնում է ԱՏՀ գործառույթները:

Г-9. Географическая карта - Geographical map - Աշխարհագրական քարտեզ - Հարթության վրա որոշակի կոորդինատային համակարգով և պայմանական նշաններով Երկրի մակերևույթի քարտեզ:

Г-10. Географическая основа карт - Geographic base - Քարտեզների աշխարհագրական հիմք - Թեմատիկ քարտեզների ընդհանուր աշխարհագրական տարրեր, որոնք չեն պատկանում թեմատիկ բովանդակությանը, սակայն անհրաժեշտ են քարտեզն ընկալելու համար:

Г-11. Географическая сетка - Geographical net - Աշխարհագրական ցանց - Զուգահեռականների և միջօրեականների ամբողջությունը, որն անվանում են նաև աստիճանային ցանց: Աշխարհագրական ցանցի զուգահեռականներն ու միջօրեականներն Երկրագնդի մակերևույթը բաժանում են սֆերիկ սեղանների համակարգի: Յուրաքանչյուր այդպիսի սեղան հյուսիսից և հարավից սահմանափակված է աշխարհագրական ցանցին կից զուգահեռականների աղեղներով, իսկ արևմուտքից և արևելքից՝ միջօրեականների աղեղներով:

Г-12. Географическая широта - Geographic latitude - Աշխարհագրական լայնություն - Անկյուն է հասարակածի հարթության և տվյալ կետում երկրային էլիպսոիդի մակերեսի ուղղահայացի միջև: Աշխարհագրական լայնությունը չափվում է միջօրեականի աղեղով՝ հասարակածից մինչև տվյալ կետի զուգահեռականը:

Г-13. Географические координаты - Geographical coordinates - Աշխարհագրական կոորդինատներ - Մեծություններ, որոնք որոշում են կետի դիրքը Երկրի մակերևույթին՝ լայնություն՝ Բե (B), որը չափվում է տվյալ կետում ուղղաձիգ գծով և հասարակածի հարթությամբ կազմված անկյունով, և երկայնություն՝ Էլ (L), որը չափվում է տվյալ կետի և սկզբնական միջօրեականներով կազմված երկնիստ անկյունով:

Г-14. Географический полюс - Geographical pole - Աշխարհագրական բևեռ - Կետ, որտեղ Երկրի պտտման առանցքը հասնում է Երկրի մակերևույթի հետ: Կա երկու աշխարհագրական բևեռ: Հյուսիսային բևեռը գտնվում է Արկտիկայում, իսկ հարավայինը՝ Անտարկտիդայում: Աշխարհագրական բևեռում հասնում են բոլոր միջօրեականները, այդ պատճառով աշխարհագրական բևեռը չունի երկայնություն: Հյուսիսային բևեռը ունի +90 աստիճան լայնություն, իսկ հարավայինը՝ -90° լայնություն: Աշխարհագրական բևեռներում բացակայում են հորիզոնի կողմերը, չկա զիջերվա և ցերեկվա հերթափոխ: Աշխարհագրական բևեռում Արեգակի բարձրությունը չի գերազանցում 23,5°-ը, որի հետևանքով ջերմաստիճանը շատ ցածր է:

Г-15. Географическое разрешение снимков - Geographical resolution of photographs - Լուսանկարների աշխարհագրական լուծաչափ - Օդատիեզերական լուսանկարների որակի օբյեկտիվ ցուցանիշ: Գնահատվում է հատուկ ընտրված այնպիսի աշխարհագրական օբյեկտների միջոցով, որոնք, ունենալով որոշակի չափելիություն, գնահատվող նկարի վրա պատկերվում և վերծանվում են ոչ պակաս, քան 80 % հավանականությամբ: Տերմինը սահմանել է Վ. Ի. Կրավցովան՝ 2000թ.-ին:

Г-16. Геодезическая астрономия - Geodetic astronomy - Գեոդեզիական աստղաբաշխություն - Տե՛ս *Астрономия геодезическая*:

Г-17. Геодезическая величина - Geodetic value - Գեոդեզիական մեծություն - Տե՛ս *Величина геодезическая*:

Г-18. Геодезическая высота - Geodetic elevation Գեոդեզիական (ելիպսոիդալ) բարձրություն - Տե՛ս *Высота геодези-*

ческая.

Г-19. Геодезическая долгота - Geodetic longitude - Գեոդեզիական լայնություն - Տե՛ս *Долгота геодезическая*.

Г-20. Геодезическая засечка - Geodetic line crossection - Գեոդեզիական փոխհատում - Տե՛ս *Засечка геодезическая*.

Г-21. Геодезическая линия - Geodetic line - Գեոդեզիական գիծ - Մակերևույթի (այդ թվում էլիպսոիդի) վրա գտնվող երկու կետի միջև ամենակարճ գիծը: Գնդի վրա մեծ շրջանի աղեղն է, հարթության վրա՝ ուղիղ գիծը:

Г-22. Геодезическая основа карт - Geodetic base of map - Քարտեզների գեոդեզիական հիմք - Տե՛ս *Основа карт геодезическая*.

Г-23. Геодезическая сеть - Geodetic network - Գեոդեզիական ցանց - Տե՛ս *Сеть геодезическая*.

Г-24. Геодезическая широта - Geodetic latitude - Գեոդեզիական լայնություն - Տե՛ս *Широта геодезическая*.

Г-25. Геодезические координаты - Geodetic coordinates - Գեոդեզիական կոորդինատներ - Տե՛ս *Координаты геодезические*.

Г-26. Геодезический базис - Geodetic baseline Գեոդեզիական բազիս (հիմնագիծ) - Տե՛ս *Базис геодезический*.

Г-27. Геодезический пункт - Geodetic point - Գեոդեզիական հիմնակետ - Կետ է Երկրի մակերևույթին, որի դիրքը գեոդեզիական չափումներով որոշված է հայտնի կոորդինատային համակարգում: Երկրի մակերևույթի վրա գեոդեզիական կետերը նշվում և ամրացվում են հատուկ կառույցներով:

Г-28. Геодезический уровень - Geodetic level - Գեոդեզիական հարթաչափ - Տե՛ս *Уровень геодезический*.

Г-29. Геодезический ход - Geodetic course - Գեոդեզիական ընթացք - Տե՛ս *Ход геодезический*.

Г-30. Геодезическое нивелирование - Geodetic leveling - Գեոդեզիական նիվելիրացում (մակարդակաչափում) - Տե՛ս *Нивелирование тригонометрическое (геодезическое)*.

Г-31. Геодезия - Geodesy [հուն. *γεωδαισία* - հողի բաշխում. *γεω* - երկիր և *δαιζω* - բաշխել] - Գեոդեզիա - Գիտություն, որը

գրադվում է Երկրի ամբողջ մակերևույթի կամ նրա առանձին մասերի ուսումնասիրությամբ: Ճշգրիտ տվյալներ է տալիս Երկրի չափի և ձևի, կոորդինատային ցանցի մասին: Գործնական գեոդեզիան տրամադրում է կոորդինատային տվյալներ լեռնահանքային, քարտեզագրական, երկրաբանական, շինարարական և այլ աշխատանքների համար:

Г-32. Геодезия высшая - Highest geodesy - Բարձրագույն գեոդեզիա - Գեոդեզիայի բաժին, որը մշակում է Երկրի ձևի և չափերի, գրավիտացիոն դաշտի, երկրակեղևի ժամանակակից շարժումների ուսումնասիրության մեթոդներ, ինչպես նաև՝ ընդհանուր գեոդեզիական ցանցում որոշում է Երկրի ողջ տարածքի կետերի կոորդինատները:

Г-33. Геодезия инженерная - Engineering geodesy - Ինժեներական գեոդեզիա - Գեոդեզիայի բաժին, որն ուսումնասիրում է ճարտարագիտական հետազոտությունների և շինարարությունների ժամանակ օգտագործվող չափման մեթոդները և գործիքները: Ինժեներական գեոդեզիայի հիմնական բաղադրիչներն են՝ տեղագրական գեոդեզիական հետազոտությունները, ճարտարագիտական գեոդեզիական նշահարումը, տեղամասերի տարանջատումը և կառուցվածքների (կոնստրուկցիաների) ստուգումը:

Г-34. Геодезия космическая - Cosmic geodesy - Տիեզերական գեոդեզիա - Գեոդեզիայի բաժին, որը Երկրի ձևի և չափերի, նրա գրավիտացիոն դաշտի տեսական և գիտատեխնիկական խնդիրների լուծման նպատակով գրադվում է Երկրի արհեստական և բնական արբանյակների ուսումնասիրության արդյունքների մշակմամբ և կիրառմամբ: Հետազոտությունները իրականացվում են ինչպես մոլորակի մակերևույթից, այնպես էլ արբանյակներից:

Г-35. Геоид - Geoid - Գեոիդ - Երկրի ձևը, որը սահմանափակվում է օվկիանոսի միջին (հավասարեցված) մակարդակի երևակայական մակերևույթով: Գեոիդն իր ձևով նման է պտղտման էլիպսոիդին:

Г-36. Геоизображение - Geomage / georepresentation - Երկրապատկեր - Քարտեզների, նկարների և նման այլ մոդել-

ների ընդհանուր անվանումն է: Երկրապատկերը ցանկացած երկրային օբյեկտի կամ պրոցեսի տարածաժամանակային, մասշտաբային, ընդհանրացված մոդել է՝ ներկայացված գրաֆիկական ձևով:

Г-37. Геоиконика - Geoiconics – Երկրապատկերագիտություն (գեոիկոնիկա) - 20-րդ դարի 80-ական թթ. ձևավորված գիտական ուղղություն, որը մշակում է երկրապատկերների ընդհանուր տեսությունը, դրանց վերլուծության մեթոդները, ինչպես նաև՝ ձևափոխումը և կիրառումը գիտության մեջ ու գործնականում:

Г-38. Геоиконометрия - Geoiconometry – Երկրապատկերաչափություն (գեոիկոնոմետրիա) - Գիտական ուղղություն, որը զբաղվում է երկրապատկերների չափման տեսությամբ, մեթոդներով և միջոցներով:

Г-39. Геоинформатика - Geoinformatics / GIS technology - Գեոինֆորմատիկա - Գիտություն, տեխնոլոգիա և պրակտիկ գործունեություն՝ ուղղված աշխարհագրական տեղեկատվական համակարգերի, ԱՏՀ տեխնոլոգիաների և դրանց կիրառման գիտական հիմնավորմանը, մշակմանը և օգտագործմանը:

Г-40. Геоинформационная индустрия - Geoinformation industry / GIS industry - Գեոինֆորմացիոն արդյունաբերություն - Գեոինֆորմացիոն արտադրանք ստեղծող ձեռնարկությունների և կազմակերպությունների ամբողջություն: Ինչպես ցանկացած արդյունաբերություն, այն ևս բաժանվում է արտադրության միջոցների և սպառման առարկաների արտադրության: Որպես արտադրության միջոցներ հանդես են գալիս ապարատային և ծրագրային ապահովումը, տվյալները, որպես սպառման միջոցներ՝ գեոինֆորմացիոն նախագծերը, անձնական նավիգացիոն համակարգերը և այլն:

Г-41. Геоинформационное картографирование – Geoinformation mapping - Գեոինֆորմացիոն քարտեզագրություն - ԱՏՀ-ի միջոցներով և քարտեզագրական տվյալների ու գիտելիքների հիման վրա քարտեզների կազմումը և օգտագործումը: Գեոինֆորմացիոն քարտեզագրության էությունը կազմում է երկրահամա-

կարգերի տեղեկատվական քարտեզագրական մոդելավորումը:

Г-42. Геоинформационное образование - Geoinformation education / GIS education - Գեոինֆորմացիոն կրթություն - Մասնագետների պատրաստումն ԱՏՀ-ի և գեոինֆորմատիկայի ոլորտում:

Г-43. Геоинформационные технологии - Geoinformation technologies / GIS technologies - Գեոինֆորմացիոն տեխնոլոգիաներ - Տարածական տվյալների մշակման և օգտագործման մեթոդների և գործողությունների համալիր: Հանդիսանում են աշխարհագրական տեղեկատվական համակարգերի ստեղծման հիմքը:

Г-44. Геоинформационный проект - Geoinformation project - Գեոինֆորմացիոն նախագիծ - Աշխարհագրական տեղեկատվական համակարգի եզակի իրականացում, որը համապատասխանում է պահանջվող պայմաններին, ապահովում է համակարգի նախատեսված հատկանիշները, որոնք են տեղեկատվության ամբողջականությունը և արդիականությունը, անհրաժեշտ գործառույթների հուսալի իրականացումը:

Г-45. Геоинформационный рынок - Geoinformation market / GIS market - Գեոինֆորմացիոն շուկա - Ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատանքային ուժերի շրջանառության ոլորտ՝ կապված գեոինֆորմացիոն ապրանքների արտադրության և տարբեր ճյուղերի համար նախատեսված գեոինֆորմացիոն արդյունաբերության և ծառայությունների հետ: Գեոինֆորմացիոն շուկայի առարկա են՝ գեոինֆորմացիոն տեխնոլոգիաները, ԱՏՀ ծրագրային արտադրանքները, տարածական տվյալները, համակարգչային տեխնիկական և հատուկ սարքավորումները:

Г-46. Геоинформация - Geoinformation - Աշխարհագրական տեղեկատվություն - Տարածական (աշխարհագրական տարածության մեջ դիրքորոշված) տվյալներ և գիտելիքներ երկրահամակարգերի և նրանց տարրերի, ինչպես նաև դրանց միջև հարաբերությունների և կախվածությունների մասին:

Г-47. Геокодирование - Geocoding - Գեոկոդավորում - Տարածական օբյեկտների որևէ կոորդինատային համակարգում

դիրքորոշման մեթոդ և գործընթաց, որի ընթացքում սահմանվում են օբյեկտների ատրիբուտների հետ կապերը:

Г-48. Геомагика - Geomatics - Գեոմատիկա - 1. Տեղեկատվական տեխնոլոգիաների, մուլտիմեդիայի և հեռահաղորդակցման միջոցների համալիր կիրառումը՝ տվյալների մշակման, երկրահամակարգերի վերլուծության, ավտոմատացված քարտեզագրության նպատակով: 2. Հասկացություն, որը որպես հոմանիշ կիրառվում է գեոինֆորմատիկա կամ գեոինֆորմացիոն քարտեզագրություն տերմինների փոխարեն:

Г-49. Геометрическая точность карты - Geometric(al) exactness of map - Քարտեզի երկրաչափական ճշտություն - Քարտեզում պատկերված օբյեկտների տեղադիրքի ճշտությունն՝ իրականի համեմատությամբ:

Г-50. Геометрические свойства снимков - Geometric(al) attributes of photographs - Նկարների երկրաչափական հատկություններ - Նկարի վրա պատկերված օբյեկտների չափերի և մակերեսների, դրանց փոխադարձ դիրքի վերաբերյալ ունակությունը:

Г-51. Геометрическое нивелирование - Geometric leveling - Երկրաչափական նիվելիրացում - *St'u Нивелирование геометрическое.*

Г-52. Геометрия объекта - Object geometry - Օբյեկտի երկրաչափություն - Քարտեզի վրա տարածական օբյեկտի պատկերման միջոց. առանձնացնում են հեռնյալ տիպի օբյեկտները՝ կետային, զծային և մակերեսային:

Г-53. Геометрия - Geometry [*հուն. γεωμετρία. γεω - երկիր և μετρέω - չափում*] - Երկրաչափություն - 1. Մաթեմատիկայի բաժին, որն ուսումնասիրում է մարմինների ձևերը և չափերը, մակերևույթը և տարածական հարաբերությունները: 2. ԱՏՀ-ում տարածական տվյալների այն մասը, որը որոշում է առարկաների դիրքը և նրանց մոդելի երկրաչափական հատկությունները:

Г-54. Геомоделирование (пространственное моделирование) - Geomodelling - Գեոմոդելավորում (տարածական մոդելավորում) - Քարտեզագրական պատկերների նախագծում և ստեղ-

ծում՝ օգտագործելով ելակետային, ամանցյալ և վերջնական տվյալները: ԱՏՀ-ի գլխավոր գործառույթներից մեկը, որի ծրագրային միջոցների շնորհիվ հնարավոր է կառուցել և օգտագործել տարածական օբյեկտների մոդելները:

Г-55. Геостереометрия - Geostereometry - Երկրատարածաչափություն - Երկրապատկերաչափության (գեոիկոնամետրիայի) բաժին, որը մշակում է օբյեկտների ձևաչափական մեթոդներ՝ օգտագործելով հարթ քարտեզների և երկչափ պատկերների տվյալները:

Г-56. Геохронометрия - Geochronometry - Երկրաժամանակաչափություն (գեոքրոնոմետրիա) - Երկրապատկերաչափության (գեոիկոնամետրիայի) բաժին, որը եռաչափ պատկերների տվյալներով մշակում է օբյեկտների ձևաչափական մեթոդները:

Г-57. Геоцентрические координаты - Geocentric coordinates - Երկրակենտրոն կոորդինատներ - St' u *Координаты геоцентрические*:

Г-58. Гибридная классификация объектов по снимкам - Hybrid classification of objects by photographs - Նկարների տվյալներով օբյեկտների հիբրիդային դասակարգում - Նկարի վրա պատկերված օբյեկտների դասակարգում, որն իրականացվում է դասակարգման երկու կամ ավելի եղանակներով:

Г-59. Гидролокационная съемка - Hydrosonar survey - Հիդրոլոկացիոն հանույթ - St' u *Съемка гидролокационная*:

Г-60. Гидростатическое нивелирование - Hydroststic leveling - Հիդրոստատիկ նիվելիրացում - St' u *Нивелирование гидростатическое*:

Г-61. Гипергеоизображение (гиперизображение) - Hypergeoimage (hyperimage) - Հիպերերկրապատկեր (հիպերպատկեր) - Բարդ բազմաչափ երկրապատկեր՝ գրաֆիկական մոդել, որում համադրվում են պատկերվող առարկայի երկրաչափական, ծավալադիտական, օպտիկական և դինամիկ հատկությունները: Այդպիսի երկրապատկերները սովորաբար պատկանում են ծրագրային կառավարվող մոդելների դասին:

Г-62. Гипериконическая визуализация - Hypericonic visualization - Գերպատկերային (հիպերիկոնիկ) տեսանելիացում - Բարդ առարկաների գրաֆիկական մոդելավորում՝ գերպատկերների միջոցով:

Г-63. ГИС - GIS - USZ (Աշխարհագրական տեղեկատվական համակարգ) - St u *Географическая информационная система*:

Г-64. Главная точка аэрофотоснимка - Main point of aerial photograph - Օդալուսանկարի գլխավոր կետ - Լուսանկարչական խցիկի օպտիկական առանցքի հատման կետը լուսանկարի հարթության հետ:

Г-65. Главный масштаб - Main scale - Գլխավոր մասշտաբ - Ցույց է տալիս, թե իրականի նկատմամբ քանի անգամ են գծային չափերը փոքրացված քարտեզի վրա:

Г-66. Глазомерная съемка - Eye survey - Աչքաչափական հանույթ - Հանույթի ամենապարզ եղանակը, ինչպես երևում է անվանումից, իրականացվում է աչքաչափական եղանակով՝ օգտագործելով թուղթ, քանոն, մատիտ, երբեմն բուսուլ կամ կողմնացույց: Այն իրականացվում է այն տեղանքում, որտեղ գործիքային հանույթ դեռևս չի իրականացվել կամ էլ իրականացվել է շատ վաղուց:

Г-67. Глобальная позиционирующая система - Global positioning system - Գլոբալ դիրքորոշման համակարգ - Այն նաև անվանում են արբանյակային դիրքորոշման նավիգացիոն համակարգ, որը ծառայում է երկրագնդի վրա գտնվող անշարժ կետերի և տեղաշարժվող առարկաների տեղադիրքը՝ աշխարհագրական կոորդինատները որոշելու համար: Արբանյակային համակարգը նաև թույլ է տալիս ստանալ ռադիոազդանշանների երկնային ընդունիչների շարժման արագությունը և ուղղությունը: Համակարգը բաղկացած է հատուկ բարձր ուղեծիրներից՝ բարձրացված արհեստական արբանյակներից, որոնք մշտապես Երկիր են ուղարկում ռադիոազդանշաններ Երկրի վրա գտնվող կառավարման ենթահամակարգից: Այժմ երկրագնդի ամբողջ մակերեսը մշտապես և անխափան կերպով ծածկում են Ջի Փի Էս (GPS) և ԳԼՈՆԱՍՍ (ГЛОНАСС) արբանյակային համակարգերը:

Г-68. Глобус - Globe - Գլոբուս - Երկրի, մոլորակների և այլ երկնային մարմինների պտտվող գնդաձև ֆիզիկական մոդելը՝ քարտեզագրական պատկերմամբ: Գլոբուսն ունի մասշտաբ, միջօրեականների ու զուգահեռականների համակարգ և պայմանական նշաններ: Գլոբուսի վրա քարտեզագրական պատկերներն աղավաղված չեն՝ ի տարբերություն քարտեզագրական պրոյեկցիաների:

Г-69. ГЛОНАСС - GLONASS - ԳԼՈՆԱՍՍ - Ռուսաստանի գլոբալ նավիգացիոն արբանյակային համակարգ, որը նախատեսված է երկրի մակերևույթի կետերի կոորդինատների որոշման համար:

Г-70. Голограмметрия - Hologrammetry - Հոլոգրամաչափություն - Հոլոգրաֆիական երկրապատկերների տվյալներով առարկաների երկրաչափական բնութագրիչների չափում, ձևի և կառուցվածքի ցուցանիշների հաշվարկում:

Г-71. Голографическая космическая съёмка - Holographic cosmic survey - Հոլոգրաֆիկ տիեզերական հանույթ - Օբյեկտի ծավալային պատկերի (մեծապատկերի) ստացում՝ լուսային ալիքները ֆիքսելու միջոցով:

Г-72. Голографическое геоизображение (голограмма) - Holographic geomage (gologram) - Հոլոգրաֆիական երկրապատկեր (հոլոգրամ) - Առարկայի ինտերֆերենցիոն պատկեր, որը ստացվում է լույսի ալիքային դաշտերի գրանցման, վերարտադրման և ձևափոխման միջոցով: Պատկերը ստեղծում է իրական առարկայի արտաքին տեսքի լիակատար ծավալային տպավորություն:

Г-73. Горизонт небесный - Celestial horizon - Երկնային հորիզոն - Երկնոլորտի մեծ շրջան, որի հարթությունն ուղղահայաց է տվյալ կետի ուղղաձիգ գծին:

Г-74. Горизонт - Horizon [հին հուն. *ὁρίζων* - սահմանափակող] - Հորիզոն - Կոր գիծ, որը սահմանափակում է Երկրի մակերևույթի տեսանելի մասը: Տեսանելի հորիզոնը մեծանում է դիտակետի բարձրության ավելացման դեպքում: Իրական (մաթեմատիկական) հորիզոնը երկնոլորտի մեծ շրջանն է, որի հար-

թությունը ուղղահայաց է տվյալ կետի ուղղաձիգին:

Г-75. Горизонталь - Contour - Հորիզոնական - Կոր գիծ քարտեզի վրա, որը միացնում է մակերևույթի հավասար բացարձակ բարձրություն ունեցող կետերը:

Г-76. Горизонталь утолщенная - Reinforced contour - Հաստացված հորիզոնական - Հատման բարձրության հնգապատիկ մեծությանը համապատասխանող հոծ հորիզոնական, որը, հորիզոնականների հաշվարկը դյուրացնելու նպատակով, ցույց է տրվում հոծ գծով:

Г-77. Горизонталь вспомогательная - Subsidiary contour - Օժանդակ հորիզոնական - Գծագրվում է կարճ ընդհատվող գծերով և ցուցադրում է ռելիեֆի լրացուցիչ մանրամասներ:

Г-78. Горизонталь основная - Basic contour - Հիմնական հորիզոնական - Ռելիեֆի հատույթի սահմանված բարձրությանը համապատասխանող հորիզոնական, որը քարտեզի վրա գծագրվում է հոծ գծով:

Г-79. Горизонталь половинная - Half contour - Կիսահորիզոնական - Լրացուցիչ հորիզոնական, որը անցկացվում է ռելիեֆի հատույթի սահմանված բարձրության կետի չափով:

Г-80. Горизонталь сплошная - Complete contour - Հոծ հորիզոնական - Տե՛ս *Горизонталь основная*:

Г-81. Горизонтальная съемка - Horizontal surveying - Հորիզոնական հանույթ - Տե՛ս *Съемка горизонтальная*:

Г-82. Горизонтальное положение - Horizontal position - Հորիզոնական դիրք - Երկրի մակերևույթի կետերի և գծերի պատկերը՝ պլանի վրա:

Г-83. Горизонтальное проложение - Horizontal distance (horizontal projection) - Հորիզոնական պրոյեկցիա - Հորիզոնական հարթության վրա գծի պրոյեկցիայի երկարությունը:

Г-84. Горизонтальный угол - Horizontal angle - Հորիզոնական անկյուն (գեոդեզիայում) - Տարածական անկյան պրոյեկցիան՝ հորիզոնական հարթության վրա:

Г-85. Горизонтирование геодезического прибора - Horizontalizing of geodetic instrument - Գեոդեզիական գործիքը հորի-

զոնական դիրքի բերելը - Գործիքի ուղղաձիգ առանցքն ուղղաձիգ դիրքի, կամ՝ զլանային առանցքը հորիզոնական դիրքի բերելը:

Г-86. Государственная геодезическая сеть - State geodetic net - Պետական գեոդեզիական ցանց - Տե՛ս *Сеть государственная геодезическая*.

Г-87. Гравиметрическая съемка - Gravimetric(al) survey - Գրավիմետրական (ծանրաչափական) հանույթ - Տե՛ս *Съемка гравиметрическая*.

Г-88. Гравирование - Engraving [*գերմ. gravieren, ֆր. graver - կտրել մի բանի վրա*] - Փորագրում - Օգտագործվում է բարձրորակ բնօրինակներ ստանալու համար: Փորագրումն իրականացվում է փորագրող գործիքներով՝ հատուկ փորագրման նյութով պատված պլաստիկի (դյուրաթեք, ճկուն նյութ) վրա:

Г-89. Град (гон) - Grad (gon) - Գրադ (զոն) - Հարթ անկյան ոչ համակարգային մետրային չափման միավոր. 1գր ուղիղ անկյան 1/100 մասն է, հավասար է 0,0157 ռադ. և 0,9°:

Г-90. Градиентная заливка - Gradient coloring / painting [*լատ. gradientis - քայլող, աճող*] - Աստիճանական ներկում - Հիմնականում կիրառվում է գրաֆիկական ծրագրերում: Փոփոխությունը կատարվում է աստիճանական ներկման գծային, ճառագայթային և այլ եղանակներով:

Г-91. Градусная сетка - Degree grid - Աստիճանացանց - Միջօրեականների ու զուգահեռականների ցանց:

Г-92. Граница - Border - Սահման - Գիծ, որը միմյանցից բաժանում է տարբեր մակերեսներ:

Г-93. Граф - Graph / linear complex [*հուն. γράφω - քերծել, գծել, գրել*] - Գրաֆ - Աղեղների և հանգույցների համակարգ: Սաթեմատիկայում գրաֆը ներկայացնում է օբյեկտների ուսումնասիրման երկրաչափական մոտեցումը: Գրաֆը կազմված է գագաթների (կետեր, հանգույցներ) և դրանք միացնող աղեղների (կապեր) վերջավոր բազմությունից:

Г-94. Графикация - Graphication - Գրաֆիկացում - Տեղեկատվությունը գրաֆիկական լեզվով արտահայտելու և տարածե-

լու տեխնոլոգիաներ. դրանց մշակման նոր տեսություն: Այդ տեխնոլոգիաները հասկապես արդիական են պատկերներն ու կերպարները գրաֆիկական եղանակով հեռահաղորդման համար:

Г-95. Графическая нагрузка - Graphic loading - Գրաֆիկական բեռնվածություն - Երկրապատկերների բոլոր գրաֆիկական տարրերը՝ նշաններ, ցանց, գունավորում, մանրագծեր (շտրիխներ), գրեր: Բեռնվածությունը չափվում է պատկերների միավոր մակերեսի գրաֆիկական տարրերի քանակով:

Г-96. Графическая плотность знака - Graphic solidity of mark - Նշանի գրաֆիկական խտություն - Նշանի մանրագծային տարրերի մակերեսի հարաբերությունը՝ նշանի ամբողջ մակերեսին:

Г-97. Графическая среда - Graphic environment - Գրաֆիկական միջավայր - Երկրահամակարգի տեսանելիացման և գրաֆիկական մոդելավորման որևէ համակարգ, որի արդյունքն ընկալելի է մարդու կամ համակարգչային ճանաչող սարքի համար:

Г-98. Графические переменные - Grphic variables - Գրաֆիկական փոփոխականներ - Տարրական գրաֆիկական միջոցներ, որոնք օգտագործվում են քարտեզագրական նշանների և նշանային համակարգերի կառուցման ժամանակ: Դրանք նշանի չափերն են, գույնը և գույնի հագեցվածությունը, կողմնորոշումը, ներքին կառուցվածքը:

Г-99. Графические элементы - Graphic elements - Գրաֆիկական տարրեր - 1. Քարտեզների տարրերն են գծային՝ կառուցված գծերի, գծիկների և կետերի միջոցով, և ֆոնային՝ գույներով ներկված մակերեսները: Առանձնացնում են տարբեր գունային երանգի, պայծառության կիսագունային տարրեր: 2. Մեքենայական գրաֆիկայում գծագրական «պրիմիտիվներն» են՝ կետ, ուղիղ գծի հատված, շրջանագծի աղեղ, վեկտոր և այլն, որոնք պարտադիր բնութագրվում են հարթության վրա իրենց դիրքով:

Г-100. Графический интерфейс пользователя - Graphic user's interface - Օգտագործողի գրաֆիկական ինտերֆեյս (կապողակ) - Գրաֆիկական միջոցների և մեթոդների ամբողջություն, որն

ապահովում է օգտագործողի փոխադարձ գործողությունները հաշվողական համակարգի հետ: Վերջինիս հիմնական բաղադրիչներն են աշխատանքային սեղանը (desktop), պատուհանները, մենյուները և գործիքները:

Г-101. **Графический образ** - **Graphic aspect / type** - Գրաֆիկական կերպար - 1. Նկար, պատկեր, ուրվագիծ, կարտուցվածք, որը ներկայացնում է որևէ իրական կամ վերացական երկրահամակարգ: 2. Մոդել, որը ներկայացնում է երկրահամակարգի տեսքը, ուրվագիծը և պատկերը:

Г-102. **Графопостроитель** - **Plotter** - Գծագրական սարք (պլոտեր) - Համակարգչային տերմինալ՝ սարք, որը համակարգչի տվյալները դուրս է բերում գրաֆիկական ձևով և պատկերում է թղթի կամ այլ կրիչի վրա գծագրման, փորագրման կամ այլ եղանակով:

Г-103. **Гринвичский меридиан** - **Meridian of Greenwich** - Գրինվիչի միջօրեական - Ջրո աստիճանի աշխարհագրական միջօրեական, որն անցնում է Գրինվիչի աստղադիտարանի (Լոնդոնի մոտ) դիտակով: Ընդունված է որպես սկզբնական միջօրեական, որից սկիզբ է առնում Երկրի էլիպսոիդի թվով 60 գոտիների (և երկայնության) հաշվարկը: Ընդունվել է 1884թ.-ին Վաշինգտոնի միջազգային կոնֆերանսի ժամանակ:

Г-104. **Грубые ошибки измерений** - **Coarse errors of measurements** - Զափման կոպիտ սխալներ - Սխալներ, որոնք իրենց բացարձակ մեծությամբ գերազանցում են տվյալ պայմանների համար թույլատրելի սահմանային մեծությունը: Կոպիտ սխալները ստացվում են աշխատանքում թույլ տրված ոչ ճիշտ հաշվարկների և վրիպումների հետևանքով:

Г-105. **Групповое кодирование** - **Group coding** - Խմբային կոդավորում - Ռաստրային տվյալների սեղմման տարածված և պարզ եղանակներից մեկը, որի դեպքում կրկնվող սիմվոլները փոխարինվում են մեկ սիմվոլով և կրկնվող սիմվոլների քանակով:

Ը

Ը-1. Дальномер (геодезический) - Range-finder (geodetic) - Հեռաչափ (գեոդեզիական) - Գեոդեզիական գործիք, որը ծառայում է գծերի երկարությունների չափման համար:

Ը-2. Дальность видимости (дальность видимого горизонта) - Distance of visibility (distance of visible horizon) - Տեսահորիզոնի հեռավորություն (երևացող հորիզոնի հեռավորություն) - Դիտորդի և երևացող հորիզոնի գծի միջև եղած տարածությունը:

Ը-3. Данные дистанционного зондирования - Remote sensing data - Հեռազննման տվյալներ - Տվյալներ Երկրի մակերևույթին և ընդերքում գտնվող օբյեկտների մասին, որոնք ստացվել են կամայական, ոչ կոնտակտային՝ հեռահար եղանակով: Դրանց թվին են պատկանում երկրային, օդային և տիեզերական տեղադրման սարքավորումներով ստացված պատկերներ:

Ը-4. Данные - Data - Տվյալներ - 1. Արձանագրված փաստեր, այդ թվում դիտարկումների, չափումների, փորձարկումների արդյունքներ, այլ տեղեկություններ, իրական աշխարհի կամ գաղափարների մասին, որոնք արժանի են արձանագրման և պահպանման: 2. Տեղեկատվություն, որը մարդու մասնակցությամբ հնարավոր է մշակել ավտոմատ միջոցներով:

Ը-5. Девиация - Deviation [լատ. deviatio - շեղում] - Շեղում / խտտորում - Կողմնացույցի մագնիսական սլաքի շեղումը մագնիսական միջօրեականից՝ մոտակայքում գտնվող մագնիսական մարմինների ազդեցության հետևանքով:

Ը-6. Декомпрессия цифровых снимков - Digital photographs decompression - Թվային նկարների դեկոմպրեսացում - Ծավալը փոքրացնելու նպատակով՝ սեղմված պատկերների սկզբնական վիճակի վերականգնում:

Ը-7. Делимитация - Delimitation [լատ. delimitatio - սահմանների տեղակայում] - Սահմանազատում (Սահմանի գծում, Դելիմիտացիա) - Պետական սահմանի որոշում՝ համաձայն նրա ծագման նկարագրության և կնքված պայմանագրի, սահմանի անցկացմամբ տեղագրական քարտեզի վրա:

Д-8. Демаркация - Demarcation [*լատ. demarcatio – սահմանային հիմնում, տարբերակում*] - Սահմանագծերի ամրացում (Դեմարկացիա) - Փաստաթղթերի հիման վրա՝ պետական սահմանի հիմնում՝ տեղանքում սահմանային նշանային կառույցների միջոցով:

Д-9. Детализация - Detailed elaboration / working out in detail - Մանրամասնում - Միմյանց հակադիր սխեմատիկության վերափոխում՝ պատկերն ավելի հասկանալի դարձնելու նպատակով:

Д-10. Дешифрирование аэрокосмических снимков - Interpretation of aerocosmic photographs - Օդատիզերական նկարների վերծանում - Օդատիզերական նկարներում պատկերված օբյեկտների, դրանց հատկությունների և փոխհարաբերությունների ճանաչման գործողություն:

Д-11. Дешифрирование аэроснимков камеральное - Office interpretation of photographs - Օդանկարների գրասենյակային վերծանում - *Տե՛ս և Камеральное дешифрирование снимков.*

Д-12. Дешифрирование аэроснимков полевое - Field ninterpretation of photographs - Օդանկարների դաշտային վերծանում - *Տե՛ս և Полевое дешифрирование снимков.*

Д-13. Дешифровочные признаки - Interpretation signs / Indicators - Վերծանման հատկանիշներ - Օբյեկտների հատկանիշներ, որոնք արտահայտված են նկարի վրա և կարող են օգտագործվել դրանց ճանաչման նպատակով:

Д-14. Диаграмма локализованная - Localized diagram - Տեղադիրքի գծապատկեր, տրամագիր (դիագրամ) - Այդպիսի գծապատկերներն ու գրաֆիկներն ունեն երկրաչափական պատկերների տեսք և ժամանակի որոշակի հատվածում արտահայտում են որևէ երևույթի վիճակը:

Д-15. Дигитайзер - Digitizer / Digitiser / - Դիգիթայզեր / դիջիթայզեր - Թվայնացման և գրաֆիկական տվյալների մուտքի սարք: 1. Ազդանշանների և տվյալների համանման (անալոգային) թվային վերափոխման սարք: 2. Գեոինֆորմատիկայում, համակարգչային գրաֆիկայում և քարտեզագրության մեջ այն օգտա-

գործվում է քարտեզագրական և գրաֆիկական նյութերի՝ ձեռքով թվայնացնելու համար:

Д-16. Дизайн картографический - Cartographic design [անգլ. design - նախագծել, գծել, հատակագիծ, նկարչություն] - Քարտեզագրական ձևավորում (դիզայն) - Քարտեզագրական դիզայնը վերջնական արդյունքում ապահովում է քարտեզագրական ստեղծագործությունների գեղարվեստական կատարելությունը:

Д-17. Динамическая генерализация - Dynamic generalization - Դինամիկ ընդհանրացում - Դինամիկ երկրապատկերների (անիմացիաների, ֆիլմերի, մոդելների և այլն) մեխանիկական ընդհանրացում՝ դրանց ցուցադրման արագության փոփոխման միջոցով: Ցուցադրման արագության ավելացման դեպքում ընդգծվում են գլխավոր՝ ժամանակի ընթացքում առավել կայուն երևույթներն ու օբյեկտները:

Д-18. Динамическая картометрия - Dynamic cartometry - Դինամիկ քարտեզաչափություն - Քարտեզագրական օբյեկտների դինամիկայի որոշում՝ տարբեր ժամանակի քարտեզների և քարտեզագրական անիմացիաների ցուցանիշների չափման միջոցով:

Д-19. Динамическая фотограмметрия - Dynamic photogrammetry - Դինամիկ լուսանկարաչափություն - 1. Տարբեր ժամանակների նկարներով և ֆիլմերով՝ օբյեկտի շարժման փոփոխության տեմպի (դինամիկայի) ցուցանիշների որոշում: 2. Դինամիկ լուսանկարներով ստացված երկրապատկերների երկրաչափական բնութագրերի ուսումնասիրություն:

Д-20. Динамическое геоизображение - Dynamic geoimage / Georepresentation - Դինամիկ երկրապատկերներ - Հարթ կամ ծավալային երկրապատկերներ, որոնք արտացոլում են օբյեկտների և երևույթների դինամիկան, զարգացումը, տեղափոխությունները տարածության մեջ և փոփոխությունները ժամանակի ընթացքում (օրինակ՝ քարտեզագրական անիմացիաները և կինոատլասները):

Д-21. Дирекционный угол - Direction angle / Grid azimuth / Grid bearing - Դիրեկցիոն անկյուն - Հորիզոնական անկյուն, որը

կազմվում է առանցքային միջօրեականով և ուղղության հորիզոնական պրոյեկցիայով, հաշված առանցքային միջօրեականի հյուսիսային ծայրից ժամացույցի սլաքի ուղղությամբ՝ 0°-ից մինչև 360°:

Д-22. Дискретизация - Discretization / Digitization [լատ. *discretio* - տարբերել, ճանաչել] - Ընդհատավորում (դիսկրետացում) - Անընդհատ տարածում ունեցող երևույթի պատկերումը՝ ընդհատվող ձևով (օրինակ՝ ռելիեֆի պատկերումը կետերի բարձրությունների բազմությամբ):

Д-23. Дистанционные методы исследований - Remote sensing of surveys / Distant methods of surveys - Հեռազոտության հեռահար մեթոդներ - Օբյեկտի ցանկացած հեռազոտություն՝ որոշակի հեռավորությունից՝ առանց օբյեկտի հետ անմիջական շփման:

Д-24. Долгота географическая - Geographic longitude - Աշխարհագրական երկայնություն - St u *Географическая долгота*:

Д-25. Долгота геодезическая - Geodetic longitude - Գեոդեզիական երկայնություն - Գեոդեզիական զրոյական և տվյալ կետով անցնող միջօրեականի հարթություններով կազմված երկնիստ անկյուն:

Д-26. Достоверность результатов дешифрирования - Interpretation results authenticity - Վերծանման արդյունքների հավաստիություն - Միսլ տեղեկատվության նվազ քանակության կամ ճշտության որևէ դասի պատկանող վերծանված օբյեկտների տոկոսը:

Д-27. Дуга - Arch / String - Աղեղ - Գծային և մակերեսային տարածական օբյեկտների վեկտորատոպոլոգիական ներկայացման տարր՝ գծի հատված, որը հանգույցներում ունի սկիզբ և վերջ, և որոնց բազմությունը կազմում է հատվածների հաջորդականություն:

Д-28. Дымка - Mist - Մշուշ - Հետազոտողի և օբյեկտի միջև գտնվող մթնոլորտի շերտի լուսարձակում, որն առաջանում է գազերի անհամասեռության և պինդ մասնիկների կողմից լույսի ցրման հետևանքով:

Ե

Ե-1. Единство геодезических измерений - Unity of geodetic measurements - Գեոդեզիական չափումների միասնականություն - Գեոդեզիական չափումների վիճակ, որի դեպքում դրանց արդյունքները համապատասխանում են նորմատիվային փաստաթղթերին, արտահայտված են ընդունված միավորներով, իսկ չափման սխալը հայտնի է տրված հավանականությամբ:

Ե-2. Единство измерений - Unity of measurements - Չափումների միասնականություն - Չափումներ, որոնց դեպքում արդյունքներն արտահայտված են ընդունված միավորներով, իսկ չափման սխալը մեծ չէ թույլատրելի սահմանային մեծությունից:

Ջ

Ջ-1. Жезл геодезический - Geodetic baton - Մական (ձողիկ) գեոդեզիական - Երկարության չափի մանրագծային ստուգանմուշ՝ առավելագույնը 3 մետր երկարությամբ:

3-1. Задача обратная геодезическая - Geodetic inverse Task - Գեոդեզիական հակադարձ խնդիր - Սկզբնական և վերջնական կետերի կոորդինատների գծերի երկարությունների և ուղղությունների որոշում:

3-2. Задача прямая геодезическая - Geodetic direct geodetic direct problem - Ուղիղ գեոդեզիական խնդիր - Վերջնակետի կոորդինատների որոշում՝ գծի երկարության, ուղղության և սկզբնակետի կոորդինատների միջոցով:

3-3. Заложение - Horizontal equivalent - Միջակայք - Քարտեզի վրա տրված ուղղությամբ երկու հաջորդական հորիզոնականների միջև եղած հեռավորությունը:

3-4. Западное сближение меридианов - West rapprochement of meridians - Միջօրեականների արևմտյան մերձեցում - Կոորդինատային ցանցի, ուղղաձիգ գծի հյուսիսային ծայրի շեղումը իրական միջօրեականից դեպի արևմուտք, որը նշանակվում է հանման («-») նշանով:

3-5. Западное склонение - West declination - Արևմտյան հակում - Հակում՝ հանման («-») նշանով, երբ մագնիսական սլաքի հյուսիսային ծայրը շեղվում է իրական միջօրեականից դեպի արևմուտք:

3-6. Заполняющие условные знаки - Fill symbols - Լրացնող պայմանական նշաններ - Մասշտաբային պայմանական նշանների մակերեսը լրացնող գծագրական պատկեր:

3-7. Запрос - Inquiry / query - Հարցում - Տվյալների հենքում սահմանված պայմաններին բավարարող տվյալներ որոնելու առաջադրանք:

3-8. Засечка геодезическая - Geodetic intersection - Գեոդեզիական փոխհատում (նշահատում) - Կետի կոորդինատների որոշման եղանակ, որը կատարվում է գեոդեզիական չափումների կամ տվյալ կետում գրաֆիկական կառուցումների հիման վրա: Տարբերում են ուղիղ, հակադարձ, կոմբինացված և այլ փոխհատումներ:

3-9. Зелено-коричневая шкала - Green-brown scale - Կանաչ-

շագանակագույն սանդղակ - Հին բարձրաչափական քարտեզների առավել տարածված պայմանական նշանների համակարգ: Կանաչ-շագանակագույն սանդղակները կառուցվում են գունալին տոնի, հագեցվածության և լուսավորվածության փոփոխության միջոցով, որտեղ կանաչ գույնը բնորոշ է ցածրավայրերին (մինչև 200 մ), իսկ շագանակագույնը՝ բարձրավայրերին (200 մ-ից բարձր):

3-10. *Земельная информационная система (ЗИС) - Land information system (LIS)* - Հողային տեղեկատվական համակարգ (ՀՏՀ) - Հողային ռեսուրսների, հողային կադաստրի և հողօգտագործման աշխարհագրական տեղեկատվական համակարգ:

3-11. *Землеустройство - Land-tenure regulations* - Հողաշինարարություն - Հողերի վիճակի ուսումնասիրման, հողային հարաբերությունների կարգավորման, հողերի ռացիոնալ օգտագործման և պահպանման, տեղանքում հողօգտագործման սահմանների վերականգնման, ներառյալ նախագծային-հետախուզական և հանույթային աշխատանքները, ինչպես նաև հողերի գույքագրման միջոցառումների համակարգը:

3-12. *Земной сфероид - Land spheroid* - Երկրային սֆերոիդ - Գնդաձև, բևեռներից քիչ սեղմված երկրաչափական ֆիգուր, որով ներկայացվում է Երկրի ձևը:

3-13. *Земной эллипсоид - Land ellipsoid* - Երկրային էլիպսոիդ - Պտտման էլիպսոիդ, որի ձևն առավել նման է գեոիդին. չափերը և դիրքը Երկրի մակերևույթի սահմաններում որոշվում են հաշվարկների միջոցով՝ ելնելով այն պայմանից, որ առավել կերպով մոտ լինի գեոիդին ամբողջությամբ (ընդհանուր երկրային էլիպսոիդ) կամ նրա առանձին մասերին (համեմատման էլիպսոիդ, տե՛ս *Референц-эллипсоид*):

3-14. *Зенит - Zenith* - Չենիթ - Երկրի մակերևույթի ուղղաձիգ գծի հատման կետը երկնախորտի հետ:

3-15. *Зенитное расстояние - Zenithal distance / interval* - Չենիթային հեռավորություն - Երկնային լուսատուի կամ երկրային օբյեկտի անկյունային հեռավորությունը Չենիթից: Այն ուղղաձիգ անկյուն է Չենիթի և տվյալ կետի ուղղությունների միջև: Անկ-

յան մեծությունը կախված է կետի դիրքից և կարող է փոփոխվել 0°-ից մինչև 180°:

3-16. Зеркальное отражение - Smooth / Optical reflection - Հայելային անդրադարձում - Հայելային մակերևույթից ընկնող ճառագայթի անդրադարձը: Ընկնող և անդրադարձված ճառագայթներն առավելապես գտնվում են նույն հարթության մեջ, և անկման անկյունը հավասար է անդրադարձի անկյանը: Հայելային է այն մակերևույթը, որի անհարթությունների չափերը էապես փոքր են ճառագայթի ալիքի երկարությունից: Այդպիսի մակերևույթի օրինակներ են ջրավազանի, հարթ սառույցի և չոր ժայռապարների մակերևույթները:

3-17. Знак геодезический - Geodetic mark - Գեոդեզիական նշան - Վերգետնյա կամ ստորերկրյա սարքավորում կամ կառույց (բուրգ, ազդանշան, սյուն), որը նշում է գեոդեզիական կետի դիրքը տեղանքում:

3-18. Знак картографический - Cartographic mark / Symbol - Քարտեզագրական նշան - Գրաֆիկական նշանների համակարգ, որն օգտագործվում է քարտեզների վրա մասշտաբը, բովանդակությունը, օբյեկտները և երևույթները, նրանց քանակական և որակական հատկանիշները ներկայացնելու նպատակով:

3-19. Знак межевой - Land mark / Boundary mark - Մահմանագծի նշան - Նշան, որը հաստատում է հողային սահմանների իրավաբանական գրանցումը:

3-20. Знаки движения - Marcks of traffic / Movement - Շարժման գծանշաններ - Քարտեզագրական պատկերման եղանակներից մեկը, որն օգտագործվում է բնական, սոցիալական, տնտեսական երևույթների տարածական տեղաշարժն արտահայտելու համար: Շարժման գծերի միջոցով պատկերվում է տեղաշարժվող օբյեկտի ուղղությունը և արագությունը:

3-21. Зона координатная - Coordinate zone / Area - Կոորդինատային գոնա (գոտի) - Երկրի մակերևույթի հատված, որը սահմանափակված է երկու միջօրեականներով և պատկերված հարթության վրա՝ Գաուս-Կրյուգերի ուղղանկյուն կոորդինատային համակարգի պրոյեկցիայով: Գոտին սահմանափակող

միջօրեականների երկայնությունների տարբերությունը 6° կամ 30° է: Գոտու առանցքային միջօրեականը հանդիսանում է արսցիների առանցք, իսկ հասարակածը՝ օրդինատների:

3-22. Зрительная труба (геодезического прибора) - Telescope - Դիտախողովակ (զեռդեզիական սարքավորման) - Գեռդեզիական սարքավորման մաս, որը ծառայում է առարկայի ճշգրիտ դիտարկման և հեռավորությունը որոշելու համար: Այն ունի օբյեկտիվ, օկուլյար և ցանցաթելեր:

3-23. Зуммирование - Zooming - Խոշորացում - Հատակագծի կամ քարտեզի պատկերվող հատվածի տեսողական (վիզուալ) մեծացում կամ փոքրացում՝ չփոխելով տվյալ պատկերի իրադրությունը:

И

И-1. Идентификатор - Identifier / ID / Handle / Descriptor - Նույնացուցիչ - Ուրույն համար, որը վերաբերում է տարածական օբյեկտին: Կարող է վերագրվել ավտոմատ կերպով կամ տրվել օգտագործողի կողմից: Այն միջոց է, որով դիրքորոշված և անորոշ տարածական օբյեկտները կապվում են իրենց վերաբերող տեղեկատվության հետ:

И-2. Избирательное поглощение - Selective absorption - Ընտրողական կլանում - Երևույթ, երբ բազմաթիվ գունային ճառագայթներից կլանվում են որոշակի երկարության ալիքներ, իսկ ճառագայթների մյուս մասն անդրադարձվում կամ թափանցում է:

И-3. Избирательность геоизображений - Selectivity of geoimages - Երկրապատկերների ընտրողականություն - Գրաֆիկական կերպարների հատկություն՝ առանձին վերարտադրելու օբյեկտները, դրանց տարրերն ու հատկությունները, դրանք տարանջատելով իրականում գոյություն ունեցող բարդ միացություններից (ամբողջություններից): Առավելապես հատուկ է անալիտիկ երկրապատկերներին:

И-4. Издание карт - Map publishing - Քարտեզների հրատարակում - Տեխնիկական և գիտական ուղղություն, որը մշակում է քարտեզների, ատլասների և այլ քարտեզագրական ստեղծագործությունների հրատարակման մեթոդները և տեխնոլոգիաները:

И-5. Измерения геодезические - Geodetic measurements - Գեոդեզիական չափումներ - Չափումներ, որոնք իրականացվում են տեղագրագեոդեզիական աշխատանքների արդյունքում: Տարբերում են բացարձակ և հարաբերական չափումներ, ըստ ավտոմատացման աստիճանի՝ վիզուալ և ավտոմատացված, ըստ կիրառված սարքավորումների՝ անկյունային, գծային, կոմբինացված, ըստ մեթոդի՝ ուղղակի, անուղղակի և միասնական:

И-6. Измерения косвенные - Indirect measurements - Անուղղակի չափումներ - Տե՛ս *Косвенные измерения*.

И-7. Измерения необходимые - Required measurements - Անհրաժեշտ չափումներ - Տե՛ս *Необходимые измерения*.

И-8. Измерения неравноточные - Unequal precise measurements - Տարբերվող ճշտության չափումներ - Տե՛ս *Неравноточные измерения*.

И-9. Измерения прямые - Direct measurements - Ուղղակի չափումներ - Տե՛ս *Прямые измерения*.

И-10. Измерения равноточные - Iniformly precise measurements - Միևնույն ճշտության չափումներ - Միանման պայմաններում իրականացված որևէ մեծության բազմակի չափումներ, որոնց արդյունքներն ունեն միևնույն ճշտությունը:

И-11. Изобразительные свойства снимков - Graphic / Decorative attributes of photographs - Նկարների դեկորատիվ հատկություններ - Օբյեկտների փոքր դետալները, գույների և երանգների աստիճանները վերարտադրելու նկարների ունակություն:

И-12. Изогипса - Contoure line - Իզոհիպսա - Տե՛ս *Горизонталь*.

И-13. Изокола - Distortion isograms [*հուն. ισος - մոտ և kolos - կոստրված*] - Իզոկոլ - Երկարությունների, մակերեսների և անկյունների միևնույն չափի աղավաղում ունեցող կետերը միացնող գիծ:

И-14. Изолиния - Isoline / Contour line [*հին հուն. ισος - մոտ*] - Իզոգիծ - Քարտեզագրված ցուցանիշների միևնույն արժեքներով կետերը միացնող գիծ, որն օգտագործվում է անընդհատ ֆիզիկական դաշտերի փոփոխականները քարտեզագրելու նպատակով:

И-15. Изыскания инженерно-геодезические - Engineering-geodetic surveys / Prospectings - Ինժեներագեոդեզիական հետազոտություններ - Տեղանքի մասին գեոդեզիական և տեղագրական տեղեկատվության հավաքագրման և մշակման գործընթաց, որն անհրաժեշտ է ճարտարագիտական օբյեկտի նախագծման և տեղայնացման համար:

И-16. Иконика - Iconics [*հուն. eikon - պատկեր*] - Իկոնիկա - Գիտության և տեխնիկայի ուղղություն, որը զբաղվում է պատ-

կերների տեսությամբ՝ դրանց վերարտադրման, փոխակերպման, կողավորման և ապակողավորման համակարգերի մշակմամբ և կիրառմամբ:

И-17. Иконоактинометрия - Iconoactinometry - Իկոնա-ակտինամետրիա - Իկոնամետրիայի բաժին, որը զբաղվում է ճառագայթման և պատկերների էներգետիկ մեկնաբանության մեթոդներով:

И-18. Иконогеометрия - Iconogeometry - Իկոնաերկրաչափություն - Իկոնամետրիայի բաժին, որը մշակում է պատկերների երկրաչափական պարամետրերի չափման մեթոդները:

И-19. Иконология - Iconology - Իկոնալոգիա - Իկոնիկայի բաժին, որն ուսումնասիրում և մշակում է գծագրական (գրաֆիկական) կերպարների ճանաչման մեթոդներն ու նրանցում պարունակվող տեղեկատվության մշակման և օգտագործման եղանակները:

И-20. Иконометрия - Iconometry - Իկոնամետրիա - Իկոնիկայի բաժին, որը մշակում է պատկերների՝ օդատիեզերական լուսանկարների չափման և նրանց երկրաչափական ու էներգետիկ մեկնաբանության եղանակները:

И-21. Именованный масштаб - Concrete scale - Անվանական մասշտաբ - Ցույց է տալիս, թե հատակագծի 1սմ-ին ինչ երկարություն է համապատասխանում տեղանքում (օրինակ՝ 1սմ-ում 100կմ):

И-22. Индикатриса отражения - Indicatrix of reflection [ֆր. *indiatrice - նշել*] - Անդրադարձման ինդիկատրիս - Լույսի անդրադարձման բևեռային գծապատկերն (դիագրամն) է: Տարբերում են հետևյալ չորս տեսակի անդրադարձման ինդիկատրիսներ՝ հայելային, ցրված կամ դիֆուզ, լույսի աղբյուրի ուղղությամբ առավելագույնս անդրադարձնող և կոմբինացված:

И-23. Индикационное дешифрирование - Indicative interpretation [լատ. *in-dico - ցույց տալ*] - Ինդիկացիոն վերծանում - Վերծանում անուղղակի ինդիկատորների օգտագործմամբ, որի դեպքում լանդշաֆտի որոշակի տեսանելի յուրահատկություններով բացահայտվում են առարկաներ և երևույթներ, որոնք ան-

միջականորեն չեն երևում: Օրինակ՝ հարթավայրային տեղանքների տիեզերական նկարներում պատկերված բուսական ծածկույթով հնարավոր է դատողություններ անել ռելիեֆի մանր ձևերի, գրունտների և հողերի մասին:

И-24. Инженерная геодезия - Engineering geodesy - Ինժեներական գեոդեզիա - Տե՛ս *Геодезия инженерная*:

И-25. Инженерно-геодезические изыскания - Engineering geodetic survey / prospecting - Ինժեներագեոդեզիական հետազոտություններ - Տե՛ս *Изыскания инженерно-геодезические*:

И-26. Инструментальная съемка - Instrumental survey - Գործիքային հանույթ - Տե՛ս *Съемка инструментальная*:

И-27. Инструментальный анализ карт - Tool-making analysis of map - Քարտեզների գործիքային վերլուծություն - Քարտեզների վերլուծություն՝ չափիչ սարքավորումների և մեխանիզմների կիրառմամբ:

И-28. Интерактивные геоизображения - Interactive geoimages - Ինտերակտիվ երկրապատկերներ - Երկրապատկերներ, որոնք կազմվում են օգտագործողի և համակարգչի համագործակցությամբ (տրամախոսություն, դիալոգ):

И-29. Интерактивный картографический Интернет-сервис - Interactive cartographic(al) Internet-service - Քարտեզագրական ինտերակտիվ ծառայություն համացանցում - Մասնագիտացված քարտեզագրական սերվերի ծրագրային միջոցներով տարբեր բովանդակության քարտեզներ կազմելու հնարավորության տրամադրում օգտագործողին:

И-30. Интервал сечения - Interval of cutting / section [*լատ. intervallum - հեռավորություն, հատված*] - Հատույթի միջակայք - Հարևան իզոգծերի նիշերի տարբերությունը:

И-31. Интервал яркостей ландшафта - Interval of landscape brightness - Լանդշաֆտի պայծառության միջակայք - Լանդշաֆտի առավել լուսավոր և մութ օբյեկտների լուսավորվածության կոնտրաստը: Չափվում է $V = B_{\max} / B_{\min}$ մեծությամբ, որտեղ B_{\max} -ն ու B_{\min} -ը լանդշաֆտի առավել և նվազ լուսավորվածության մեծություններն են:

И-32. Интернет - Internet - Համացանց - Միավորված համակարգչային ցանցերի համաշխարհային համակարգ, որի նպատակն է տեղեկատվության պահպանումն ու փոխանցումը: Կառուցված է համացանցային հաղորդակարգերի հավաքածուի՝ ԹԻՍԻՓԻ/ԱյՓԻ (TCP/IP), պահանջներին համապատասխան: Համացանցի հիման վրա աշխատում է «Համաշխարհային սարդոստայն»-ը (World Wide Web, WWW) և տվյալների փոխանցման բազմաթիվ այլ համակարգեր:

И-33. Интернет-атлас - Unternnet-atlas - Համացանցային ատլաս (ինտերնետային ատլաս) - Մեծ թվով էլեկտրոնային քարտեզների ու ատլասների կազմում և տեղաբաշխում համացանցում:

И-34. Интернет-ГИС - Internet-GIS - ԱՏՀ համացանցում - Համացանցային սպասարկում (web-service), որը հիմնված է երկրապատկերների՝ քարտեզների, հատակագծերի, հեռահար գոնդավորման տվյալների վրա: Համակարգ է, որը զուգակցում է ցանցային և ԱՏՀ տեխնոլոգիաները: Օգտագործում է համացանցը որպես տեղեկատվության փոխանցման միջոց, կապ հեռավոր տվյալների հենքերի և ծրագրային մոդուլների հետ: Առավել զարգացած տեսակներն են ամպային հաշվարկները երկրատեղեկատվության ասպարեզում և գեոպորտալները:

И-35. Интернет-использование карт - Internet-employment of maps - Քարտեզների օգտագործում համացանցում - Համացանցի ինտերակտիվ միջավայրում քարտեզագրական տեղեկատվության վերլուծություն (այդ թվում ձևաչափական և մաթեմատիկական վիճակագրական եղանակներով), նոր քարտեզների կազմում:

И-36. Интернет-карта - Internet map - Համացանցային քարտեզ - Տե՛ս *Интернет-Атлас*:

И-37. Интернет-картографирование - Internet-mapping - Քարտեզագրում համացանցում - Վեր-բրաուզերների միջոցով քարտեզագրական պատկերներ ստեղծելու գործողություն:

И-38. Интерполяция горизонталей - Interpolation of contours - Հորիզոնականների միջարկում - Հորիզոնականների անց-

կացում՝ քարտեզի վրա տրված միևնույն բարձրության երկու կետերով:

И-39. Интерпретация геоизображений - Interpretation of geoimages - Երկրապատկերների մեկնաբանում - 1. Կիրառական իկոնիկայի բաժին, որը մշակում է երկրապատկերների օգտագործման գիտական և գործնական եղանակներ: **2.** Երկրապատկերների միջոցով օբյեկտների ուսումնասիրության եղանակ, որը հիմնված է գրաֆիկական պատկերների և օբյեկտների հատկությունների միջև օրինաչափ կապերի օգտագործման վրա: Մեթոդն ընդգրկում է օբյեկտների հայտնաբերման, ճանաչման, դասակարգման եղանակներն, ինչպես նաև քանակական և որակական հատկանիշների որոշումը:

И-40. Интерфейс - Interface - Ինտերֆեյս - Միջոցների ու կանոնների ամբողջություն, որն ապահովում է տեղեկատվական համակարգերի, նրանց բաղադրիչների՝ սարքերի և ծրագրերի փոխգործողությունները, ինչպես նաև օգտագործողի համագործակցությունը համակարգի հետ:

И-41. Интранет - Intranet - Ինտրանետ - Կազմակերպության ներքին համակարգչային ցանց, որն օգտագործվում է ցանցի մասնակիցների կողմից՝ կազմակերպության տեղեկատվության համատեղ օգտագործման կամ փոխանակման նպատակով: Որպես կանոն, ինտրանետ ցանցն ունենում է ելք դեպի արտաքին ցանցեր, այդ թվում՝ դեպի համացանց:

И-42. Информативность условного знака - Information of conventional sign / symbol - Պայմանական նշանի տեղեկունակություն - Օբյեկտի բովանդակային տարրերի քանակային հարաբերությունն է նշանի միջոցով արտահայտված կառուցվածքային տարրերի քանակին:

И-43. Информационное обеспечение - Information support - Տեղեկատվության ապահովում - Տեղեկատվական զանգվածների (տվյալների հենքեր, տվյալների բանկեր և այլ կառուցվածքի տվյալներ) ամբողջություն, կողավորման և դասակարգման համակարգեր, որոնք ծառայում են տվյալների մշակման համակարգերին (ծրագրային և ապարատային ապահովման հետ մեկտեղ):

И-44. Информация - Information - Տեղեկատվություն - Փաստացի տվյալների և նրանց միջև առկա փոխկապակցվածության մասին գիտելիքների ամբողջությունն է, որը կարող է հաղորդվել, պահպանվել, ձևափոխվել, օգտագործվել ամբողջությամբ կամ մասնակիորեն:

И-45. Инфракрасная съёмка - Infrared survey - Ինֆրակարմիր հանույթ - Հանույթ էլեկտրամագնիսական ալիքների 0,75-1,35 մկմ երկարությամբ տիրույթում: Այդ տիրույթի ալիքների միջոցով հանույթ կարելի է իրականացնել օրվա ցերեկային ժամերին:

И-46. Инфракрасное излучение - Infrared radiation - Ինֆրակարմիր ճառագայթում - էլեկտրամագնիսական ալիքների 0,74-2000 մկմ երկարությամբ տիրույթը. բաժանվում է մոտակա (0, 74-2,5 մկմ), միջին (2,5-50 մկմ) և հեռավոր (50-2000 մկմ) ինֆրակարմիր տիրույթների:

И-47. Инфракрасный тепловой диапазон - Infrared thermal range / diapason - Ինֆրակարմիր ջերմային տիրույթ - Երկրի մակերևույթի ճառագայթումը (3-ից մինչև 1000 մկմ երկարությամբ ալիքներ) ջերմության տեսքով, որն առաջանում է լուսային էներգիան ջերմայինի փոխակերպման արդյունքում:

И-48. Инфраструктура (geo)пространственных данных - Infrastructure of (geo)spatial data [լատ. *infra* - ստորե, *տակ* և *structura* - կառուցվածք] - Տարածական (աշխարհագրական) տվյալների ենթակառուցվածք - Ինտեգրացիոն մեխանիզմների, տեխնոլոգիական միջոցների նորմատիվային հենքի ամբողջություն՝ ազգային, ռեգիոնալ և գլոբալ մակարդակներում տարածական տվյալների ռեսուրսների կազմակերպման և արդյունավետ օգտագործման համար: Տարածական տվյալների ենթակառուցվածքն ընդգրկում է հենքային բաղադրիչներ, հենքային տարածական տեղեկատվություն, տարածական տվյալների ստանդարտացում, մետատվյալների հենքեր, տվյալների հասանելիության և փոխանակման մեխանիզմներ:

И-49. Искусственный интеллект - Artificial intellect - Արհեստական բանականություն - Ընդհանուր հասկացություն,

որը նկարագրում է մտածելու գործընթացի մոդելավորումը համակարգչի միջոցով: Այն սովորաբար կապում են մարդու բանականության հետ: Արհեստական բանականության ասպարեզին են պատկանում «էքսպերտային համակարգերի» մշակումը և օգտագործումը, բնական լեզուների, տեսողության և լսողության համակարգչի միջոցով ընկալումը:

И-50. Использование карт - Use of maps - Քարտեզների օգտագործում - Գիտական ուղղություն, որը մշակում է տարբեր ոլորտներում քարտեզագրական ստեղծագործությունների տեսությունը և մեթոդները:

И-51. История картографии - History of of cartography - Քարտեզագրության պատմություն - Ուսումնասիրում է քարտեզագրության մտքի, մեթոդների, քարտեզագրական արտադրության զարգացման պատմությունը, ինչպես նաև քարտեզագրական հնագույն ստեղծագործությունները:

И-52. Источники для создания карт и атласов - Sources for making of maps and atlases - Քարտեզների և ատլասների ստեղծման աղբյուրներ - Դրանց թվին են պատկանում բոլոր տարածակողորդինատային տվյալները, որոնք են՝ աստղագեոդեզիական, ընդհանուր աշխարհագրական և թեմատիկ քարտեզները, կադաստրային տվյալները, դաշտային ուսումնասիրությունների արդյունքները, տնտեսավիճակագրական տվյալները, գրական աղբյուրները, համացանցը և այլն:

И-53. Источники пространственных данных - Sources of spatial data - Տարածական տվյալների աղբյուրներ - Անալոգային և թվային տվյալներն են (քարտեզագրական, հեռազննման ստացիոնար կայաններում կատարված դիտարկումները, վիճակագրական տվյալները և այլն), որոնք հիմք են հանդիսանում ԱՏՀ տեղեկատվական ապահովման համար:

И-54. Источниковедение картографическое - Cartographic source study - Քարտեզագրական աղբյուրագիտություն - Ուսումնասիրում է քարտեզագրական աղբյուրները և մշակում դրանց համակարգման ու գնահատման մեթոդները:

И-55. Исходные (первичные) снимки - Initial photographs -
Ելակետային նկարներ - Դրանք պատկերներ են, որոնք ստաց-
վում են անմիջական հանույթի արդյունքում:

И-56. Исходный геодезический пункт - Initial geodetic point
- Սկզբնական գեոդեզիական կետ - Տե՛ս *Пункт исходный геоде-
зический*:

Կ

Կ-1. Кадастр государственный земельный - State land cadastre - Հողային պետական կադաստր - Համակարգված տեղեկատվություն, որը ստացվում է հողահանդակների պետական կադաստրային հաշվառման, դրանց տեղադիրքի, նպատակային նշանակության և հողերի իրավական կարգավիճակի որոշման արդյունքում:

Կ-2. Кадастр - Cadastre [*լատ. catastrum, capitastrum (caput - գլուխ)*] - Կադաստր - Որոշակի տեսակի օբյեկտների վերաբերյալ անընդմեջ հետազոտությունների կամ պարբերաբար տրվող տեղեկատվության համակարգված հավաքագրում (օրինակ՝ հողային կադաստր, ջրային կադաստր և այլն):

Կ-3. Калибровка снимка - Calibration of photograph - Պատկերի ստուգաճշտում - Նկարից անցանկալի տեղեկատվության հեռացման գործողությունն է: Այդպիսի տեղեկատվության պատճառ կարող են հանդիսանալ տարբեր տեխնիկական խտանների հետևանքով առաջացած տեղեկատվական «աղմուկները»:

Կ-4. Калибровка средств измерений - Calibration of measurement facilities - Չափման միջոցների ստուգաճշտում - Չափման սարքի չափագիտական բնութագրերի համապատասխանեցումը նորմատիվային պահանջներին: Այդ գործողությունն առավելապես նպատակ ունի համապատասխանեցնել չափման արդյունքը չափվող էտալոնային մեծության հետ:

Կ-5. Камеральное дешифрирование снимков - Office interpretation of photographs - Նկարների գրասենյակային վերծանում - Պատկերի վերծանումը նրա ուղղակի կամ անուղղակի հատկանիշներով՝ առանց համեմատելու տեղանքում պատկերված օբյեկտի հատկությունների հետ:

Կ-6. Камеральные работы - Office works [*հին. լատ. camera - գրասենյակ*] - Գրասենյակային աշխատանքներ - Գեոդեզիական գործընթացներ, որոնք իրականացվում են գրասենյակային պայմաններում:

К-7. Карта - Map - Քարտեզ - Երկրագնդի, այլ երկնային մարմինների մակերևույթի փոքրացված, ընդհանրացված պատկերը՝ կառուցված որևէ քարտեզագրական պրոյեկցիայում և կոորդինատային համակարգում: Քարտեզը պայմանական նշանների որոշակի համակարգի միջոցով ցույց է տալիս պատկերվող մակերևույթի վրա գտնվող օբյեկտներն ու երևույթները: Քարտեզը սահմանվում է նաև որպես իրականության մաթեմատիկական մոդել՝ կազմված որոշակի քարտեզագրական պրոյեկցիայում, որը ներկայացված է կերպարներով և պայմանական նշաններով:

К-8. Карта классификации объектов по снимкам - Map of object classification by photographs - Օբյեկտների դասակարգման քարտեզ ըստ նկարների - Տիեզերական նկարների տվյալներով նկարահանված օբյեկտների համակարգչային դասակարգման և քարտեզագրման եղանակ, որն ունի հիմնականում երկու լուծում: Նախապես հավասարեցվում են նկարների պայծառությունները կամ կատարվում է օբյեկտների դասակարգում՝ առանձին նկարների սահմաններում: Այնուհետև դրանք համակցվում են որպես մեկ ընդհանուր քարտեզ:

К-9. Картинное изображение рельефа - Picture image of relief - Ռելիեֆի նկարչական պատկերում - Հին քարտեզներում ռելիեֆի պատկերումը հեռանկարչական եղանակով, որով լանջերն արտահայտիչ դարձնելու համար պատկերվում են ստվերարկման միջոցով:

К-10. Картобиблиография - Map bibliography - Քարտեզամատենագրություն - Քարտեզագրության բաժին, որը զբաղվում է հրատարակված քարտեզների և ատլասների համակարգմամբ ու դրանց ցուցակների կազմմամբ:

К-11. Картограмма - Cartogram - Քարտոգրամ - Հարաբերական վիճակագրական ցուցանիշների պատկերումն՝ ըստ վարչատարածքային բաժանման միավորների:

К-12. Картографическая анимация - Cartographic animation / multiplication - [Ֆր. animation - վերականգնում] - Քարտեզագրական անիմացիա - էլեկտրոնային քարտեզների դինամիկ

հերթականություն, որոնք էկրանին արտահայտում են պատկերված երևույթների և օբյեկտների դինամիկան, էվոլյուցիան ժամանակի և տարածության մեջ:

К-13. Картографическая генерализация - Cartographic generalization - Քարտեզագրական ընդհանրացում - Օբյեկտի գլխավոր տիպիկ հատկանիշների ընտրություն, ընդհանրացում, որն իրականացվում է քարտեզագրի կողմից ընտրության արտոնակարգերին (ցենզերին) և նորմերին համապատասխան, բացի այդ իրականացվում է պատկերվող օբյեկտների քանակական և որակական ցուցանիշների ընդհանրացում, ուրվագծերի պարզեցում՝ խոշոր մասշտաբից փոքր մասշտաբի անցման նպատակով:

К-14. Картографическая мультипликация - Cartographic multiplication - Քարտեզագրական մուլտիպլիկացիա - *Տե՛ս Կարտոграфическая анимация:*

К-15. Картографическая прагматика - Cartographic pragmatics - Քարտեզագրական պրագմատիկա - Քարտեզագրական նշանագիտության (սեմիոտիկայի) բաժին, որն ուսումնասիրում է պայմանական նշանների տեղեկատվական նշանակությունը և ընկալումը քարտեզ օգտագործողի կողմից:

К-16. Картографическая проекция - Cartographic projection - Քարտեզագրական պրոյեկցիա - Երկնային էլիպտիդի մակերևույթը հարթության վրա պատկերելու որոշակի եղանակ: Բազմատեսակ քարտեզագրական պրոյեկցիաները տարբերվում են աղավաղումների բնույթով (հավասար անկյուններով, տարածություններով, մակերեսներով, կամայական), քարտեզագրական ցանցի տեսքով (զլանային, կոնային, ազիմուտային, պայմանական), օժանդակ քարտեզագրական մակերևույթի դիրքով (ուղղահայաց, լայնակի, շեղ): Ք.Պ.-ի ընդհանուր մաթեմատիկական բանաձևը կապում է գեոդեզիական լայնությունները (B) և երկայնությունները (L) հարթության վրա x , y ուղղանկյուն կոորդինատների հետ հետևյալ կերպ՝ $x=f_1(B,L)$; $y=f_2(B,L)$, որտեղ f_1 -ը և f_2 -ը անկախ, միանշանակ և վերջավոր ֆունկցիաներ են:

К-17. Картографическая семантика - Cartographic semantics - Քարտեզագրական սեմանտիկա - Բաժին, որն ուսումնասիրում է պայմանական նշանների և դրանցով պատկերվող առարկաների հարաբերությունները:

К-18. Картографическая семиотика - Cartographic semiotics - Քարտեզագրական նշանագիտություն (սեմիոտիկա) – Քարտեզագրության բաժին, որը մշակում է քարտեզագրական նշանների համակարգերի և պատկերների կառուցման և օգտագործման մեթոդների ընդհանուր տեսությունը: Ընդգրկում է երեք ենթաբաժիններ: Տե՛ս *Картографическая синтактика*, *Картографическая семантика* և *Картографическая прагматика*:

К-19. Картографическая сетка - Cartographic grid / Graticule - Քարտեզագրական ցանց - Միջօրեականների և զուգահեռականների ցանց, որում արտահայտվում են երկայնությունների մեծությունները Գրինվիչի միջօրեականից և լայնությունների մեծությունները՝ հասարակածից:

К-20. Картографическая синтактика - Cartographic syntactics - Քարտեզագրական սինտակտիկա - Քարտեզագրության բաժին, որն ուսումնասիրում է նշանների համակարգերը, նրանց կառուցվածքի և օգտագործման տեսությունները:

К-21. Картографическая стилистика - Cartographic stylistics - Քարտեզագրական ոճաբանություն - Գիտական քարտեզագրության ուղղություն, որն ուսումնասիրում է քարտեզների ձևավորման և պատկերների ներկայացման մեթոդները, արտահայտչականությունը, ոճերը և տեխնոլոգիաները:

К-22. Картографическая топонимика - Cartographic toponymy / Place-name study - Քարտեզագրական տոպոնիմիկա – Գիտական քարտեզագրության բաժին, որն ուսումնասիրում և մշակում է քարտեզում արտահայտվող աշխարհագրական անվանումների, համակարգման, նորմավորման և քարտեզում դրանք արտահայտելու կանոնները:

К-23. Картографическая экстраполяция - Cartographic extrapolation - Քարտեզագրական արտամիջարկում (էքստրապոլյացիա) - Քարտեզագրական վերլուծության արդյունքում

որոշված որևէ երևույթի տարածումն՝ այդ երևույթը չուսումնասիրված տարածքներում կամ ժամանակի մեջ:

К-24. Картографические искажения - Cartographic distortion - Քարտեզագրական աղավաղումներ - Երկրի մակերևույթը հարթության վրա պրոյեկտելու արդյունքում նրա տեղամասերի կամ այնտեղ պատկերված օբյեկտների երկրաչափական հատկությունների աղավաղումներ:

К-25. Картографический интернет-сервер - Cartographic internet-server - Քարտեզագրական համացանց-սերվեր (ինտերնետ-սերվեր) - Սերվերում տեղակայված ցանցային-ծրագրային ապահովում, որը համացանցից օգտվողներին հնարավորություն է տալիս համացանցում հրատարակել տարածական տվյալներ էլեկտրոնային քարտեզների, հեռագնման արդյունքների տվյալների հենքերի տեսքով, ինչպես նաև ինտեգրել տարբեր բովանդակության տարածական տվյալներ: Այդ նպատակով սերվերներն ունենում են կազմակերպված տվյալների կառուցվածք, մետատվյալների համակարգ և տվյալների մշակման գործառնություններ:

К-26. Картографический метод исследования - Cartographic method of investigation - Հետազոտման քարտեզագրական մեթոդ - Քարտեզների վրա պատկերված առարկաների ուսումնասիրման եղանակ, որն իրականացվում է քարտեզներից վերցրած անհրաժեշտ տեղեկատվությամբ:

К-27. Картографический образ - Cartographic shape (form, type) - Քարտեզագրական կերպար - Նշանների տարածական կոմպոզիցիա, որն արտահայտում է իրական կամ վերացական երկրահամակարգերի կառուցվածքը և ընկալելի է օգտագործողի կամ ավտոմատացված համակարգի կողմից:

К-28. Картографическое изображение - Cartographic image - Քարտեզագրական պատկեր - Քարտեզի հիմնական տարրերի՝ օբյեկտների և երևույթների, դրանց տեղաբաշխման և դինամիկայի մասին տեղեկությունների ամբողջություն:

К-29. Картографическое моделирование - Cartographic modelling / Simulation - Քարտեզագրական մոդելավորում -

Այժմյան քարտեզագրության հիմնարար հասկացողություններից մեկը քարտեզների, դրանց համակարգերի կազմումը և վերլուծությունը՝ նպատակ ունենալով իրական աշխարհի մասին ստանալ նոր և համակարգված գիտելիքներ: Քարտեզագրական մոդելավորման առարկա են հանդիսանում օբյեկտիվ իրականությունը՝ նյութական երևույթները, ինչպես նաև աբստրակտ և արհեստական կոնստրուկցիաները: Քարտեզագրական մոդելները բնութագրվում են մաթեմատիկական, կառուցվածքաբովանդակային և նշանային բաղադրիչներով:

К-30. Картография - Cartography [*հուն. χάρτης - պապիրուսից թուղթ + γράφειν - նկարել*] - Քարտեզագրություն - Քարտեզը՝ որպես իրականության պատկեր կազմելու և օգտագործելու մասին գիտություն: Քարտեզագրությունը գիտության, տեխնիկայի և արտադրության համադրության բնագավառ է, ընդգրկում է քարտեզագրական ստեղծագործությունների ուսումնասիրումը, կազմումը և օգտագործումը:

К-31. Картодиаграмма - Diagrammatic map - Քարտեզադիագրամ - Քարտեզի վրա գծապատկերի (դիագրամի) միջոցով վարչատարածքային միավորի սահմաններում որևէ երևույթի գումարային մեծության պատկերումն է:

К-32. Картометрия - Cartometry - Քարտեզաչափություն - Քարտեզագրության բաժին, որն ուսումնասիրում է քարտեզների միջոցով աշխարհագրական օբյեկտների չափերի, ձևերի և կառուցվածքի գնահատման ու հաշվարկման եղանակները:

К-33. Картохема - Sketch map [*հուն. χάρτης - քարտեզ և σύστημα - սխեմա*] - Քարտեզ-սխեմա - Քարտեզ, որի բովանդակությունը ցույց է տրվում պարզեցված, ընդհանրացված տարրերով, ինչի միջոցով աշխարհագրական բարդ տեղեկատվությունը ներկայացվում է առավել պատկերավոր և դյուրըմբռնելի:

К-34. Каталог координат - Catalogue of coordinates - Կոորդինատների գրացուցակ (կատալոգ) - Գեոդեզիական կետերի համակարգված ցուցակ, որում տրվում են կետերի անվանումներն ու դասերը, ուղղանկյուն կոորդինատները, բացարձակ

բարձրությունները և կողմնորոշված կետերի ուղղված դիրեկցիոն անկյունները:

К-35. Каталог географических названий - Catalogue of geographic(al) names [*հուն. κατάλογος - ցանկ, ցուցակ*] – Աշխարհագրական անվանումների գրացուցակ (կատալոգ) – Աշխարհագրական անվանումների ցանկ, որը ենթակա է մշտական համակարգման և թարմացման:

К-36. Качественный фон - Qualitative background – Որակական ֆոն - Քարտեզագրության եղանակ, որի միջոցով վարչական կամ այլ տարածական միավորները ներկայացվում են իրենց սահմաններում տարածում ունեցող երևույթի որակական հատկանիշներով:

К-37. Квадрат геоизображений - “Square” geoimage - Երկրապատկերի «քառակուսի» - Գրաֆիկ, որը ներկայացնում է երկրապատկերների համակարգում փոխադարձ կապերը և հատկությունների փոփոխության օրինաչափությունները:

К-38. Квадротомическая модель - Quadtree / Qtree model - Քառանկյունաչափ մոդել - Տարածական օբյեկտները հիերարխիկ ծառի կառուցվածքի ձևով ներկայացնելու եղանակ, որը հիմնված է տարածքը քառակուսիների բաժանելու եղանակի վրա:

К-39. Квазигеоид - Quasi-geoid - Քվազիգեոիդ («գրեթե գեոիդ») - Օժանդակ մակերևույթ, երկրաչափական տեղն այն կետերի, որոնք ստացվում են ծանրության ուժի պոտենցիալների չափված մեծություններով և տեղադրված են Երկրի ֆիզիկական մակերևույթի կետից ծանրության ուժի ուղղությամբ: Այն համընկնում է օվկիանոսներում և ծովերում գեոիդի (տե՛ս *Դեոիդ*) հետ և երկարաձգվում է մայրցամաքների տակ:

К-40. Квантование - Quantization - Քվանտացում – Պատկերների թվային մշակման նպատակով լուսանկարների պայծառության անընդհատ տիրույթը դիսկրետ աստիճանների բաժանելու գործողություն:

К-41. Километровая линия - Kilometer line - Կիլոմետրային գիծ - Տե՛ս *Километровая сетка*:

К-42. Километровая сетка - Kilometer grid / Coordinates - Կիլոմետրային ցանց - Ուղղանկյուն ցանց, որն անցկացվում է տեղագրական քարտեզների և հատակագծերի վրա: Ուղղաձիգ գծերը զուգահեռ են գեոդեզիական գոտու առանցքային միջօրեականին, իսկ հորիզոնականները՝ հասարակածին:

К-43. Киноголограмметрия - Moviehologrammetry - Կինոհոլոգրամաչափություն - Օբյեկտների փոփոխությունների ցուցանիշների չափում՝ դինամիկ հոլոգրաֆիական պատկերների օգնությամբ:

К-44. Кипрегель - Plane-table alidade [գերմ. *kippen* - շրջել և *regel* - քանոն] - Կիպրեգել - Դիտակով և ուղղաձիգ եզրակողով (լիմբով) գեոդեզիական գործիք, որն օգտագործվում է տեղագրական հանույթի ժամանակ մենզուլայի հետ պլանշետի վրա ուղղություններ գծագրելու, տարածություններ որոշելու և այլ գործողությունների համար:

К-45. Классификация карт - Maps classification - Քարտեզների դասակարգում - Քարտեզների ամբողջության դասակարգման համակարգ՝ ըստ որևէ ընտրված ցուցանիշի:

К-46. Классификация проекций - Projections classification - Պրոյեկցիաների դասակարգում - Դրանք դասակարգվում են ըստ աղավաղման բնույթի և ըստ օգտագործված օժանդակ երկրաչափական մարմինների:

К-47. Классификация топографических карт - Classification of topographic maps - Տեղագրական քարտեզների դասակարգում - Ըստ մասշտաբի տեղագրական քարտեզների դասերն են՝ խոշոր (1:10.000-1:50.000), միջին (1:100.000-1:200.000) և փոքր (1:500.000-1:1.000.000): Աշխարհագրական քարտեզներից տարբերվում են նրանով, որ քարտեզների խմբի բոլոր «թերթերը» և մի «թերթի» բոլոր ուղղություններն ունեն հաստատուն մասշտաբ:

К-48. Клиент - Client - Հաճախորդ - Համակարգիչ, որն օգտագործում է այլ համակարգչի՝ սերվերի կողմից տրամադրվող ռեսուրսները:

К-49. Клиновы́й (пропорциональный) масштаб - Wedge (proportional) scale - Մեպային (համեմատական) մասշտաբ -

Հատուկ գրաֆիկ, որն օգտագործվում է օդալուսանկարների վրա չափված հատվածները քարտեզի մասշտաբով ներկայացնելու համար:

К-50. Клон - Clone [*հին հուն. κλών - կլոն*] - Կլոն - Համակարգ՝ ստեղծված այլ համակարգի օրինակով, որը կարող է լինել ապարատային սարք, ծրագրային միջոց կամ առցանց սերվիս: Ինֆորմատիկայում կլոն են անվանում նաև տրամաբանական (վիրտուալ) և կոշտ սկավառակի բովանդակության պատճենները:

К-51. Количественный фон - Quantitative background - Քանակական ֆոն - Քարտեզագրության եղանակ, որն օգտագործվում է առանձին տարածքներում համատարած երևույթների քանակական տարբերություններն արտահայտելու համար:

К-52. Коллимационная ошибка - Collimation error - Կոլիմացիոն սխալ - Անկյունաչափական գեոդեզիական սարքերի տեխնիկական սխալ, որն առաջանում է օպտիկական և երկրաչափական առանցքների շեղման հետևանքով:

К-53. Колориметрия - Colorimetry - Գունաչափում - Օբյեկտների գունային հատկանիշների չափում և քանակական գնահատում՝ երկրապատկերների վրա:

К-54. Комбинированная съёмка - Combined survey - Կոմբինացված հանույթ - *Տե՛ս Սъемка комбинированная.*

К-55. Комбинированное геоизображение - Combined geoimage - Կոմբինացված երկրապատկեր - Նույն դասին պատկանող երկու տարբեր երկրապատկերների (քարտեզ, լուսանկար, հեռուստանկար) հատկությունների համադրությամբ կազմված երկրապատկեր:

К-56. Коммуникативная функция карты - Communicative function of map - Քարտեզի հաղորդակցական գործառույթ - Քարտեզների հիմնական գործառույթներից մեկը՝ տարածական տեղեկատվության պահպանումն ու հաղորդումն է, որի հիմքում դրվում է տեղեկատվության մաթեմատիկական տեսությունը:

К-57. Компаратор - Comparator [*անգլ. comparator - համեմատող սարք*] - Համեմատիչ (կոմպարատոր) - Չափման գործիք,

որի միջոցով չափված արժեքը համեմատվում է չափանմուշի հետ:

К-58. Комплексная карта - Complex map - Համալիր քարտեզ - Աշխարհագրական քարտեզ, որը համատեղ ներկայացնում է տարբեր փոխկապակցված երևույթներ կամ նույն երևույթների տարբեր հատկություններ, սակայն յուրաքանչյուրն իր ցուցանիշների համակարգում: Օրինակ՝ տարածքի գյուղատնտեսական համալիր քարտեզի վրա կարելի է ցույց տալ վարելահողերի տեսակները և նրանց բերքատվությունը:

К-59. Комплексные профили - Complex profiles - Համալիր կտրվածքներ - Կիրառվում են թեմատիկ քարտեզների վերլուծության համար: Այդպիսի կտրվածքներում համատեղվում են բարձրաչափական, երկրաբանական, հողաբուսական ծածկի և այլ կտրվածքները:

К-60. Компоновка - Montage / assemblage [լատ. componere - ավելացնել, կառուցել, ստեղծագործել] - Դասավորվածք - Քարտեզի շրջանակի ներսում քարտեզագրվող տարածքի, վերնագրի, պայմանական նշանների, մասշտաբի, լրացուցիչ տարրերի փոխադարձ և համամասն տեղաբաշխում:

К-61. Компрессия цифровых снимков - Numerical photographs compression - Թվային նկարների խտացում - Ձևափոխում, որի նպատակը տեղեկատվության խտացումն է՝ արտահայտված բայթերով կամ բիթերով:

К-62. Компьютерная графика - Computer graphics - Համակարգչային գրաֆիկա - Տվյալների մեքենայական մշակման և դուրսբերման տեսակ, որը գրաֆիկական տեսք է տալիս դուրս բերվող տեղեկատվության մեծ մասին: Այս աշխատանքներում համակարգիչն օգտագործվում է որպես պատկերներ սինթեզելու (ստեղծելու) և տեսանելիացնելու գործիք: Համակարգչային գրաֆիկայի ալգորիթմներ լայնորեն օգտագործվում են ԱՏՀ-ում:

К-63. Компьютерная карта - Computer map - Համակարգչային քարտեզ - Քարտեզ, որը ստացվում է ավտոմատացված քարտեզագրման կամ ԱՏՀ միջոցներով՝ օգտագործելով գրաֆիկական արտապատկերման սարքեր (տպիչ և գծագրող սարք):

К-64. Компьютерный стереокомпаратор - Computer stereo-comparator - Համակարգչային ծավալային կոմպարատոր - Համակարգ, որը բաղկացած է համակարգչից, ծավալադիտական ակնոցներից և ծրագրերից, որոնք ապահովում են ծավալադիտական մոդելների չափումներ և ստացված կոորդինատների գրանցումներ: Նախատեսված է թվային նկարների ծավալադիտական չափումների համար:

К-65. Компьютерный анализ карт - Computer map analysis - Քարտեզների համակարգչային վերլուծություն - Իրականացվում է ինտերակտիվ ռեժիմում հատուկ մասնագիտացված ծրագրերի կամ USZ-ի միջոցով:

К-66. Конвертирование форматов - Formats converting - Ձևաչափերի փոխարկում - Տվյալների փոխակերպում մի ձևաչափից մյուսին:

К-67. Конвертирование - Converting [*անգլ. conversion, գերմ. konvertierung* - փոխարկում, փոխակերպում] - Փոխարկում - Մի ձևաչափի տվյալների փոխակերպումն այլ ձևաչափի, որը կրնալվի այլ համակարգերի կողմից:

К-68. Коническая проекция - Conical (Cone) projection - Կոնային պրոյեկցիա - Երկրագնդի մակերևույթի պրոյեկցիան այն հատող կամ շոշափող կոնի մակերևույթին: Տարբերում են նորմալ կոնային պրոյեկցիա, երբ կոնի առանցքը համընկնում է Երկրագնդի պտտման առանցքի հետ, լայնակի կոնային պրոյեկցիա, երբ կոնի առանցքը համընկնում է Երկրագնդի հասարակածի հարթության հետ, և շեղ կոնային պրոյեկցիա, երբ կոնի առանցքն Երկրագնդի հասարակածի հարթության նկատմամբ կազմում է որոշակի անկյուն:

К-69. Конкретность геоизображений - Concreteness of geoimage - Երկրապատկերի կոնկրետություն - Գրաֆիկական կերպարների ունակությունը՝ մանրամասն կերպով արտահայտել իրական օբյեկտների տարածական և ժամանակային յուրահատկությունները, նրանց հարաբերությունների և հատկությունների բազմազանությունը:

К-70. Континуализация - Continualization - Անընդ-

հատացում - Ընդհատվող (դիսկրետ) քարտեզագրական պատկերի վերածումն անընդհատի, որը սովորաբար կապված է «աշխարհագրական դաշտ» հասկացության հետ (օրինակ՝ տարաբնակեցման քարտեզի փոխակերպումը բնակչության խտության քարտեզի):

K-71. Контрастные графические образы - Contrasting graphic images - Կոնտրաստ գրաֆիկական կերպարներ - Գրաֆիկական օբյեկտ, որը միապաղաղ ֆոնի վրա կտրուկ արտահայտվում է իր կառուցվածքի, գծագրի, կապերի յուրահատկությամբ: Դրանք, սովորաբար, ընդհանուր օրինաչափ ֆոնի վրա արտահայտում են անոմալ երևույթներ:

K-72. Контур - Contour / Outline - Եզրագիծ - Տվյալ օբյեկտի մակերևույթի սահմանը:

K-73. Контурные условные знаки - Contour symbols / Conventional signs - Ուրվագծային պայմանական նշաններ - Տե՛ս *Масштабные условные знаки*:

K-74. Координатная зона - Coordinate zone - Կոորդինատային գոտի - Երկրի մակերևույթի հարթ տեղագրական պրոյեկցիա կառուցելու նպատակով օգտագործվող 60 պայմանական գոտիներից մեկը, որի լայնությունը հասարակածով 6 աստիճան է: X-ի առանցքը գոտու կենտրոնական (առանցքային) միջօրեականն է, Y-ինը՝ հասարակածը, իսկ առանցքային միջօրեականի և հասարակածի հատման կետը կոորդինատների սկզբնակետն է:

K-75. Координатная сетка - Coordinate net - Կոորդինատային ցանց - Տե՛ս *Сетка координатная*:

K-76. Координаты - Coordinates - Կոորդինատներ - Թվային մեծություններ, որոնց միջոցով հարթության, մակերևույթի վրա կամ տարածության մեջ որոշվում է կետի տեղադիրքը: Օգտագործվում են ուղղանկյուն (դեկարտյան), բևեռային; սֆերիկ, էլիպսոիդային, աշխարհագրական, հասարակածային և հորիզոնական կոորդինատներ: Տե՛ս *Прямоугольные, Полярные, Сферические, Эллипсоидальные, Географические, Экваториальные, горизонтальные координаты*:

К-77. Координаты географические - Geographic Coordinates - Աշխարհագրական կոորդինատներ - Տե՛ս *Географические координаты*.

К-78. Координаты геодезические - Geodetic coordinates - Գեոդեզիական կոորդինատներ - Անկյունային մեծություններ (լայնություն և երկայնություն), որոնք որոշում են երկրային գնդաձև մակերևույթի վրա գտնվող կետերի (օբյեկտների) դիրքը՝ հասարակածի հարթության և սկզբնական միջօրեականի նկատմամբ:

К-79. Координаты геоцентрические - Geocentric coordinates - Երկրակենտրոն կոորդինատներ - Մեծություններ, որոնք որոշում են կետի դիրքը կոորդինատային համակարգում, որի կենտրոնը համընկնում է Երկրի զանգվածի կենտրոնի հետ:

К-80. Координаты небесные - Celestial coordinates - Երկնային կոորդինատներ - Թվային տվյալներ, որոնք արտահայտում են կետի դիրքը երկնոլորտում: Գեոդեզիական աստղագիտության մեջ կիրառություն ունեն հորիզոնական և հասարակածային կոորդինատային համակարգեր:

К-81. Координаты полярные - Polar coordinates - Բևեռային կոորդինատներ - Տե՛ս *Полярные координаты*.

К-82. Координаты прямоугольные (декартовы) - Rectangular coordinates (decarts) - Ուղղանկյուն կոորդինատներ (դեկարտյան) - Տե՛ս *Прямоугольные координаты*.

К-83. Координаты сферические - Spherical / Globular coordinates - Սֆերիկ կոորդինատներ - Տե՛ս *Сферические координаты*.

К-84. Копийность - Copy number - Պատճենավորվելու ունակություն - Տեղանքի՝ իրական օբյեկտների արտաքին տեսքը ճշգրիտ արտաբերելու հասկություն, որն առավելապես օգտագործվում է որպես օդային և տիեզերական պատկերների բնութագրիչ:

К-85. Корректирование карт - Maps correcting - Քարտեզների ճշգրտում - Քարտեզի որակի տեխնիկական վերա-

հսկողություն, քարտեզի բովանդակության մանրամասն ստուգում և ուղղում:

К-86. Косвенные измерения - Indirect measurements - Անուղղակի չափումներ - Գեոդեզիական չափումների եղանակ, երբ չափվող մեծության արժեքը ստանում են համանման այլ մեծությունների չափման արդյունքներից, այլ կերպ ասած՝ որպես այլ անմիջականորեն չափվող մեծությունների ֆունկցիա:

К-87. Космическая съёмка - Space survey - Տիեզերական հանույթ - Տիեզերքից՝ 150 կմ և ավելի բարձրություններից տիեզերական տարբեր սարքավորումներով իրականացվող հանույթ:

К-88. Космический фотоснимок - Space photograph - Տիեզերական լուսանկար - Լուսանկար, որը ստացվել է տիեզերքից՝ լուսանկարահանման արդյունքում:

К-89. Космическое фотографирование - Space photography - Տիեզերական լուսանկարահանում - Երկրի մակերևույթի, Լուսնի, մոլորակների, այլ տիեզերական մարմինների լուսանկարների ստացում՝ արհեստական արբանյակներից և տիեզերանավերից:

К-90. Коэффициент яркости - Brightness factor - Պայծառության գործակից - Անդրադարձնող մակերևույթի ինտեգրալ պայծառության (B) հարաբերությունը էտալոնային ցրող մակերևույթի պայծառությանը (B_0)՝ միանման լուսավորման պայմաններում ($\beta_v = B/B_0$):

К-91. Красочная проба - Color proof - Գունային նմուշ - Բոլոր տպագրական ձևերի՝ գծիկային, գունային և կիսագունային առանձնատիպ:

К-92. Красочный оригинал - Color original - Գունային բնօրինակ - Վերջնական գունային գուգակցումների մշակման արդյունքում ստեղծված օրինակ, որը պատկերացում է տալիս ապագա քարտեզի գեղարվեստական և բովանդակային հատկությունների մասին:

К-93. Кривые спектральной яркости - Spectral brightness curves - Սպեկտրալ պայծառության կորեր - Սպեկտրալ պայծա-

ռության գործակիցը, որը ներկայացված է աղյուսակների և գրաֆիկների տեսքով:

К-94. Круговое визирование - Circular alignment - Շրջանաձև դիտասկետում - Տե՛ս *Визирование круговое*:

К-95. Крупномасштабная географическая карта - Large scale geographical map - Խոշորամասշտաբ աշխարհագրական քարտեզ - 1:200.000 մասշտաբից խոշոր մասշտաբի քարտեզներ:

К-96. Крупномасштабные топографические карты - Large scale topographical maps - Խոշորամասշտաբ տեղագրական քարտեզներ - 1:10.000-1:50.000 մասշտաբի քարտեզներ:

К-97. Крутизна склона - Gradient / Slope steepness - Լանջի թեքություն - Անկյուն՝ լանջի ուղղության և հորիզոնական հարթության միջև:

Л-1. Лазерная съёмка - Lazer survey - Լազերային հանույթ - Հանույթ՝ ալիքի ֆիքսված երկարություն ունեցող (մոնոքրոմատիկ) ճառագայթի կիրառմամբ: Ալիքի անփոփոխ երկարությունը հնարավորություն է տալիս ճշտել Երկրի և այլ մոլորակների ուղեծրերի պարամետրերը, ինչպես նաև որոշել երկրագնդի առանձին կառուցատարրերի (բլոկների) հարաբերական տեղաշարժը:

Л-2. Легенда - Legend [լատ. *legenda* - ընթերցման, ընթերցմամբ] - Լեգենդ (բացատրագիր) - Քարտեզի կարևոր բաղադրիչ, պայմանական նշանների և դրանց բացատրությունների համակարգ, քարտեզի բացատրագիր:

Л-3. Лимб - Limb [լատ. *limbus* - սահման, եզր] - Լիմբ - Եզրագիծ, բաժնօղակ՝ գլանային կամ կոնային ձևի օղակ կամ սկավառակ, բաժանված հավասար մասերի՝ մեծամասամբ անկյունային աստիճանների, ընդհանրի և այլն: Անկյան մեծությունն ընթերցվում է անմիջապես լիմբից կամ լրացուցիչ մասերի՝ նոնյուսի (ճշտասանդղակի) կամ վերների օգնությամբ:

Л-4. Линейка визирная - Sighting line - Դիտասնեռման քանոն - Տե՛ս *Визирная линейка*:

Л-5. Линейный масштаб - Linear (graphical) scale - Գծային մասշտաբ - Գրաֆիկական մասշտաբ, որը մասշտաբային քանոնի նման բաժանված է հավասար մասերի:

Л-6. Линия - Line - Գիծ (գծային օբյեկտ) - 1. Հիմնական՝ չորս տիպի տարածական օբյեկտներից մեկը, որը կազմվում է հայտնի կոորդինատներով՝ առնվազն երկու կետերի հաջորդականությամբ: 2. գծային-գրաֆիկական, տարածական օբյեկտների և գրաֆիկական պարզագույն հասկացությունների («պրիմիտիվ»-ների) ընդհանրական անվանումը:

Л-7. Линия нулевых искажений - Line of zero distortions - Զրոյական աղավաղման գիծ - Քարտեզագրական պրոյեկցիայի գիծ, որի բոլոր կետերում բացակայում են աղավաղումները, և պահպանված է գլխավոր մասշտաբը:

Л-8. Логико-математическая генерализация - Logic-mathematical generalization - Տրամաբանամաթեմատիկական ընդհանրացում - Երկրապատկերների ձևականացված (ֆորմալացված) ալգորիթմական ընդհանրացում:

Մ

Մ-1. Магнитное поле Земли - Earth's magnetism - Երկրագնդի մագնիսական դաշտ - Մագնիսական դաշտ, որն առաջացնում են Երկրի ներքին, խորքային գործոնները: Երկրային մագնիսի առանցքի հատման կետերը Երկրի մակերևույթի հետ կոչվում են մագնիսական բևեռներ: Մագնիսական դաշտի ուժագծերի պրոյեկցիաները, որոնք միացնում են երկու բևեռները կոչվում են մագնիսական միջօրեականներ: Մագնիսական դաշտը կրում է Արեգակի ազդեցությունը. լուսավորված կողմում սֆերիկ է, իսկ գիշերային կողմում ունի երկարաձգված տեսք: Մագնիսական դաշտով օժտված են նաև այլ մոլորակներ:

Մ-2. Магнитное склонение - Magnetic (Compass) declination - Մագնիսական հակում - Անկյուն, որը կազմված է ազատ կախված մագնիսական սլաքի և երկրի մակերևույթի վրա դիտարկվող կետով անցնող հորիզոնական հարթություններով:

Մ-3. Магнитный азимут - Magnetic azimuth - Մագնիսական ազիմուտ - Որևէ գծի մագնիսական ազիմուտն անկյուն է, որը կազմվում է այդ գծի հորիզոնական պրոյեկցիայով և մագնիսական միջօրեականով՝ հաշված վերջինիս հյուսիսային ծայրից՝ ժամացույցի սլաքի պտտման ուղղությամբ:

Մ-4. Магнитный меридиан - Magnetic meridian - Մագնիսական միջօրեական - Տվյալ կետով անցնող Երկրի մագնիսական դաշտի միջինացված ուժային գծի պրոյեկցիան է Երկրի մակերևույթի վրա: Աշխարհագրական հյուսիսի ուղղությամբ և երկրի մագնիսական դաշտի լարվածության հորիզոնական բաղադրիչով կազմված անկյունը կոչվում է խոտորում:

Մ-5. Магнитный полюс - Magnetic pole - Մագնիսական բևեռ - Պայմանական կետ, որտեղ երկրային մագնիսի առանցքը հատվում է Երկրի մակերևույթի հետ: Այդ կետում մագնիսական դաշտի ուժային գծերը մագնիսական առանցքի հետ կազմում են 90° անկյուն:

Մ-6. Магнитный румб - Magnetic rhumb - Մագնիսական ռումբ - Անկյուն, որը կազմված է կողմնորոշվող ուղղությամբ և

մագնիսական միջօրեականի մոտակա (հյուսիսային կամ հարավային) ուղղությամբ: Ռումբերը հաշվարկվում են 0-ից մինչև 90°:

M-7. Макрокоманда - Macro command - Մակրոհրահանգ - Օրագրային լեզվով օգտագործողի կողմից կազմված որոշակի գործողություն կատարելու ալգորիթմ:

M-8. Марка - Mark - Նիշ - Գեոդեզիական հիմնակետի կենտրոնի մաս, որի կոորդինատները վերագրվում են հիմնակետին:

M-9. Маркшейдерия - Mine surveying / Markshejderiya [գեր. mark - նշան, սահման + scheider - որոշող] - Մարկշեյդերիա (մարկշեյդերական գործ) - Լեռնային գիտության և տեխնիկայի ճյուղ, որը զբաղվում է երկրի ընդերքում և նրան համապատասխանող մակերևույթի հատվածներում տարածական երկրաչափական չափումներով և քարտեզների, հատակագծերի վրա դրանց պատկերմամբ: Օգտագործվում է լեռնային և երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ:

M-10. Маршрут - Route [գեր. marschrout, ֆր. marche - ընթացք, առաջ շարժվել և route - ճանապարհ, երթուղի] - Երթուղի - Գծային օբյեկտ, կառուցված աղեղներից կամ դրանց մասերից, որը ցույց է տալիս շարժման ուղղությունն աշխարհագրական կոորդինատների կամ կողմնորոշող առարկաների նկատմամբ՝ նշելով նաև սկզբնակետն ու վերջնակետը:

M-11. Маршрутное воздушное фотографирование - Route aerial photography - Երթուղու օդային լուսանկարահանում - Գծային օբյեկտների (ճանապարհներ, գետեր, ծովափեր) լուսանկարահանում, որը կատարվում է նկարների մասնակի փոխադարձ վերադրումով՝ ընդհատումներից խուսափելու նպատակով:

M-12. Масштаб геоизображения - Geomage scale - Երկրապատկերի մասշտաբ - Երկրապատկերի փոքր հատվածի երկարության հարաբերությունը համապատասխան հատվածի երկարությանն՝ էլիպտիդի կամ գնդի մակերևույթի վրա:

M-13. Масштаб карты - Map scale [գեր. maßstab - չափման փայտ. maß - չափ, stab - փայտ] - Քարտեզի մասշտաբ - Քարտեզի

վրա պատկերված օբյեկտի չափսերի և Երկրի մակերևույթին գտնվող նույն օբյեկտի իրական չափսերի հարաբերությունը: Մասշտաբը ներկայացվում է կոտորակով, որի համարիչը հավասար է 1-ի, իսկ հայտարարի թիվը ցույց է տալիս թե որքան անգամ է քարտեզի վրա պատկերը փոքրացված:

М-14. Масштаб пропорциональный - Proportional scale - Համեմատական մասշտաբ - Հատուկ գրաֆիկ, որն օգալուսանկարի վրա չափված գծերի հատվածները քարտեզի մասշտաբի է վերածում:

М-15. Масштабирование - Ranging / Scaling - Մասշտաբավորում - 1. Ընթացիկ մասշտաբի փոփոխություն, որն իր հերթին առաջացնում է քարտեզի օբյեկտային կազմի փոփոխություն: 2. Պատկերների չափերի փոփոխություն՝ պահպանելով նրանց համեմատական չափերը: Օգտագործվում է համակարգչային գրաֆիկայում՝ պատկերներ մշակելու նպատակով:

М-16. Масштабные (или контурные) условные знаки - Scale (or contour) symbols / Conventional signs - Մասշտաբային (կամ ուրվագծային) պայմանական նշաններ - Նշաններ, որոնք, քարտեզի մասշտաբին համապատասխան, ներկայացնում են տեղանքի առարկաները և նրանց չափերը:

М-17. Математико-картографическое моделирование - Mathematical-cartographic modeling / Simulation - Մաթեմատիկաքարտեզագրական մոդելավորում - Մաթեմատիկական և քարտեզագրական մոդելների համադրում՝ քարտեզներ կազմելու և օգտագործելու գործընթացում:

М-18. Математическая картография - Mathematical-cartography - Մաթեմատիկական քարտեզագրություն - Քարտեզագրության ուղղություն, որն ուսումնասիրում է քարտեզների մաթեմատիկական հիմքի տարրերը: Զբաղվում է քարտեզագրական պրոյեկցիաների մշակման տեսությամբ, մեթոդներով և դրանց գործնական օգտագործման եղանակներով:

М-19. Математическая основа карт - Mathematical base of map - Քարտեզների մաթեմատիկական հիմք - Քարտեզի մաթեմատիկական տարրերի ամբողջություն, որը որոշում է կապը

Երկրի կամ այլ երկնային մարմիններ պատկերող իրական մակերևույթի և հարթ քարտեզագրական պատկերի միջև: Քարտեզի մաթեմատիկական հիմքի տարրերն են՝ քարտեզագրական պրոյեկցիան, մասշտաբը, կոորդինատային ցանցը, գեոդեզիական հիմքը և դրանց բոլորի տեղադրումը քարտեզի շրջանակի սահմաններում:

M-20. Машинная графика - Computer drawing - Մեքենայական գրաֆիկա - 1. Տեխնիկական առարկա, որը զբաղվում է տեղեկատվության մուտքագրման, փոխակերպման և համակարգչային գրաֆիկական սարքերի միջոցով տեսանելիացման եղանակների, ակտրիթմների և ծրագրերի մշակմամբ: **2.** Համակարգչային պատկերներ մուտքագրելու, մշակելու, դուրս բերելու միջոցների և համակարգերի ամբողջությունը: Երկրապատկերների կառուցման հիմնական եղանակներից մեկը:

M-21. Мелкомасштабная географическая карта - Small scale geographical map - Փոքրամասշտաբ աշխարհագրական քարտեզ - 1:1.000.000-ից փոքր մասշտաբի աշխարհագրական քարտեզ:

M-22. Мелкомасштабная топографическая карта - Small scale topographic map - Փոքրամասշտաբ տեղագրական քարտեզ - 1:500.000-1:1.000.000 մասշտաբի տեղագրական քարտեզ:

M-23. Мензула - Plane-table [լատ. mensula - սեղան] - Մենզուլ (Գծագրասեղանիկ) - Դաշտային գծագրական սեղանիկ, որը բաղկացած է գծագրական տախտակից (պլանշետ), եռոտանուց և դրանք միմյանց ամրացնող հենակից:

M-24. Мензольная съемка - Plane-table survey - Մենզուլային հանույթ - Տեղանքի մանրամասն հատակագիծ կազմելու համար գործողությունների ամբողջություն, որն իրականացվում է մենզուլայի և իրեն պատկանող գործիքների միջոցով: Մենզուլային հանույթի դեպքում քարտեզագրական պատկերման անհրաժեշտ չափումները կատարվում են անմիջականորեն դաշտում՝ եռոտանու վրա դրված հատուկ սեղանիկի՝ մենզուլայի և կիպրեզեղի միջոցով:

M-25. Мензольный ход - Plane-table course - Մենզուլային ընթացք - Տե՛ս *Ход мензольный*:

М-26. Меридиан географический - Geographical meridian - Աշխարհագրական միջօրեական - Երկրի մակերևույթի և նրա պտտման առանցքով անցնող հարթության հատման գիծը: Որևէ միջօրեականի վրա գտնվող բոլոր կետերն ունեն միևնույն աշխարհագրական երկայնությունը:

М-27. Меридиан геодезический - Geodetic meridian - Գեոդեզիական միջօրեական - Երկրային էլիպսոիդի մակերևույթի հատման գիծը, որն անցնում է կետի նորմալով և էլիպսոիդի փոքր առանցքին զուգահեռ հարթությամբ:

М-28. Меридиан Гринвичский - Meridian of Greenwich - Գրինվիչի միջօրեական - Տե՛ս *Гринвичский меридиан*:

М-29. Меридиан магнитный - Magnetic meridian - Մագնիսական միջօրեական - Տե՛ս *Магнитный меридиан*:

М-30. Меридиан небесный - Celestial meridian - Երկնային միջօրեական - Երկնոլորտի մեծ շրջանագիծ, որն անցնում է երկնային բևեռներով, զենիթով և հատում է հորիզոնը հարավում և հյուսիսում:

М-31. Мерная лента - Measuring ribbon - Չափիչ ծապավեն - Տեղանքում գծերի երկարությունը չափելու գործիք՝ ճկուն պողպատյա ծապավեն 15-30 մմ լայնությամբ և 20 մ երկարությամբ:

М-32. Местность - Terrian / Locality - Տեղանք - Երկրի մակերևույթի հատված, որն ընդգրկում է բոլոր տարրերը՝ ռելիեֆ, բնակավայրեր, ճանապարհներ, գետային ցանց, բուսականություն, գրունտներ և այլն:

М-33. Местные предметы - Local objects - Տեղանքի առարկաներ - Երկրի մակերևույթին տեղաբաշխված ինչպես բնական (գետ, անտառ և այլն), այնպես էլ արհեստական (բնակավայր, ճանապարհ և այլն) ծագման օբյեկտներ, որոնք տեղագրական քարտեզի վրա արտահայտվում են համապատասխան պայմանական նշաններով:

М-34. Место нуля (вертикального круга) - Zero place (of vertical circle) - Ջրոյի տեղը (ուղղաձիգ շրջանի) - Գեոդեզիական գործիքի (թեոդոլիտ, կիպրեզել և այլն) ուղղաձիգ շրջանի հաշվարկ, երբ դիտախողովակի տեսանելի առանցքը, ուղղաձիգ

շրջանի դեպքում, և ալիդադի գլանային առանցքը գտնվում են հորիզոնական դիրքում:

M-35. Метаданные - Metadata - Մետատվյալներ - Տվյալներ տվյալների մասին. կատալոգներ, տեղեկատուներ, գրանցամատյաններ և մետատվյալների հենքեր:

M-36. Метахронная блок-диаграмма - Metachronous - block-diagram - Մետաքրոն բլոկ-դիագրամ - Գրաֆիկ, որը բնութագրում է ուսումնասիրվող առարկայի վիճակի փոփոխությունը ժամանակի (օր, ամիս և այլն) ընթացքում: Դիագրամի առանցքներից մեկը ներկայացնում է ժամանակը:

M-37. Метка - Mark / Marking - Նշան - 1. Տարածական շերտի օբյեկտին վերաբերող նկարագրական տեղեկատվություն, որը պահպանվում է տվյալների հենքում՝ որպես նրա ատրիբուտ: **2.** Պոլիգոնի ներքին կետ, որը ծառայում է իդենտիֆիկատորի միջոցով այն տվյալների հենքի հետ կապակցելու համար: **3.** Ծրագրավորման լեզուներում՝ կառուցվածք, որը օպերատորին անուն է վերագրում և ներառում է իդենտիֆիկատորը:

M-38. Методика выполнения измерений - Measuring methods - Չափումներ կատարելու մեթոդիկա - Գործողությունների և կանոնների ամբողջություն, որի կատարումն ապահովում է չափումների արդյունքի ստացում՝ սխալի հայտնի մեծությամբ:

M-39. Метрология - Metrology [հուն. μέτρον - չափ + հին հուն. λόγος - միտք, պատճառ] - Չափագիտություն - Գիտություն՝ չափումների մեթոդների և միջոցների, իրանց միասնությունը և պահանջվող ճշտությունն ապահովող ուղիների մասին:

M-40. Микроволновый диапазон - Microwave diapason - Միկրոալիքային տիրույթ - 1-ից մինչև 10.000 մմ (կամ 1 մմ-10 ս) երկարության էլեկտրամագնիսական ալիքների միջակայք:

M-41. Микрометр окулярный - Ocular micrometer [հուն. mikros - փոքր + մետր] - Ակնապակու միկրոմետր - Սարք՝ գեոդեզիական գործիքների ցուցմունքների ճշգրիտ ընթերցման համար, որը տեղադրվում է դիտակի ակնապակու մասում:

M-42. Микротриангуляция - Microtriangulation [լատ. triangulatio - եռանկյունիներով կազմված] - Մանրաեռանկյու-

նավորում (միկրոտրիանգուլյացիա) - Մանրամասն՝ 1 և 2 կարգի եռանկյունային (տե՛ս *Триангуляция*) գեոդեզիական խտացման ցանց՝ տեղագրական հանությունների համար (տախեումետրական, հորիզոնական և այլն): Կազմվում է 0,3-1 կմ երկարությամբ կողմերով եռանկյունիներից: Ցանցի յուրաքանչյուր 15-20 եռանկյունիներց մեկը պետք է հենվի գեոդեզիական բազիսային կետերի կամ եռանկյունաչափական ցանցի կողմի վրա:

М-43. Многозональная съёмка - Multiband survey - Բազմատիրոյթ հանույթ - Հանույթ, որն իրականացվում է տեսանելի և ինֆրակարմիր տիրույթի 3-7 նեղ սպեկտրալ տիրույթներում (0,1-0,2 մկմ): Երբեմն, առավել բարձր տարածական լուծաչափի նկարներ ստանալու համար, համադրվում է պանաքրոմատիկ տիրույթում կատարված հանույթի հետ:

М-44. Многозональный принцип съёмки - Multiband principle of survey - Բազմատիրոյթ հանույթի սկզբունք - Ճառագայթման միաժամանակյա գրանցում՝ մի քանի սպեկտրալ տիրույթներում:

М-45. Многоспектральная съёмка - Multispectral survey - Բազմասպեկտրալ հանույթ - Կիրառվում է ոչ լուսանկարչական տարբերակում, որի էությունը կայանում է սպեկտրի մի քանի տիրույթներում ճառագայթների միաժամանակյա գրանցմամբ (միաժամանակ ընդգրկելով ուլտրամանուշակագույն, տեսանելի, ամբողջ ինֆրակարմիր և մասամբ նաև սպեկտրի միկրոալիքային տիրույթը): Բազմասպեկտրալ սարքավորումը կարող է ներառել մինչև 13 և ավելի հանույթային ալիքներ:

М-46. Многоцветные освещенные шкалы - Multi-coloured illuminated scale - Բազմագույն լուսավորվող սանդղակներ - Ռեչիեֆի պատկերման համար օգտագործվող գունային և լուսավորության սանդղակներ, որոնցում, ըստ բարձրության, ավելանում է լուսավորվածությունը կամ փոփոխվում է գույնի հագեցվածությունը: Այս սանդղակները ռեչիեֆին հաղորդում են ներդաշնակություն և լայնորեն կիրառվում են նաև ուսումնական քարտեզների ձևավորման ժամանակ:

М-47. Модель пространственных данных - Spatial data model - Տարածական տվյալների մոդել - Տե՛ս *Представление пространственных данных*:

М-48. Модель “спагетти” - Model “spagetty” - «Սպագետի» մոդել - Գծային և մակերեսային տարածական օբյեկտների երկրաչափության նկարագրությամբ վեկտորային ներկայացման տարատեսակ՝ աղեղների կամ սեգմենտների չկանոնավորված ամբողջություն:

М-49. Мониторинг - Monitoring [*լատ. monitor - վերահսկողություն իրականացնող*] - Մշտադիտարկում (մոնիտորինգ) - Առարկայի կամ գործընթացի (հատկապես բնական) դիտարկման, տվյալների մշակման և պահպանման շարունակական պրոցես: Մոնիտորինգի խնդիրն է հետևել դիտարկվող առարկայի, նրա վիճակի կամ հատկությունների փոփոխմանը, դրանց արդյունավետ կառավարման նպատակով:

М-50. Мониторинг топографический - Topographic monitoring - Տեղագրական մշտադիտարկում (մոնիտորինգ) - Որոշակի տեղանքի կամ օբյեկտի տեղագրական փոփոխությունների հայտնաբերման և զնահատման նպատակով տեղագրական քարտեզների ժամանակային փոփոխությունների կազմում և վերլուծություն:

М-51. Моноиконическая визуализация - Monoiconic viewing / Display - Մոնոիկոնիկ տեսանելիացում - Որևիցե երկրապատկերի հիման վրա օբյեկտի գրաֆիկական մոդելավորում (արտապատկերում):

М-52. Морфометрия - Morphometry - Ձևաչափություն - Օդային և տիեզերական պատկերների վերծանման ասպարեզում օբյեկտների ձևի և կառուցվածքի ցուցանիշների որոշում՝ երկրապատկերների հիման վրա:

М-53. Мультипликация картографическая - Cartographic animation - Քարտեզագրական մուլտիպլիկացիա - Տե՛ս *Анимация картографическая*:

М-54. Мысленная графическая среда - Mental graphic environment - Մտավոր գրաֆիկական միջավայր - Համակարգ,

որը կազմված է մտավոր (նաև ճանաչողական) գրաֆիկական կերպարներից:

M-55. Мысленная карта - Mental map - Մտավոր քարտեզ - Տեղանքի (կամ օբյեկտի) կերպար, որը ստեղծվել է անձի կամ անձանց պատկերացմամբ:

Ի-1. Навигация - Navigation [*լատ. navigatio, navigo - նավով* /*տղացող*] - Նավիգացիա - Գիտություն, որը զբաղվում է նավերի, ինքնաթիռների, տիեզերանավերի, այժմ նաև վերգետնյա փոխադրամիջոցների ուղիներն ընտրելու և օբյեկտի գտնվելու վայրը որոշելու մեթոդների մշակմամբ և կիրառմամբ:

Ի-2. Навстар Джи Пи ЭС - Navstar GPS (Navigation System with Time Find Ranging Global Positioning System) - Նավաթար Ջի Փի Էս գլոբալ դիրքորոշման համակարգ - ԱՄՆ-ի արքայակային նավիգացիոն համակարգ, որը հնարավորություն է տալիս չափել տարածություն, ժամանակ և տեղադիրք Դաբլյու Ջի Էս (WGS) 84 համակարգում, ինչպես նաև որոշել շարժվող առարկաների տեղը և արագությունը Երկրի վրա ու մերձերկրյա տարածության մեջ:

Ի-3. Наглядность - Visibility - Դիտողականություն - Երկրապատկերների անմիջական դիտարկման կամ կարդալու միջոցով օբյեկտների և երևույթների մասին պատկերացում ստանալու հնարավորություն:

Ի-4. Наглядные знаки - Visible marks (signs) - Իրազննման նշաններ - Պայմանական նշաններ, որոնք բնութագրվում են նշանի ընդհանրությամբ, դյուրընկալմամբ և ճանաչմամբ՝ ասոցացվելով պատկերվող օբյեկտի հետ (օրինակ՝ ինքնաթիռի նշանը նշանակում է օդանավակայան, տուրիստական վրանը՝ հանգրստի գոտի (քեմփինգ) և այլն):

Ի-5. Надписи на карте - Inscriptions on map, legend - Քարտեզի մակագրություններ - Քարտեզի յուրօրինակ տեղեկատու, որը նրա բովանդակության կարևոր տարրերից մեկն է. Բացատրում է պատկերը, ցույց տալիս նրա քանակական և որակական բնութագրիչները՝ ծառայելով որպես տվյալների ստացման տեղեկատու:

Ի-6. Наземная стереофотограмметрическая (фототеодолитная) съемка - Land stereophotogrammetric (phototheodolite) survey - Վերգետնյա ծավալային լուսանկարաչափական (ֆոտոթեոդոլիտային) հանույթ - Ֆոտոթեոդոլիտի միջոցով իրականաց-

վող հանույթ, որը ներառում է բարձրորակ օբյեկտիվով չափիչ ֆոտոխցիկ: Կիրառվում է բարձր լեռնային շրջաններում ժամանակակից ռելիեֆագոյացման գործընթացների ուսումնասիրման և խոշորամասշտաբ հանույթի նպատակով:

Н-7. Назначение карты - Map purpose - Քարտեզի նշանակություն - Այն պայմանավորվում է քարտեզի նպատակով և ուղղվածությամբ:

Н-8. Накидной монтаж аэрофотоснимков - Mosaic of aerophotos - Օդալուսանկարների վերադիր մոնտաժում - 1. Կոնտակտային տպվածքների իրար ծածկող հատվածների համատեղում՝ մեկը մյուսի հետ, ինչպես մեկ երթուղու, այնպես էլ՝ հարևան երթուղիների երկայնքով: 2. Հարթակի վրա հավաքված օդալուսանկարների կոնտակտային տվյալներ, որոնք օգտագործվում են երթուղիների և նկարների որակը գնահատելու համար:

Н-9. Начальный меридиан - Prime meridian / Standard meridian - Սկզբնական միջօրեական - Տե՛ս *Гринвичский меридиан*.

Н-10. Небесные координаты - Celestial coordinates - Երկնային կոորդինատներ - Տե՛ս *Координаты небесные*.

Н-11. Небесный меридиан - Celestial meridian - Երկնային միջօրեական - Տե՛ս *Меридиан небесный*.

Н-12. Невязка - Discrepancy - Անկապակցություն (Անկապտելիություն, Անկապք) - Տեսական և չափված արժեքների աննշան տարբերություն, որն առաջանում է չափման ժամանակ սխալների անխուսափելիության հետևանքով:

Н-13. Необходимые измерения - Required measurements - Անհրաժեշտ չափումներ - Չափումների նվազագույն (ամենակարևոր) քանակություն, որն անհրաժեշտ է որևէ մեծություն բավարար ճշտությամբ որոշելու համար: Այդ քանակությունը որոշվում է ըստ մաթեմատիկական հայտանիշների:

Н-14. Непрерывность - Continuity - Անընդհատություն - Ամբողջական գրաֆիկական կերպարի պայմաններից մեկը, որը

դրսևորվում է երկրապատկերների վրա՝ ընդհատումների, դատարկությունների բացակայությամբ:

Н-15. Неравноточные измерения - Unequal precise measurements - Տարբերվող ճշտության չափումներ - Որևէ մեծության բազմակի չափումներ, որոնք իրականացվում են ոչ միանման պայմաններում, ինչի հետևանքով չափման արդյունքները տարբեր են լինում:

Н-16. Нивелир - Level [ֆր. *niveau - հարթաչափ*] - **Նիվելիր** - Գեոդեզիական գործիք, որն օգտագործվում է երկրաչափական նիվելիրացման նպատակով մի քանի կետերի միջև բարձրությունների տարբերության որոշման համար: Գործիքն ամրացվում է եռոտանու վրա, ունի դիտակ, որը կարող է պտտվել հորիզոնական հարթության մեջ, ունի նաև ճշգրիտ հարթաչափ:

Н-17. Нивелирная сеть - Leveling network - Նիվելիրային ցանց - Տե՛ս *Сеть нивелирная*:

Н-18. Нивелирный ход - Leveling course - Նիվելիրային ընթացք - Տե՛ս *Ход нивелирный*:

Н-19. Нивелирование - Leveling - Նիվելիրացում - Որևէ պայմանական մակարդակի նկատմամբ երկու և ավելի կետերի հարաբերական բարձրությունների կամ վերազանցումների որոշում, որը կախված է օգտագործված գործիքներից: Տարբերում են նիվելիրացման հիդրոստատիկ, հիդրոդինամիկ, երկրաչափական, եռանկյունաչափական կամ գեոդեզիական, ֆիզիկական կամ բարոմետրական և ռադիոլոկացիոն տեսակներ:

Н-20. Нивелирование барометрическое - Barometric leveling - Բարոմետրական նիվելիրացում - Նիվելիրացման տեսակ, որը հիմնված է մթնոլորտային ճնշման փոփոխության վրա՝ կախված բարձրությունից: Իրականացվում է չհետազոտված տարածքներում՝ փոքրամասշտաբ բարտեզագրման դեպքում:

Н-21. Нивелирование геометрическое - Geometric leveling - Երկրաչափական նիվելիրացում - Երկրի մակերևույթի կետերի բարձրությունների որոշումը ելակետի նկատմամբ՝ հորիզոնական ճառագայթի օգտագործմամբ, որի չափումն իրականացվում

է նիվելիրով և չափման կետում ուղղաձիգ տեղադրված չափա-
ձողի օգնությամբ:

Н-22. Нивелирование гидростатическое - Hydrostatic leveling - Հիդրոստատիկ նիվելիրացում - Նիվելիրացման տեսակ, որը հիմնված է ֆիզիկական այն օրենքի վրա, ըստ որի՝ հաղորդակցվող անոթներում հեղուկն ունի միևնույն մակարդակը:

Н-23. Нивелирование поверхности - Leveling of surface - Մակերևույթի նիվելիրացում - Իրականացվում է հարթավայրային տեղանքում՝ ռելիեֆի պատկերմամբ ճշգրիտ պլաններ ստանալու նպատակով, իսկ չափվող կետերի դիրքերը պլանում որոշվում են թեոդոլիտային հանույթի գծերով: Տարբերում են քառակուսիներով, զուգահեռ ուղիղներով և ռելիեֆի բնորոշ գծերով մակերևույթի նիվելիրացումներ:

Н-24. Нивелирование простое - Prime / Simple leveling - Պարզ նիվելիրացում - Երկրաչափական նիվելիրացում, որի դեպքում վերազանցումներն որոշվում են գործիքի մեկ տեղակայման կետից:

Н-25. Нивелирование сложное - Complex / Composite leveling - Բարդ նիվելիրացում - Երկրաչափական նիվելիրացում, որի դեպքում վերազանցումները որոշվում են սարքավորման մի քանի տեղակայման կետերից:

Н-26. Нивелирование тригонометрическое (геодезическое) - Geodetic leveling - Եռանկյունաչափական (գեոդեզիական) նիվելիրացում - Երկրի մակերևույթի կետերի բարձրությունների տարբերությունների որոշում՝ ճառագայթի (դիտասևեռման գիծ) երկարության և թեքության անկյան չափված մեծություններով:

Н-27. Номенклатура карты - Map nomenclature [*լատ. nomenclatura - անունների ցուցակ, ցանկ*] - Քարտեզի անվանացուցակ - Քարտեզի առանձին թերթերի համարակալում. Յուրաքանչյուր քարտեզ սահմանափակվում է շրջանակով: Որպես տեղագրական քարտեզների շրջանակներ ծառայում են զուգահեռականներն ու միջօրեականները:

Н-28. Номограмма - Nomogram / Alignment chart [*հուն. νομοσ - օրենք*] - Նոմոգրամ - Ֆունկցիայի գրաֆիկ, որի օգնու-

թյամբ, առանց հաշվարկների, կարելի է ստանալ ֆունկցիայի մոտավոր արժեքը:

Н-29. *Норма отбора* - Sample rate - Ընտրության նորմա - Քարտեզի ընդհանրացման ժամանակ պահպանվող օբյեկտների համար սահմանված միջին հարաբերական չափի ցուցանիշ, որով կարգավորվում է քարտեզի բեռնվածությունը:

Н-30. *Нормальная высота сечения* - Normal contour interval - Հատույթի նորմալ բարձրություն - Քարտեզի հորիզոնականներով պատկերված ռելիեֆի հատույթի բարձրությունը, եթե այն հավասար է մասշտաբի 0,02 մասին (օրինակ՝ քարտեզի 1:25.000 մասշտաբի դեպքում՝ 5 մ):

Н-31. *Нуль Кронштадтского футштока* - Datum of Kronshtadt staff - Կրոնշտադտի ֆուտշտոկի զրո - ՌԴ-ում և ՀՀ-ում բացարձակ բարձրությունների հաշվարկման սկիզբ (Բալթյան բարձրությունների համակարգ), որն իրենից ներկայացնում է Բալթիկ ծովի միջին մակարդակը Ֆիննական ծոցում: Դուրս է բերվել բազմաթիվ չափումների արդյունքում:

Օ

Օ-1. Обзорность - Visibility - Տեսադաշտի ընդգրկում - Տարածք կամ ժամանակահատված, որն ընդգրկում է մեկ երկրապատկեր:

Օ-2. Обновление карт (планов) - Update / Renew of maps (plans) - Քարտեզների (հատակագծերի) թարմացում - Հնացած տեղագրական քարտեզների բովանդակության համապատասխանեցումը տեղանքի ներկա վիճակին:

Օ-3. Обработка геоизображений - Processing of geoimages - Երկրապատկերների մշակում - Երկրապատկերների որակի բարձրացման («աղմուկների» հեռացում, ֆիլտրում, ցայտագունության բարձրացում), դրանց ձևափոխության (սուպերպոզիցիա, սինթեզում), դրանցից քանակական և որակական տեղեկատվություն ստանալու մեթոդների խումբ:

Օ-4. Обработка результатов геодезических измерений - Processing of of geodetic measurements data - Գեոդեզիական չափումների արդյունքների մշակում - Գործընթաց, որի հիմնական մասն են կազմում չափման արդյունքների հաշվարկային գործողությունները: Այն իրականացվում է ստացված տվյալները փոխադարձաբար համաձայնեցնելու և օգտագործման նպատակով անհրաժեշտ տեսքով պատկերելու համար:

Օ-5. Обследование пунктов геодезической сети - Survey of geodetic network stations - Գեոդեզիական ցանցի հիմնակետերի ստուգում - Ցանցի հիմնակետերի և նրանց արտաքին ձևավորման վիճակի հետազոտություն, որը կատարվում է տեղանքում:

Օ-6. Общегеографические карты - Geographical maps - Ընդհանուր աշխարհագրական քարտեզներ - Քարտեզներ, որոնք արտահայտում են տեղանքի բաղադրիչների ամբողջությունը, օգտագործվում են տեղանքի ուսումնասիրման, բազմաթիվ գիտական և կիրառական խնդիրների լուծման ժամանակ: Այդ քարտեզներում տեղանքի բոլոր բաղադրիչները հավասարաչափ տեսանելի են:

Օ-7. Общий земной эллипсоид - General Earth's ellipsoid / Terrestrial ellipsoid - Ընդհանուր երկրային էլիպսոիդ - Տես

Эллипсоид общий земной.

О-8. **Объектив** - Objective / Lens - Օբյեկտիվ - Գեոդեզիական գործիքների դիտակի օպտիկական համակարգի մաս, որն իրենից ներկայացնում է ուսայնակ կամ ուսայնակների համակարգ և ստեղծում է օբյեկտի հակառակ պատկերը:

О-9. **Объемное геоизображение** - Three-dimensional geoimage - Ծավալային երկրապատկեր - Եռաչափ պատկեր, որն ստեղծում է օբյեկտի ծավալի և ռելիեֆի տպավորություն՝ ռելիեֆային քարտեզ, բլոկ-դիագրամ:

О-10. **Оверлей** - Overlay - Վերադրում - 1. ԱՏՀ թեմատիկ շերտերի (երկու և ավելի) միմյանց վրա վերադրման գործողություն, որի արդյունքում ձևավորվում է գրաֆիկական կոմպոզիցիա կամ մեկ ածանցյալ շերտ, որն իր մեջ ներառում է սկզբնական շերտերի տարածական օբյեկտները, դրանց տեղագրությունը և աստիճանները, սկզբնական օբյեկտների աստիճանների հանրահաշվական կամ տրամաբանական ածանցյալ արժեքները: 2. Անալիտիկ գործողությունների խումբ:

О-11. **Одиарная аэрофотосъемка** - Single aerial photography - Միանվագ օդալուսանկարային հանույթ - Ոչ մեծ տարածքների ընտրողական լուսանկարահանում՝ մենահատ լուսանկարներով:

О-12. **Однозначность геоизображений** - Univocacy of geoimages - Երկրապատկերի միարժեքություն - Քարտեզագրական մոդելի հատկություն, ըստ որի մոդելի յուրաքանչյուր (x, y) կոորդինատներով կետին վերագրվում է պատկերվող հատկանիշի (z) միայն մեկ արժեք $(z=F(x, y))$: Նկարների վրա պատկերվող տարրին համապատասխանում է սպեկտրալ պայծառության (c) միայն մեկ արժեք $(c = P(x, y))$:

О-13. **Одномаршрутная аэросъемка** - Single course aerial mapping - Մեկ երթուղով օդահանույթ - Գծային օբյեկտների (գետեր, ճանապարհներ, սառցադաշտեր և այլն) լուսանկարահանում:

О-14. **Однородные графические образы** - Homogeneous graphic images - Համասեռ գրաֆիկական կերպարներ - Կերպար-

ներ, որոնք միմյանց նման են կառուցվածքով, գծագրով, կապերով և ձևաչափական տեսքով:

Օ-15. Окна прозрачности атмосферы - Atmosphere "transparency windows" - Մթնոլորտի «թափանցիկության պատուհաններ» - Ալիքների երկարության տիրույթներ, որտեղ էլեկտրամագնիսական ճառագայթումը չի կլանվում մթնոլորտի կողմից և անցնում է նրա միջով: Օպտիկական տիրույթում (0,001-1000 մկմ) առավել մեծ նշանակություն ունեն թափանցիկության պատուհանները՝ տեսանելի (0,4-0,8 մկմ) և ինֆրակարմիր (3-5 մկմ և 8-12 մկմ) տիրույթներում:

Օ-16. Окрестность - Vicinity / Neighbourhood - Շրջակայք - Որպես տարածք դիտարկվող կետային օբյեկտին հարող տիրույթ, որտեղ կարող են գտնվել այլ օբյեկտներ՝ «հարևան» (մոտակա) դիտարկվողին:

Օ-17. Окуляр - Ocular / Eyepiece - Օկուլյար (ակնապակի) - Աչքի կողմն ուղղված գեոդեզիական գործիքների դիտակի օպտիկական համակարգ, որը կազմված է երկու կամ ավելի ոսպնյակներից: Նախատեսված է պատկերը մեծացնելու համար:

Օ-18. Оперативное картографирование - Online / Operational mapping - Օպերատիվ քարտեզագրություն - Իրական ժամանակի կամ դրան մոտ ռեժիմում քարտեզների կազմում և օգտագործում՝ օգտագործողին ընթացող երևույթների մասին արագ և ժամանակին տեղեկացնելու նպատակով:

Օ-19. Описания по картам - Description by maps - Նկարագրություն քարտեզների միջոցով - Նկարագրությունը քարտեզների վերլուծության ավանդական և ընդունված եղանակ է, որի նպատակն է երևույթների տեղաբաշխումն ու դրանց փոխհարաբերությունների բացահայտումը:

Օ-20. Опознак - Identification mark - Ճանաչման կետ - Օղալուսանկարների վրա եզրագծային կետ՝ տեղանքի նույն կետը ճանաչելու համար: Ճանաչման կետերի կոորդինատները և բարձրությունները որոշվում են դաշտային չափումներով: Դրանք ծառայում են որպես օդատեղագրական հանույթի աշխատանքների հիմնավորում:

О-21. Оптическая ось аэрофотоаппарата - Aerial camera optical axis - Օդալուսանկարչական խցիկի օպտիկական առանցք - Ուղիղ գիծ, որն անցնում է օբյեկտիվի կենտրոնով և ուղղահայաց է լուսանկարի հարթությանը:

О-22. Оптический диапазон - Optical range / optical spectrum - Օպտիկական տիրույթ - 0,001-1000 մկմ երկարությամբ էլեկտրամագնիսական ալիքների տիրույթ:

О-23. Орбита космического летательного аппарата - Space aircraft orbit - Տիեզերական թռչող սարքի ուղեծիր - Հետագիծ, որով շարժվում է տիեզերական թռչող սարքը: Այն բնութագրվում է ձևով, թեքությամբ, բարձրությամբ, Արեգակի հարթության նկատմամբ դիրքով և մեկ պտույտի տևողությամբ:

О-24. Ориентирный пункт - Landmark point - Կողմնորոշիչ հիմնակետ - Տե՛ս *Пункт ориентирный*:

О-25. Ориентирование - Orientation / Pointing [*լատ. oriēns - աճման կարգով, որը նշանակում է ծագող Արեգակ, արևելք*] - Կողմնորոշում - Դիրքի սահմանումը տարածության մեջ (ի սկզբանե հորիզոնի կողմերի նկատմամբ, մասնավորապես՝ դեպի արևելք):

О-26. Ортодромия - Orthodromy / orthodromics / great circle [*հին հուն. ὀρθός - ուղիղ + δρόμος - վազք, ճանապարհ*] - Օրթոդրոմ - Երկրի մակերևույթի երկու կետերի միջև ամենակարճ ուղին: Նավարկման խնդիրների համար Երկրագունդն ընդունվում է ինչպես գունդ, իսկ օրթոդրոմիա՝ որպես մեծ շրջանի աղեղ:

О-27. Ортотрансформирование - Ortho-transformation - Օրթոփոխակերպում - Պատկերի վրա ռեխիեֆով պայմանավորված երկրաչափական աղավաղումների վերացում՝ օրթոլուսանկարներ, օրթոլուսաքարտեզներ, օրթոլուսահատակագծեր կազմելու նպատակով:

О-28. Ортоотропная (Ламбертовская) индикатриса отражения - Orthotropic (Lambert) reflection indicatrix - Անդրադարձման (Համբերտի) օրթոտրոպային ինդիկատրիս - Ճառագայթների ցրման ինդիկատրիս՝ տարրական համասեռ մակերևույթից, որի

անհարթությունների չափերը մեծ են ընկնող ճառագայթների ալիքի երկարությունից: Այս դեպքում ճառագայթների ցրումը կատարվում է բոլոր ուղղություններով:

О-29. Освещенность земной поверхности - Land surface illuminance - Երկրի մակերևույթի լուսավորվածություն - Երկրային միավոր մակերեսին ընկնող լուսային էներգիայի քանակը, որը հիմնականում ձևավորվում է ուղիղ և ցրված արեգակնային ճառագայթումից:

О-30. Основа карт географическая - Geographical base of maps - Քարտեզների աշխարհագրական հիմք - Թեմատիկ քարտեզների ընդհանուր աշխարհագրական տարրեր, որոնք չեն պատկանում թեմատիկ բովանդակությանը, սակայն անհրաժեշտ են քարտեզի ընկալման համար:

О-31. Основа карт геодезическая - Geodetic base of maps - Քարտեզների գեոդեզիական հիմք - Գեոդեզիական տվյալների ամբողջություն, որն անհրաժեշտ է քարտեզներ կազմելու համար: Դրանց թվին են պատկանում կոորդինատային համակարգը և այդ համակարգով որոշված գեոդեզիական կետերի կոորդինատները:

О-32. Основа карт математическая - Mathematical base of maps - Քարտեզների մաթեմատիկական հիմք - *St'u* *Математическая основа карт*:

О-33. Основные геодезические работы - Basic geodetic works - Հիմնական գեոդեզիական աշխատանքներ - Գեոդեզիական աշխատանքներ, որոնց նպատակը պետական գեոդեզիական և բարձունքային ցանցի ստեղծումն ու ծանրության ուժի արագացման որոշումն է:

О-34. Острота зрения второго рода - Second kind visual acuity - Տեսողության երկրորդ կարգի սրություն - Նվազագույն դիտման անկյան դեպքում երկու զուգահեռ ուղիներն առանձին տեսնելու աչքի ունակություն (45"):

О-35. Острота зрения первого рода - First kind visual acuity - Տեսողության առաջին կարգի սրություն - Նվազագույն դիտման անկյան դեպքում (45") երկու լուսավոր կետեր տեսնելու աչքի

ունակություն, որը երկրորդ կարգի տեսողությունից երկու անգամ ավելի թույլ է:

О-36. Острота монокулярного зрения - Monocular visual acuity - Մոնոկուլյար տեսողության սրություն - Տե՛ս *Острота зрения первого рода*:

О-37. Отвес - Plumb - Ուղղալար - Մեխանիկական գործիք, որը ցույց է տալիս ուղղաձիգ ուղղությունը և ծառայում է ողղաձիգ հարթության, ինչպես նաև եռոտանու վրա օպտիկական գործիքների դիրքի շտկման համար:

О-38. Отклонение магнитной стрелки - Deflection of the magnetic needle - Մագնիսական սլաքի շեղում - Անկյուն, որը գտնվում է կոորդինատային ցանցի ուղղաձիգ գծի և մագնիսական միջօրեականների միջև: Հաշվարկվում է կոորդինատային ցանցի գծի հյուսիսային ծայրից և համարվում է դրական (նշանը +), եթե մագնիսական սլաքի հյուսիսային ծայրը շեղված է դեպի արևելք: Հակառակ վիճակում շեղումը համարվում է բացասական (նշանը -):

О-39. Отметка - Mark - Նիշ - Բացարձակ կամ հարաբերական բարձունքային թվային արժեք:

О-40. Отмывка рельефа - Relief "washing" / Scrubbing - Ռելիեֆի ստվերարկում - Քարտեզի վրա ռելիեֆի պատկերման եղանակ, որն իրականացվում է ստվերների տեսողական ընկալման օրինաչափությունների հիման վրա:

О-41. Относительная высота - Elevation - Հարաբերական բարձրություն - Տե՛ս *Высота относительная*:

О-42. Относительная ошибка - Relative error - Հարաբերական սխալ - Տե՛ս *Ошибка относительная*:

О-43. Отражательная способность объекта - Object reflectance / Object albedo - Օբյեկտի անդրադարձնող ունակություն - Մեծություն, որը բնութագրում է մակերևույթին կամ երկու միջավայրի սահմանին ընկնող էլեկտրամագնիսական ճառագայթումն անդրադարձնելու ունակությունը:

О-44. Отражение от расчлененной (шероховатой) поверхности - Reflection from dissected (rough) surface - Անդրադարձ

մասնատված (անհարթ) մակերևույթից - Երկրի մակերևույթին ընկնող ճառագայթներն առավելապես անդրադառնում են ճառագայթման աղբյուրի ուղղությամբ: Նման կերպ լույսն անդրադարձնում են գյուղատնտեսական կուլտուրաներով, մարգագետիններով, անտառներով և այլ բուսականությամբ ծածկված տարածքները, ինչպես նաև վարած հողերը:

Օ-45. Оформление карт - Appearance design of maps - Քարտեզների ձևավորում - Գիտական ուղղություն, որը մշակում է քարտեզագրական ստեղծագործության ձևավորման գիտական հիմունքները, դրանց յուրահատկությունները և դրույթները, որոնք կիրառվում են տարբեր բովանդակության ատլասների և քարտեզների նախագծման ժամանակ:

Օ-46. Оценка достоверности результатов классификации объектов по снимкам - Certainty estimation of object classification results by photographs - Նկարների միջոցով օբյեկտների դասակարգման արդյունքների հավաստիության գնահատում - Դասակարգման եզրափակիչ փուլի գործողություն, որով կիրառվող եղանակից անկախ որոշվում է դասակարգման արդյունքների ընդունելիությունը:

Օ-47. Оценка карты - Estimation of map - Քարտեզի գնահատում - Քարտեզագրական ստեղծագործության գնահատում՝ նրա հատկությունների, որակի և որոշակի խնդիրների լուծման համար՝ ըստ պիտանելիության աստիճանի վերլուծության: Որպես գնահատականներ են ծառայում մասշտաբի և քարտեզագրական պրոյեկցիայի ընտրությունը, գիտական հիմնավորվածությունը, բովանդակության ամբողջականությունը և հավաստիությունը, երկրաչափական ճշտությունը, պայմանական նշանների տրամաբանությունը, ձևավորման և տպագրության որակը:

Օ-48. Ошибка измерения - Error of measurement - Չափման սխալ - Չափման արդյունքի շեղումն է չափվող մեծության իրական արժեքից: Միավները կարող են լինել կոպիտ, սիստեմատիկ և պատահական:

Օ-49. Ошибка относительная - Relative error - Հարա-

բերական սխալ - Չափման սխալի հարաբերությունն է չափվող մեծությանը, որն օգտագործվում է գծային մեծությունների չափումների գնահատման համար:

Օ-50. *Ошибка предельная - Maximum error / Limit of error* - Սահմանային սխալ - Սխալ, որը սահմանված հավանականությամբ չպետք է գերազանցի չափումների բացարձակ սխալի մեծությունը:

Օ-51. *Ошибка средняя квадратическая - Average quadratic error* - Միջին քառակուսային սխալ - Չափման արդյունքների ճշտության առավել որակյալ վիճակագրական չափանիշ:

Օ-52. *Ошибка средняя - Average error* - Միջին սխալ - Հավասարաճիշտ չափումների սխալների բացարձակ մեծությունների միջին թվաբանականը, որն օգտագործվում է որպես չափման ճշտության չափանիշ:

II

II-1. Падающая тень - Falling / Casted shadow - Ընկնող ստվեր - Օբյեկտի կողմից այլ հարևան օբյեկտների վրա ընկնող ստվեր, որը կարող է տարբեր չափով ծածկել լուսավորվող մակերեսները: Վերջինիս ուրվագծերը որոշվում են լույսի ճառագայթի ուղղությամբ, առարկայի ձևով և չափերով, հարևան օբյեկտի մակերեսի դիրքով, որի վրա ընկնում է ստվերը:

II-2. Палетка - Surveyor's plane / table [*ֆր. palette - թերթիկ, ժապավեն*] - Պալետկա - Գծագրված վանդակներով թափանցիկ թերթիկ, որն օգտագործվում է քարտեզների ու հատակագծերի, ինչպես նաև այլ գեոդեզիական գծագրերի մակերեսները հաշվարկելու և/կամ պատճենահանելու համար:

II-3. Параллакс - Parallax [*հուն. παραλλάξ, παραλλαγή - փոփոխություն, հաջորդականություն*] - Պարալաքս - Մոլորակի մակերևույթի հատման գիծն է՝ հասարակածին զուգահեռ հարթությամբ: Ձուգահեռականի բոլոր կետերն ունեն միևնույն աշխարհագրական լայնությունը: Ձուգահեռականների երկարությունները տարբեր են՝ նվազում են հասարակածից դեպի բևեռներ:

II-4. Параллель - Parallel - Ձուգահեռական - Մոլորակի մակերևույթի հատման գիծը հասարակածին զուգահեռ հարթությամբ: Ձուգահեռականի բոլոր կետերն ունեն միևնույն աշխարհագրական լայնությունը: Ձուգահեռականների երկարությունները տարբեր են՝ նվազում են հասարակածից դեպի բևեռներ:

II-5. Паспорт аэросъемки - Aerial mapping certificate - Օդահանույթի անձնագիր - Գրավոր փաստաթուղթ, որտեղ գրանցվում են օդահանույթի մասին տվյալներ՝ հանույթի պայմանների և ժամանակի, լուսանկարահանման բարձրության, երթուղիների սխեմայի, լուսանկարների տեղաբաշխման, դրանց փոխադարձ ծածկումների և այլնի մասին:

II-6. Пассивная аэрокосмическая съемка - Passive aerospace survey - Պասիվ օդատիեզերական հանույթ - Անդրադարձվող արեգակնային կամ Երկրի սեփական ճառագայթման գրանցումը:

П-7. Первичные аэросъемочные материалы - Primary / Initial aerial surveying materials - Օդահանույթի առաջնային նյութեր - Արտահայտվում է օդանեզատիվների, օդաֆիլմերի, կոնտակտային տպվածքի և վերարտադրողական մոնտաժի տեսքով:

П-8. Периферийные устройства - Peripheral (outlying) devices - Արտաքին սարքեր - Լրացուցիչ և օժանդակ սարքեր, որոնք միացվում են համակարգչին՝ նրա գործառույթներն ընդլայնելու նպատակով: Հիմնականում դրանք տվյալների մուտքագրման և դուրսբերման սարքեր են:

П-9. Перспективная аэросъемка - Perspective aerial mapping - Հեռանկարային օդահանույթ - Հանույթ, որն իրականացվում է ուղղաձիգ գծի նկատմամբ լուսանկարչական խցիկի օպտիկական առանցքի մեծ թեքվածության պայմաններում (200 և ավելի):

П-10. Перспективное воздушное фотографирование - Perspective aerial photography - Հեռանկարային օդային լուսանկարահանում - Տե՛ս *Перспективная аэросъемка*:

П-11. Перспективный аэроснимок - Perspective aerial photograph - Հեռանկարային օդանկար - Տե՛ս *Аэроснимок перспективный*:

П-12. Печатание карты - Map printing - Քարտեզի տպագրություն - Քարտեզի վերարտադրության պրոցեսը՝ տպագրական նմուշների օգտագործմամբ:

П-13. Пикет - Stake / Station / Picket [*ֆր. piquet - փայտիկ՝ արված մի ծայրից*] - Պիկետ - Գեոդեզիայում՝ գծային օբյեկտների 100 մ քայլով տեղանքում տեղադրված նշակետեր:

П-14. Пикетаж - Stationing - Պիկետաժ - Պիկետների՝ տեղանքում տեղադրված հանույթի կամ չափանշման կետերի համակարգ:

П-15. Пиксел - Pixel [*անգլ. picture - նկար + element տարր*] - Պիքսել - Պատկեր կազմող նվազագույն տարր, որն ստացվում է պատկերի ընդհատավորման (դիսկրետացման) կամ ռաստրացման միջոցով: Պիքսելներն ունեն ուղղանկյան ձև և տարբեր չափեր, որոնցով բնութագրվում է պատկերի լուծելիության չափը:

П-16. План местности - Terrain plan - Տեղանքի հատակագիծ - Տեղանքի որևէ հատվածի առավել խոշոր մասշտաբի պատկեր, որի դեպքում Երկրի մակերևույթի կորությունը հաշվի չի առնվում:

П-17. Планиметр - Planimeter - Պլանիմետր (Մակերեսաչափ) - Սարք, որը նախատեսված է քարտեզի կամ հատակագծի վրա պատկերների մակերեսների չափման համար:

П-18. Плановая аэросъемка - Flat aerial mapping - Հարթ (հատակագծային) օդային հանույթ - Հանույթ, որն իրականացվում է լուսանկարչական խցիկի օպտիկական առանցքի ուղղաձիգ դիրքում:

П-19. Плановое воздушное фотографирование - Flat aerial photography - Հարթ (հատակագծային) օդային լուսանկարահանում - Տե՛ս *Плановая аэросъемка*:

П-20. Плановый аэроснимок - Flat aerial photograph - Հարթ (հատակագծային) օդանկար - Տե՛ս *Аэроснимок плановый*:

П-21. Планшет - Plate [*ֆր. planche - տախտակ կամ այլուժինաթերթիկ*] - Պլանշետ - 1. Ամուր հիմքի վրա ամրացված խիտ թղթի էջ, որը նախատեսված է տեղագրական հանույթ իրականացնելու համար: 2. Մենզուլայի հատված, որի վրա ամրացնում են գծագրական հիմքը կամ լուսանկարչական պլանը:

П-22. Плоское геоизображение - Plane geoinage - Հարթ երկրապատկեր - Երկչափ երկրապատկեր, որի բոլոր տարրերը գտնվում են մեկ հարթության վրա (պլան, քարտեզ, լուսանկար):

П-23. Площадная аэросъемка - Sheet aerial mapping / survey - Մակերեսային օդահանույթ - Հանույթ, որը տարածքը ծածկում է փոխադարձ զուգահեռ ուղղագիծ երթուղիներով կատարված օդանկարներով:

П-24. Площадное воздушное фотографирование - Sheet aerial photography - Մակերեսային օդային լուսանկարահանում - Տե՛ս *Площадная аэросъемка*:

П-25. Проверка геодезических инструментов - Geodetic instruments calibration / testing - Գեոդեզիական գործիքների ստուգում - Գործողություններ, որոնք ուղղված են գեոդեզիական

գործիքների երկրաչափական և օպտիկամեխանիկական ցուցանիշների ստուգմանը:

П-26. Поверхность - Surface - Մակերևույթ - Եռաչափ օբյեկտ, տարածական չորս (կետային, գծային, հարթ մակերեսային օբյեկտների հետ միասին) հիմնական տիպի օբյեկտներից մեկը, որը բնորոշվում է ոչ միայն պլանային կոորդինատներով, այլ նաև Z ապիլկատով ու կոորդինատների եռյակով - *Տե՛ս Цифровая модель рельефа*):

П-27. Поверхность уровенная - Level surface - Մակարդակային մակերևույթ - Մակերևույթ, որը բոլոր կետերում ուղղահայաց է ուղղաձիգ ուղղությանը: Դա օվկիանոսի մակերևույթն է: Մեխանիկայի տեսանկյունից այն ծանրության ուժի հավասար պոտենցիալի մակերևույթ է:

П-28. Подготовка карты к изданию - Preparation of map for edition - Քարտեզի պատրաստումը հրատարակման - Քարտեզ կազմելու միջանկյալ փուլերից մեկն է, որի արդյունքում կազմվում է տպագրության պահանջներին համապատասխան երկրորդային բնօրինակ: Այս փուլում կատարվում են նաև տպագրման պրոցեսին օժանդակող աշխատանքներ, ինչպես նաև գծային և գունային նմուշների պատրաստում:

П-29. Подъем аэроснимков - Raising of aerial photographs - Օդանկարների մշակում - Օդանկարների վրա ընդունված տեղագրական նշաններով, մատիտի օգնությամբ, ընդգծվում են կարևոր տեղական առարկաները, ինչպես նաև գրվում են բնակավայրերի, գետերի, ճանապարհների անունները:

П-30. Подъем карты - Raising of map - Քարտեզի մշակում - Քարտեզի վրա կարևոր, կողմնորոշիչ և այլ առարկաների ու գծերի նշումը գույներով:

П-31. Познавательная карта - Cognitive map - Ճանաչողական քարտեզ - Մեկ անձի կամ անձանց խմբի պատկերացմամբ ստեղծված տեղանքի նկարագիրը, որը կազմվում է իրականության ճանաչման և պատկերման հայեցակարգի ձևավորման ընթացքում: Տերմինը հաճախ օգտագործվում է որպես «մտավոր քարտեզի» հոմանիշ:

П-32. Показатели, характеризующие достоверность классификации - Factors, describing authenticity of classification - Ցուցանիշներ, որոնք բնութագրում են դասակարգման հավաստիությունը - Միավների մատրից, որը հաշվարկվում է ստուգողական տեղամասերի տվյալներով (դրանք չեն համընկնում էտալոնային հատվածների հետ, որոնք օգտագործվել են ուսուցանող նմուշների ստեղծման համար):

П-33. Поле зрения зрительной трубы - Window of telescope - Դիտակի տեսադաշտ - Անշարժ դիտախողովակում երևացող տարածություն, որը սահմանափակվում է կոնային մակերևույթով կազմված (մարմնային) անկյամբ: Անկյան գագաթը գտնվում է դիտակի օբյեկտիվի օպտիկական կենտրոնում, իսկ մակերևույթը կազմվում է դիաֆրագմայի բացվածքը շոշափող ճառագայթներով:

П-34. Поле масштабов геоизображений - Geomages scale field - Երկրապատկերների մասշտաբների դաշտ - Գրաֆիկ, որը ցույց է տալիս տարբեր տարածական ընդգրկում ունեցող օբյեկտների և երևույթների պատկերման համար օգտագործվող մասշտաբների տիրույթները: Դաշտը բնութագրում է տարբեր տեսակի երկրապատկերների համատեղելիությունը մասշտաբի տեսակետից: Օրինակ՝ լոկալ օբյեկտների պատկերման համար, որոնց մակերեսը կազմում է 10-100 կմ², պատկերման մասշտաբը կարող է լինել 1:10.000-ից 1:100.000-ի սահմաններում:

П-35. Полевое дешифрирование снимков - Field interpretation of photographs - Նկարների դաշտային վերծանում - Վերծանում, որի դեպքում օբյեկտի ճանաչումն իրականացվում է անմիջապես տեղանքում՝ իրական օբյեկտը համեմատելով նկարի վրա եղած նրա պատկերին:

П-36. Полевые и камеральные методики оценки достоверности результатов классификации объектов по снимкам - Field and laboratory procedures / Techniques of estimate authenticity of object classification by photographs - Նկարների միջոցով օբյեկտների դասակարգման արդյունքների հավաստիության գնահատման դաշտային և գրասենյակային մեթոդներ - Քարտեզի ստուգում՝

օբյեկտը դասակարգելով առանձին կետերով՝ ըստ երթուղիների կամ ստուգողական տեղամասերի, որոնց տեղադիրքը տեղանքում հստակ որոշվում է ԳԼՈՆԱՍՍ (ГЛОНАСС) և ՋիՓի Էս (GPS) արբանյակային ընդունիչների միջոցով:

II-37. **Полигон** - Polygon [*հին հուն. πολυ - շատ + γωνία - անկյուն, πολυγωνος - բազմանկյուն, պոլիգոն*] - **Պոլիգոն** (հաշվողական երկրաչափության մեջ, համակարգչային գրաֆիկայում՝ **Բազմանկյուն**) - Սակերեսային օբյեկտ, տիրույթ, ուրվագիծ, ուրվագծային օբյեկտ, երկչափ օբյեկտ, չորս հիմնական տիպի տարածական օբյեկտներից մեկը, ներքին տիրույթ, որը ձևավորված է աղեղների փակ հերթականությամբ (վեկտորատոպոլոգիական տերմիններով), նույնականացված է ներքին կետով և ասոցացված ատրիբուտների նշանակությամբ: Պոլիգոնների ամբողջությունը ձևավորում է USZ պոլիգոնալ շերտ:

II-38. **Полигон геодинамический** - Geodynamic polygon - **Գեոդինամիկական պոլիգոն** - Գեոդեզիական ցանցեր, որոնք ընդգրկում են տարածքներ, որտեղ կանոնավոր բարձր ճշգրտությամբ գեոդեզիական և ծանրաչափական եղանակներով ուսումնասիրվում են երկրակեղևի զարգացման, ձևախախտման գործընթացները և գրավիտացիոն դաշտի փոփոխությունը ժամանակի ընթացքում:

II-39. **Полигонометрический пункт** - Polygonometric(al) point - **Բազմանկյունաչափական կետ** - Տե՛ս *Пункт полигонометрический*:

II-40. **Полигонометрия** - Polygonometry - **Բազմանկյունաչափություն** - Երկրի մակերևույթի հիմնակետերի փոխադարձ դիրքի որոշման եղանակ, երբ օգտագործվում է գեոդեզիական ցանցերի կառուցման և դրանց գործնական օգտագործման համար: Հիմնակետերի դիրքը հաշվարկվում է տեղանքում՝ որոշված հիմնակետերը հաջորդաբար միացնող գծերի երկարություններով և հորիզոնական անկյունների մեծություններով:

II-41. **Поликонические проекции** - Polyconic(al) projections - **Բազմակոնային պրոյեկցիաներ** - Երկրագնդի մակերևույթի պրո-

յեկցիաներ, որոնք ստացվում են բազմաթիվ կոները մակերևույթի վրա պրոյեկտելու միջոցով:

П-42. Полнота результатов дешифрирования - Interpretation results fullness / Completeness - Վերծանման արդյունքների լիարժեքություն - Վերծանման բացթողումների բացակայություն, նկարից կորզված տեղեկատվության հարաբերությունը նկարում պարունակվողին:

П-43. Полугоризонталь - Semicontour line - Կիսահորիզոնական - Լրացուցիչ հորիզոնականներ, որոնք անցկացվում են ընտրված հատույթի կեսի չափով՝ ռելիեֆի մանրամասները ցույց տալու նպատակով:

П-44. Полутень - Lightshadow / Penumbra - Կիսաստվեր - Հաստված, որտեղ լույսն ընկնում է մեծ անկյան տակ:

П-45. Полюс географический - Geographic(al) pole - Աշխարհագրական բևեռ - Ст и Географический полюс:

П-46. Полярные координаты - Polar coordinates - Բևեռային կոորդինատներ - Հարթության մեջ ունեն երկու մեծություն՝ կետի բևեռային հեռավորությունը ֆիքսված կետից (բևեռից) և բևեռային անկյուն՝ կազմված ընտրված բևեռային առանցքի և բևեռը կետին միացնող ուղղով: Որպես բևեռային առանցք՝ հարթության վրա ընտրում են աբսցիսների առանցքին զուգահեռ ուղղությունը, իսկ էլիպսոիդի վրա՝ միջօրեականի հյուսիսային ուղղությունը: Առաջին դեպքում բևեռային անկյուն է հանդիսանում դիրեկցիոն անկյունը, երկրորդ դեպքում՝ ազիմուտը: Տարածության մեջ որպես բևեռային կոորդինատներ օգտագործում են շառավիղ-վեկտորը, վեկտորային անկյունը և ազիմուտը:

П-47. Поперечное перекрытие снимков - Photographs transverse overlap (ping) - Լուսանկարների ընդլայնական փոխադարձ ծածկում - Հարևան երթուղիների նկարների փոխադարձ ծածկումը (մոտ 15- 30%):

П-48. Поперечный масштаб - Trans-verse scale - Ընդլայնական մասշտաբ - Նոմոգրամի նման գրաֆիկական մասշտաբ, որը հիմնված է անկյան կողմերը հատող զուգահեռ գծերի հատվածների համեմատականության վրա: Ընդլայնական

մասշտաբը կիրառվում է հատակագծերի վրա ճշգրիտ չափումներ իրականացնելու նպատակով:

П-49. Поправка направления - Deflection of the magnetic needle - Ուղղության ճշտում - Տե՛ս *Отклонение магнитной стрелки*:

П-50. Поправка - Correction - Ուղղում - Չափված արժեքի ուղղում՝ սիստեմատիկ սխալը վերացնելու նպատակով

П-51. Порог визуального контраста - Visual contrast threshold - Տեսանելի կոնտրաստի շեմը - $(K_{min} = \Delta B_{min} / B)$, պայծառության փոքր տարբերություններն ընկալելու աչքի տեսողական ունակությունը (ΔB_{min})՝ լավ լուսավորման դեպքում ($K_{min} = 0.02$):

П-52. Пояснительные условные знаки - Explanatory symbols / Conventional signs - Բացատրական պայմանական նշաններ - Նշաններ, որոնք ներկայացնում են տեղանքի առարկաների տեսակները և նրանց այլ լրացուցիչ բնութագրերը:

П-53. Прагматика картографическая - Cartographic pragmatics [*հին հուն. πράγματος - գործարք, գործողություն*] - Քարտեզագրական պրագմատիկա - Ուսումնասիրում է քարտեզագրական նշանների տեղեկունակությունը և դրանց ընկալման յուրահատկությունները:

П-54. Превышение - Difference in elevation - Վերազանցում - Տեղանքի երկու կետերի բացարձակ բարձրությունների տարբերությունը:

П-55. Предельная графическая точность - Maximum graphic accuracy / exactness - Սահմանային գրաֆիկական ճշտություն - Տե՛ս *Точность графическая предельная*:

П-56. Предельная ошибка - Maximum permissible error - Սահմանային սխալ - Տե՛ս *Ошибка предельная*:

П-57. Предельная точность масштаба карты - Maximum exactness of map scale - Քարտեզի մասշտաբի սահմանային ճշտություն - Տե՛ս *Точность масштаба карты предельная*:

П-58. Представление пространственных данных - Spatial data presentation - Տարածական տվյալների ներկայացում - Տարածական տվյալների թվային տեսքով նկարագրման եղանակ:

Առավել ունիվերսալ և կիրառվող են վեկտորային (վեկտորատոպոլոգիական, վեկտորային ոչ տոպոլոգիական), ռաստրային, կանոնավոր բջջային և ծառանման տեսքի ներկայացման եղանակները:

II-59. Преобразование картографического изображения - Cartographic image transformation - Քարտեզագրական պատկերի փոխակերպում - Գոյություն ունեցող քարտեզների տվյալներով նոր՝ ամանցյալ քարտեզների ստացման գործողություն, որն օգտագործվում է որոշակի վերլուծական նպատակների համար: Իրականացվում է հատուկ տրամաբանական, գրաֆիկական, վերլուծական կամ մաթեմատիկական եղանակներով:

II-60. Преобразование снимков - Transformation of photographs - Նկարների փոխակերպում - Տրված հատկություններով այլ պատկերի ստացում՝ անհրաժեշտ տեղեկատվության առանձնացման և ավելորդ տեղեկատվության հեռացման միջոցով, ընդ որում, նոր տեղեկատվություն չի ավելացվում, այլ՝ պատկերը ստանում է նոր տեսք՝ հետագա մշակման հարմարության համար:

II-61. Преобразованные снимки - Transformed photographs - Փոխակերպված նկարներ - Նկարներ, որոնք սպառողին են ներկայացվում նախնական մշակումից հետո:

II-62. Приемы анализа карт - Methods of maps analysis - Քարտեզների վերլուծության եղանակներ - Քարտեզների կիրառումը տարբեր ոլորտներում առաջ բերեց քարտեզների վերլուծության մի շարք եղանակներ, դրանք են՝ նկարագրական, գրաֆիկական, գրաֆոնաալիտիկ և մաթեմատիկաքարտեզագրման մոդելավորման եղանակները:

II-63. Проба печатная - Printing sample / Printed sample - Տպագրական նմուշ - Քարտեզի գունային և գծային (շտրիխային) տպագրական նմուշ, որը պատրաստվում է նախքան քարտեզների բազմաքանակ տպագրությունը:

II-64. Программа карты - Map programme / schedule - Քարտեզի ծրագիր - Քարտեզի նախագծման արդյունքում ստեղծված փաստաթուղթ, որը բովանդակում է քարտեզի նշանակությունը,

տեսակը և տիպը, նրա մաթեմատիկական հիմքը, բովանդակությունը, ընդհանրացման սկզբունքները, արտահայտման միջոցները, գրաֆիկական սիմվոլների համակարգը, տվյալների աղբյուրները և դրանց օգտագործման կարգը, ինչպես նաև քարտեզների պատրաստման արդյունավետ տեխնոլոգիաները: Ծրագիրն իր մեջ ամփոփում է տեխնիկական և տնտեսական հաշվարկներ ու նախահաշիվներ:

П-65. Программное обеспечение - Software - Ծրագրային ապահովում (Մաթեմատիկական ապահովում, Ծրագրային միջոցներ) - Տեղեկատվության մշակման ծրագրային համակարգեր և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են այդ ծրագրերն օգտագործելու համար: ԱՏՀ-ում ծրագրային ապահովումն իրականացնում են նրա գործառույթները:

П-66. Программно-управляемая графическая среда - Software programmable graphic environment - Համակարգչային գրաֆիկական միջավայր - Համակարգ, որը ծրագրային և էլեկտրոնային տեխնիկայի միջոցներով ապահովում է երկրապատկերների մշակումը և տեսանելիացումը:

П-67. Продольное перекрытие снимков - Longitudinal overlap(ping) of photographs - Լուսանկարների երկայնակի վերադրում - Հանույթի երթուղու երկարությամբ հարևան նկարների մասնակի ծածկումներ (ոչ պակաս քան 50%):

П-68. Продольный параллакс - Longitudinal parallax - Երկայնակի պարալաքս - Տեղանքի կետի արցիսների տարբերությունը տարածագույզի ձախ ($X\Delta$) և աջ ($X\alpha$) նկարներում ($P=X\Delta-X\alpha$): Երկայնակի պարալաքսի մեծությամբ որոշում են տեղանքի բարձրությունները տարածանկարաչափական եղանակներով:

П-69. Проект карты - Map project - Քարտեզի նախագիծ - Տե՛ս *Проектирование карты*:

П-70. Проектирование карты - Projecting / Planning / Designing of map - Քարտեզի նախագծում - Աշխարհագրության բաժին, որն ուսումնասիրում և մշակում է քարտեզների և ատլասների ստեղծման գրասենյակային (կամերալ) աշխատանք-

ների մեթոդներն ու տեխնոլոգիաները: Այդ աշխատանքների թվին են պատկանում քարտեզագրական ստեղծագործության նախագծման ծրագրի և փաստաթղթերի մշակումը, որոնցում սահմանվում են քարտեզագրական ստեղծագործության նպատակը, տեսակը, մաթեմատիկական հիմքը, բովանդակությունը և ստեղծման տեխնոլոգիան:

П-71. Проекция картографическая - Cartographic projection - Քարտեզագրական պրոյեկցիա - Տե՛ս *Картографическая проекция*:

П-72. Произвольные проекции - Arbitrary projections - Կամայական պրոյեկցիաներ - Անկյուններն ու մակերեսներն աղավաղող քարտեզագրական պրոյեկցիաներ, օգտագործվում է հավասար տարածության պրոյեկցիան, որը պահպանում է հեռավորությունների մասշտաբը միջօրեականների կամ հորիզոնականների ուղղությամբ, օրթոդոմիկը, որը գնդի մեծ շրջանները պատկերում է ինչպես ուղիղ գիծ: Դրանք օգտագործվում են աշխարհի քարտեզը պատկերելու նպատակով:

П-73. Проложение горизонтальное - Horizontal distance - Հորիզոնական պրոյեկցիա - Տե՛ս *Горизонтальное проложение*:

П-74. Пропорциональный масштаб - Proportional scale - Համեմատական մասշտաբ - Տե՛ս *Масштаб пропорциональный*:

П-75. Простое нивелирование - Simple leveling - Պարզ (հասարակ) նիվելիրացում - Տե՛ս *Нивелирование простое*:

П-76. Пространственная отражательная способность - Spatial reflecting capacity - Տարածական անդրադարձման ունակություն - Ընկնող ճառագայթումն անհավասարաչափ անդրադարձնելու օբյեկտի հատկությունը:

П-77. Пространственная привязка (Геопривязка) - Georeferencing - Տարածական կապակցում (Գեոկապակցում) - Գործողություններ, որոնք ուղղված են աշխարհագրական տվյալներին կոորդինատային համակարգ հաղորդելուն, ինչի արդյունքում այդ տվյալները կարող են համատեղ պատկերվել և վերլուծվել այլ աշխարհագրական տվյալների հետ:

П-78. Пространственно-временноеподобие - Spatial-time

similarity - Տարածաժամանակային նմանություն - Երկրապատկերների գրաֆիկական կերպարների համապատասխանությունն իրենց բնօրինակներին, ինչը դրսևորվում է երկրաչափական ձևերի, կառուցվածքի, հարաբերությունների և վիճակների (նաև ժամանակային) նմանությամբ:

П-79. Пространственные данные - Spatial data - Տարածական տվյալներ - Տարածական օբյեկտների վերաբերյալ թվային տվյալներ, որոնք ներառում են տեղեկություններ դրանց տեղադիրքի և որոշիչ հատկությունների (ատրիբուտների) մասին: Տարածական տվյալները հանդիսանում են ԱՏՀ-ի տեղեկատվական ապահովման հիմքը:

П-80. Пространственный анализ - Spatial analysis - Տարածական վերլուծություն - Գործողությունների ամբողջություն, որն ապահովում է տարածական օբյեկտների տեղադիրքի, կապերի և այլ տարածական հարաբերությունների վերլուծությունը, ներառյալ տեսանելի/անտեսանելի գոտիների, հարևանության վերլուծությունների, ռեկլեֆի թվային մոդելների ստեղծումը և մշակումը:

П-81. Пространственный запрос - Spatial query - Տարածական հարցում - Տվյալների հենքում տարածական օբյեկտների որոնման պայման-հրահանգ, որը պարունակում է տարածական օպերատորներ (օրինակ՝ գտնվում է ներսում, չի հասվում, գտնվում է հեռավորության վրա և այլն):

П-82. Пространственный объект (Географический объект) - Spatial object (Geographical object) - Տարածական օբյեկտ (Աշխարհագրական օբյեկտ) - Իրական օբյեկտի թվային ներկայացումը, կամ տեղանքի օբյեկտի թվային մոդելը, որը բովանդակում է տեղադիրքը և օբյեկտը բնորոշող հատկանիշների ամբողջությունը: Առանձնացնում են տարածական օբյեկտների չորս հիմնական տեսակներ՝ կետային (կետեր), գծային (գիծ), մակերեսային կամ բազմանկյունային, ուրվագծային օբյեկտներ (մակերեսներ) և մակերեսայիններ (ռեկլեֆ): Տվյալ դասի միևնույն հատկություններ ունեցող օբյեկտները ամբողջությունը տվյալ տարածքի սահմաններում ձևավորում է շերտ:

П-83. Профиль местности - Area / Terrian profile-Տեղանքի պրոֆիլ - Տրված ուղղությամբ և ուղղաձիգ հարթությամբ Երկրի մակերևույթի հատման գիծը:

П-84. Прямоугольные координаты - Rectangular coordinates - Ուղղանկյուն (դեկարտյան) կոորդինատներ - Կետի կոորդինատները որոշում են իրար փոխուղղահայաց (X և Y) ուղիղներից կետի ունեցած հեռավորությամբ: Ուղղանկյուն կոորդինատները տարածության մեջ ունեն երեք մեծություն (x, y, z), որոնք որոշում են կետի տեղադիրքը իրար փոխուղղահայաց երեք հարթությունների նկատմամբ:

П-85. Прямые дешифровочные признаки - Direct signs / Interpretation signs - Վերծանման ուղղակի նշաններ - Նկարներում անմիջականորեն արտահայտվող օբյեկտների հատկություններ. երկրաչափական (ձև, չափեր, ստվեր), պայծառության (երանգ, պայծառության մակարդակ, գույն, սպեկտրալ պատկեր) և կառուցվածքային (կառուցվածք, զծագիր):

П-86. Прямые измерения - Direct measurements - Ուղղակի չափումներ - Չափումների եղանակ, որով չափվող մեծությունն անմիջականորեն համեմատվում է չափման միավորի հետ:

П-87. Пространственное моделирование - Spatial modeling - Տարածական մոդելավորում - Տե՛ս *Геомоделирование*.

П-88. Псевдоазимутальные проекции - Pseudo-azimuthal projections - Կեղծ ազիմուտային պրոյեկցիաներ - Չնափոխված ազիմուտային պրոյեկցիաներ: Դրանցից է բևեռային կեղծ ազիմուտային պրոյեկցիան, որի գուգահեռականները ներկայացվում են համակենտրոն շրջանագծերով, իսկ միջօրեականները՝ կոր գծերով, որոնք սիմետրիկ են կենտրոնական մեկ կամ երկու ուղիղ միջօրեականներին: Լայնակի և շեղ կեղծ ազիմուտային պրոյեկցիաներն ունեն ընդհանուր օվալային ձև և օգտագործվում են Ատլանտյան և Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսների քարտեզները կազմելու ժամանակ:

П-89. Псевдоконические проекции - Pseudo-conic(al) projections - Կեղծ կոնային պրոյեկցիաներ - Քարտեզագրական պրոյեկցիաների տեսակներից մեկն է, այդ պրոյեկցիայում գու-

գահեռականները ներկայացվում են համակենտրոն շրջանագծերի աղեղներով, իսկ միջին դիրք ունեցող միջօրեականը՝ ուղիղ գծով, մյուս միջօրեականները վերջինի նկատմամբ սիմետրիկ դասավորված կոր գծեր են:

П-90. Псевдоцилиндрические проекции - Pseudo - cylindric(al) projections - Կեղծ զլանային պրոյեկցիաներ - Պրոյեկցիաներ, որոնցում զուգահեռականներն ուղիղ գծեր են, միջին միջօրեականը դրանց ուղղահայաց է և ուղիղ, իսկ մնացած միջօրեականները կոր են, և նրանց կորությունն ավելի է մեծանում միջին միջօրեականից հեռանալու դեպքում:

П-91. Пункт геодезический - Geodetic point - Գեոդեզիական հիմնակետ - Երկրի մակերևույթի հիմնակետ, որի դիրքը կոորդինատային համակարգում որոշվում է գեոդեզիական մեթոդներով և տեղանքում ամրացվում է գեոդեզիական նշանով՝ մակերևույթի կամ շինությունների վրա:

П-92. Пункт исходный геодезический - Starting geodetic point - Ելակետային գեոդեզիական հիմնակետ - Գեոդեզիական հիմնակետ, ըստ որի՝ որոշվում են այլ գեոդեզիական հիմնակետերի տեղադիրքի համապատասխան բնութագրիչները:

П-93. Пункт ориентирный - Landmark point - Կողմնորոշիչ հիմնակետ - Տեղանքում ակնհայտ երևացող հայտնի գեոդեզիական կոորդինատներով հիմնակետ, որը կարելի է օգտագործել գեոդեզիական աշխատանքների նպատակով:

П-94. Пункт полигонометрический - Polygonometric(al) point - Բազմանկյունաչափական հիմնակետ - Երկրի մակերևույթին գտնվող հիմնակետ, որի տեղադիրքը հայտնի պլանային կոորդինատային համակարգում որոշված է բազմանկյունաչափության մեթոդով և տեղանքում ամրացված է գեոդեզիական նշանով:

Р-1. Рабочая площадь аэрокосмического снимка - Aerospace photograph's work area - Օդատիեզերական նկարի աշխատանքային մակերես - Նկարի կենտրոնական մասը, որտեղ երկրաչափական աղավաղումները նվազագույն են, որը բնութագրվում է նաև պատկերի լավագույն որակով:

Р-2. Равновеликие проекции - Equivalent projections - Հավասարամեծ պրոյեկցիաներ - Այս պրոյեկցիաներում մակերեսներն աղավաղված չեն, սակայն զգալի կերպով աղավաղված են անկյունների և ուրվագծերի մեծությունները, ինչը հատկապես արտահայտվում է մեծ տարածություններում:

Р-3. Равнопромежуточные проекции - Equidistant projections - Հավասարահեռ պրոյեկցիաներ - Կամայական պրոյեկցիաներ, որոնց մասշտաբը մեկ գլխավոր (միջօրեականների կամ զուգահեռականների) ուղղությամբ անփոփոխ է: Քարտեզի վրա այդպիսի պրոյեկցիաներում միջօրեականները կամ զուգահեռականները համապատասխանաբար դասավորվում են քարտեզի կենտրոնից հավասար հեռավորությունների վրա:

Р-4. Равноточные измерения - Iniformly precise measurements - Միևնույն ճշտության չափումներ - *St u Измерения равноточные.*

Р-5. Равноугольная проекция - Equal angle projection - Հավասարանկյուն պրոյեկցիա - Պրոյեկցիա, որը չի աղավաղում անկյունները և ուրվագծերը, սակայն քարտեզի տարբեր մասերում զգալի կերպով աղավաղվում է մասշտաբը:

Р-6. Радиоволны - Radio-waves - Ռադիոալիքներ - Էլեկտրամագնիսական ալիքներ, որոնց հաճախականությունը 3 կՀց-ից մինչև 300 գՀց է, և համապատասխան ալիքի երկարությունը 1 մ-ից մինչև 100 կմ է:

Р-7. Радиовысотомер (радиоальтиметр) - Radio-altimeter - Ռադիոբարձրաչափ (ռադիոալտիմետր) - Ռադիոլուկացիոն սկզբունքով աշխատող սարք, որի միջոցով որոշվում է օդանավի բարձրությունը երկրի մակերևույթից:

Р-8. Радиодальномер - Radio-rangefinder - Ռադիոհեռաչափ

- Ռադիոլոկացիոն սկզբունքով աշխատող սարք, որի միջոցով որոշվում է օբյեկտի հեռավորությունը:

P-9. Радиолокационная (радарная) съемка - Radiolocation (radar) survey [անգլ. *radar, radio detection and ranging – ռադիոբազահայտում և հեռավորության չափում*] - Ռադիոլոկացիոն (ռադարային) հանույթ - Հեռազննման կարևոր տեսակ, որն օգտագործվում է խիտ ամպամածության, մառախուղի ժամանակ, ինչպես նաև գիշերը: Հանույթի համար օգտագործում են ինքնաթիռներում և Երկրի արհեստական արբանյակներում տեղակայված կողային դիտման ռադիոլոկատորները:

P-10. Радиометрические свойства снимков - Photograph's radiometric characteristics - Նկարների ռադիոչափական հատկություններ - Նկարների վրա պատկերված օբյեկտի պայծառությունը քանակապես ճշգրիտ վերարտադրելու հատկություն:

P-11. Радиометрическое разрешение снимков - Photograph's radiometric resolution - Նկարների ռադիոմետրական լուծաչափ - Պայծառության մակարդակների թիվը, որը կարող են գրանցել ճառագայթման ընդունիչները (այն կարող է արտահայտվել նաև բիթերով՝ 2 մակարդակը 1 բիթ, 4 մակարդակը՝ 2 բիթ, 16 մակարդակը և այլն):

P-12. Радиотепловая (микроволновая) съемка - Radiothermal (microwave) survey - Ռադիոջերմային (միկրոալիքային) հանույթ - Ռադարային հանույթի պասիվ տեսակ, որը հնարավորություն է տալիս միկրոալիքային տիրույթում (0,3-30 սմ) չափել Երկրի մակերևույթի սեփական ռադիոջերմային ճառագայթման բևեռացումն ու ինտենսիվությունը: Իրականացվում է օրվա և տարվա բոլոր ժամանակներին:

P-13. Разбивка сооружения - Building laying out - Կառույցի նշահարում - Գեոդեզիական աշխատանքների ամբողջություն՝ տեղանքում կառույցի, ինչպես նաև նրա որոշիչ կետերի և հարթությունների բարձրության որոշման նպատակով:

P-14. Разграфка карт - Map / Sheet line system - Քարտեզների կտրտման համակարգ - Բազմաթերթ քարտեզների էջերի բաժանման համակարգ, որն օգտագործվում է միևնույն մասշտաբի

քարտեզի էջերն առավել խոշոր մասշտաբի բաժանելու նպատակով:

P-15. Разрешение геоизображения - Geomage resolution - Երկրապատկերի լուծաչափ - Օդատիեզերական նկարների վրա պատկերված օբյեկտների նվազագույն զծային մեծությունը:

P-16. Разрешение снимка - Photograph resolution - Նկարի լուծաչափ - Երկրի մակերևույթի օբյեկտի նվազագույն մեծությունը, որը հնարավոր է տարբերել տիեզերական նկարի վրա: Բարձր լուծաչափ է համարվում մեկ մետր և ավելի պակաս մեծությունը, իսկ ցածր՝ հարյուրավոր մետրեր և ավելի մեծությունները:

P-17. Рамка карты - Map borders / Map margin - Քարտեզի շրջանակ - Քարտեզի շրջանակ են հանդիսանում գծերը կամ գծերի համակարգը, որոնք եզրավորում են քարտեզագրական պատկերումը: Այն լինում է արտաքին և ներքին: Վերջինս կարող է կրել աստիճանների և բուսականության բաժանումներ: Արտաքին շրջանակը եզրավորում է մնացած շրջանակները և հիմնականում արվում է գեղարվեստական ձևավորման նպատակով:

P-18. Распознавание образов - Pattern recognition - Պատկերների ճանաչում - Մաթեմատիկական մեթոդ, որը սահմանում է որոշում ընդունելու համակարգ (որոշիչ սահմաններ), ըստ որի՝ պատկերներն իրենց հատկությունների հիման վրա վերագրվում են նախապես որոշված դասերից մեկին: Որպես ճանաչման հատկություններ կարող են ծառայել գրաֆիկական օբյեկտների նոմինալ, չափման, հավանականության, վիճակագրական, կառուցվածքային, տոպոլոգիական և այլ հատկությունները:

P-19. Рассеянное отражение - Dispersed / Diffused reflection - Ցրված անդրադարձում - Ընկնող լույսի ճառագայթի հավասարաչափ (կամ դիֆուզ) անդրադարձումը բոլոր ուղղություններով: Այդպիսի անդրադարձ ունեցող մակերեսները կոչվում են օրթոտրոպ: Դրանց թվին պատկանող բնական մակերեսներն են ավազները, թարմ ձյունը և գրունտների մեծ մասը: *St' u նաև Ортогруппная (Ламбертовская) индикатриса отражения.*

P-20. Растеризация - Rasterization - Ռաստրավորում - St' u *Растровое представление.*

P-21. Растр - Raster / Dot matrix [*գերմ. raster, լատ. rastrum - վանդակ*] - Ռաստր - 1. Օպտիկական ցանց՝ կազմված թափանցիկ կամ ոչ թափանցիկ տարրերով, որոնք օգտագործվում են կիսատոնային պատկերների տպագրական (պոլիգրաֆիական) վերարտադրության նպատակով: 2. Միևնույն ձևի ուղղանկյուն տարրերի (պիքսելների կամ բջիջների) ուղղաձիգ և հորիզոնական շարքերի ամբողջություն, որը կազմում է ուղղանկյուն մատրից, որը և հիմք է ծառայում պատկերների և տարածական առարկաների ռաստրային ներկայացման համար: Ռաստր տերմինը օգտագործվում է նաև նույն սկզբունքով աշխատող տեխնիկական սարքերը բնութագրելիս:

P-22. Растровая модель данных - Raster model - Տվյալների ռաստրային մոդել - Տե՛ս *Растровое представление*.

P-23. Растрово-векторное преобразование (векторизация) - Raster-vectorial transformation (vectorization) - Ռաստրավեկտորային ձևափոխություն (վեկտորացում) - Ավտոմատ կամ կիսաավտոմատ եղանակով տարածական օբյեկտների ռաստրային ներկայացման փոխակերպումը վեկտորականով: Ռաստրվեկտորական փոխակերպումն իրականացվում է մասնագիտական ծրագրային միջոցներով:

P-24. Растровое изображение (карта классификации) - Raster image (map of classification) - Ռաստրային պատկեր (դասակարգման քարտեզ) - Պատկեր, որն ստացվում է համակարգչային դասակարգման արդյունքում, որի պիքսելներից յուրաքանչյուրը վերագրվում է որոշակի դասի: Նկարների վրայի օբյեկտների դասակարգումը կատարվում է ըստ պայծառության հատկանիշների, իսկ քարտեզի վրա՝ ըստ էության:

P-25. Растровое представление - Raster presentation - Ռաստրային ներկայացում (տարածական տվյալների ռաստրային մոդել) - Տարածական օբյեկտների թվային ներկայացում կանոնավոր ցանցի՝ ռաստրի վանդակների (պիքսելների) ամբողջության տեսքով: Այս մոդելում յուրաքանչյուր վանդակին վերագրվում է նրանում ներկայացված օբյեկտի դասի արժեքը: Ռաստրային ներկայացումը որոշում է օբյեկտների դիրքը ռաստրի ուղ-

դանկյան մատրիցում:

P-26. Регулярная сеть - Regular network - Կանոնավոր ցանց - Օգտագործվում է Երկրի մակերևույթը և տարածական օբյեկտները կանոնավոր տարրերի բաժանելու և դրանց միջոցով ներկայացնելու նպատակով:

P-27. Регулярно-ячеистое представление - Regular-cellular presentation - Կանոնավոր տարրերով ներկայացում - Կանոնավոր ցանցի տեսքով տարածական օբյեկտների թվային ներկայացում: Օբյեկտի տարրերին վերագրվում է նրա դասի արժեքը: Տե՛ս *Растровое представление*.

P-28. Редактирование карты - Map editing - Քարտեզի խմբագրում - Քարտեզների ստեղծման աշխատանքների գիտատեխնիկական կազմակերպումն ու ղեկավարումը բոլոր փուլերում, որը ներառում է քարտեզի նախագծումը, կազմումը, պայմանական նշանների մշակումը, ամփոփումը և ձևավորումը:

P-29. Рейка - Rod / Pole - Չափաձող - 3 կամ 4 մետրանոց չափիչ սարք, որն օգտագործվում է նիվելիրացման ժամանակ: Չափաձողն ունի երկու կողմ, որոնք ներկվում են սպիտակ ներկով և այդ սպիտակ ֆոնի վրա մի կողմում գծում են սև, իսկ մյուս կողմում՝ կարմիր սանտիմետրային բաժանումներ: Չափաձողի կարմիր կողմի բաժանումն սկսվում է պատահական մի թվից (օրինակ՝ 500-ից), իսկ սևը՝ զրոյից: Գոյություն ունեն երկսանդղակ չափաձողեր բարձր դասի նիվելիրացման համար:

P-30. Рекогносцировка - Reconnaissance - Տեղադիտություն (տեղագնություն) - Տարածքի նախնական հետազոտություն՝ գեոդեզիական աշխատանքներ իրականացնելու համար:

P-31. Рельефная карта - Relief map / Plastic relief map - Ռելիեֆային քարտեզ - Ռելիեֆի եռաչափ՝ ծավալային մոդել, որը պատրաստվում է պլաստիկից, սովարաթղթից, գիպսից և այլ նյութերից: Պատկերավոր լինելու համար ռելիեֆային քարտեզի ուղղաձիգ մասշտաբը սովորականի համեմատ մեծացնում են 2-10 անգամ: Նույն սկզբունքն օգտագործվում է Երկրի և այլ մոլորակների ռելիեֆային գլոբուսներ պատրաստելու ժամանակ:

P-32. Рентгеновское излучение - X-ray radiation - Ռենտ-

գենյան ճառագայթում - էլեկտրամագնիսական ճառագայթում 0,001-0,01 մկմ ալիքների երկարության տիրույթում:

P-33. Репер - Bench mark / Control point [*ֆր. repère - նշան, էլքային կետ*] - Հենանիշ (Ռեպեր) - Նշան, որն ամրացվում է Երկրի մակերևույթի հայտնի բացարձակ բարձրության որոշակի կետում: Այդ բարձրությունը որոշվում է մակերևույթի ընդունված էլակետի բարձրության նկատմամբ նիվելիրացման միջոցով: Ռեպերների վրա ամրացվում է 5 սմ շառավղով մետաղական համարակալված սկավառակ:

P-34. Репродукция накидного монтажа аэрофотоснимков - Aerial photographic strip - Օդալուսանկարների վերադիր մոնտաժի վերարտադրություն - Փոքրացված տեսքով վերադիր մոնտաժի լուսանկար:

P-35. Референц-эллипсоид - Reference-ellipsoid - Ռեֆերենց էլիպսոիդ - Գեոիդին ամենամոտ մարմինը, ըստ որի՝ հաշվարկվում են գեոդեզիական հաշվարկները և քարտեզագրական պրոյեկցիաները:

P-36. Рефлекс - Reflex - Ռեֆլեքս (անդրազդում) - Անդրադարձված լույսի օպտիկական էֆեկտ՝ առարկայի գունային տոնիկամ գույնի խտության ավելացում, որը շրջապատի առարկաներից ընկնող լույսի ազդեցության հետևանք է:

P-37. Рефрактометр - Refractometer [*լատ. refractus - բեկում և հին հուն. μετρέω - չափում*] - Ռեֆրակտոմետր (բեկումնաչափ) - Սարք՝ նախատեսված լույսի բեկման ցուցիչի չափման համար:

P-38. Рефракция атмосферная - Atmospheric refraction - Մթնոլորտային ռեֆրակցիա - Ճառագայթի հետագծի կորացում, որը տեղի է ունենում մթնոլորտում օդի բեկման ցուցիչի փոփոխությունների հետևանքով: Տարբերում են հորիզոնական (կողային) և ուղղաձիգ ռեֆրակցիաներ:

P-39. Румб - Rhumb / Cardinal direction / Compass point - Ռումբ (ռումբային անկյուն) - Առանցքային միջօրեականի մոտակա ծայրով և ուղղության հորիզոնական պրոյեկցիայով կազմված սուր անկյունը (0° - 90°), որի մեծությունից առաջ նշվում է քառորդը՝ NE (հս-արլ), SE (հվ-արլ), SW (հվ-արմ) և NW (հս-արմ):

С

С-1. Сближение меридианов - Rapprochement of meridians - Միջօրեականների մերձեցում - Անկյուն, որը գտնվում է տվյալ կետով անցնող միջօրեականի և առանցքային միջօրեականի միջև:

С-2. Свет - Light - Լույս - Մարդու աչքով ընկալվող էլեկտրամագնիսական ճառագայթում:

С-3. Светодальномер - Light-rangefinder - Լուսահեռաչափ - Էլեկտրամագնիսական հեռաչափ՝ նախատեսված հեռավորությունների չափման համար, որն իրականացվում է ժամանակի ընթացքում լուսային ճառագայթի ինտենսիվության մոդուլացման կամ արձակվող և ընդունվող ազդանշանների ֆազային հարաբերակցությամբ:

С-4. Светотень - Chiaroscuro - Լուսաստվեր - Առարկայի մակերեսին դիտվող լուսավորվածության բաշխումն է: Տեղանքում լուսավորվածությունից դեպի ստվեր անցումը կարող է լինել սահուն կամ կտրուկ՝ կախված մակերեսի հատկություններից:

С-5. Сводка - Edge matching / Edge join - Միաբերում - Քարտեզի երկու կից թերթերի գծային տարրերի համաձայնեցում, որն ուղեկցվում է հնարավոր անհամաձայնությունների սրբազրմամբ և ավարտվում է դրանց միավորմամբ՝ որպես մեկ ամբողջություն:

С-6. Свойства карты - Map characteristics - Քարտեզի հատկություններ - Քարտեզի հիմնական հատկություններն են՝ մաթեմատիկական հիմքը՝ պրոյեկցիան, որի միջոցով սֆերիկ մակերևույթը պատկերվում է հարթության վրա, պայմանական նշանների հատուկ լեզուն, պատկերվող առարկաների ընտրությունը և ամփոփումը, իրականության համակարգված պատկերումը: Այդ հատկությունները բխում են քարտեզի սահմանումից, այն է՝ քարտեզը Երկրի կամ այլ երկնային մարմնի որոշակի մաթեմատիկական, փոքրացված և ընդհանրացված մոդելն է:

С-7. Сегмент - Segment [լատ. *segmentum* - հատված, շերտ. *seco* - կտրել, պատռել] - Հատված - 1. Ուղիղ գծի հատված, որը

միացնում է հայտնի կոորդինատներով երկու միջանկյալ կետերը կամ հանգույցները: 2. Վեկտորային օբյեկտների տարածական ներկայացման աղեղների տարր: 3. Որոշ համակարգերում գրաֆիկական տարրերի պրիմիտիվների և դրանց աստիքուսների հավաքածու:

C-8. Семантика картографическая - Cartographic semantics - Քարտեզագրական սեմանտիկա - Տե՛ս *Картографическая семантика*:

C-9. Семиотика картографическая - Cartographic semiotics [հուն. *σημειωτική*, հին հուն. *σημείον - նշան, հատկանիշ*] - Քարտեզագրական նշանագիտություն - Մշակում է քարտեզի լեզուն, քարտեզագրական նշանների կառուցման տեսական դրույթները և մեթոդները: Տե՛ս *Картографическая семиотика*:

C-10. Сервер - Server [անգլ. *server - ծառայություն*] - Սերվեր (մատուցիչ) - 1. Սպասարկումն իրականացնող համակարգիչ (կամ ծրագիր), որը կատարում է առանձին կայանների աշխատանքի համաձայնեցման և համակարգչային ցանցերում տվյալների հաղորդման վերահսկման գործառույթները: 2. Համակարգչային ցանցում համակարգիչ, որը տրամադրում է այս կամ այն ռեսուրսները ցանցի այլ համակարգիչներին:

C-11. Сетевой компьютер - Net computer - Ցանցային համակարգիչ - «Հաճախորդ-սերվեր» համակարգի բաղադրիչ, որն ունի նվազագույն ծրագրային ապահովում և նախատեսված է ցանցային աշխատանքի համար:

C-12. Сетка координатная - Coordinate grid / Map graticule - Կոորդինատային ցանց - Քարտեզի մաթեմատիկական հիմքի կարևոր տարրը, որն անհրաժեշտ է քարտեզով կողմնորոշվելու համար:

C-13. Сетка нитей - Filament grid - Ցանցաթելեր - Գծիկների համակարգ, որը զժանշվում է ապակե հարթ, զուգահեռ նիստերով թիթեղի վրա և տեղադրվում է գեոդեզիական գործիքների դիտախոդովակում՝ ակնապակու կիզակետում:

C-14. Сетка прямоугольных координат - Right-angled coordinate grid - Ուղղանկյուն կոորդինատների ցանց - Իրար

փոխուղղահայաց գծերի ստանդարտ համակարգ, որն անցկացված է որպես հավասարաչափ հեռավորության քառակուսի կիլոմետրային ցանց:

C-15. *Сеть геодезическая* - Geodetic net / Network / Control net frame - Գեոդեզիական ցանց - Տեղանքում ամրացված գեոդեզիական հիմնակետերի ամբողջություն, որոնց տեղադիրքը որոշված է նրանց համար ընդհանուր հանդիսացող գեոդեզիական կոորդինատային համակարգում:

C-16. *Сеть государственная геодезическая* - State geodetic net - Պետական գեոդեզիական ցանց - Գեոդեզիական հիմնակետերի ցանց, որը էլքային է հանդիսանում այլ գեոդեզիական ցանցերի կառուցման համար. ապահովում է ամբողջ պետության տարածքում միասնական կոորդինատային համակարգի տարածումը: Ծառայում է որպես գլխավոր գեոդեզիական հիմք՝ բոլոր մասշտաբների տեղագրական հանույթների համար:

C-17. *Сеть нивелирная* - Level(ling) net-work - Նիվելիրային ցանց - Երկրի մակերևույթի կետերի համակարգ, որոնց բարձրությունները որոշվում են նիվելիրացմամբ և տեղանքում ամրացված են նիվելիրացման նշաններով՝ հենանիշերով (ռեպերներով):

C-18. *Сжатие Земли* - Earth's pressing - Երկրագնդի սեղմվածություն - Մեծություն, որը բնութագրում է երկրային էլիպսոիդի շեղման չափը գնդից: Այն որոշվում է էլիպսոիդի բևեռային և հասարակածային շառավիղների հարաբերական տարբերությամբ՝ $(a-p)/a$ ($(a-b)/a$), որտեղ a -ն (a)՝ հասարակածի շառավիղն է, b -ն (b)՝ բևեռային: ԽՍՀՄ-ում ընդունված էր Կրասովսկու էլիպսոիդը, որի սեղմվածությունն է՝ $1/298,3$: Միջազգային համաձայնագրով այդ մեծությունը հավասար է $1/297$:

C-19. *Синергизм снимков* - Photographs synergism [*հուն. συνεργία* - համագործակցություն, աջակցություն] - Նկարների համատեղում - Միևնույն կոորդինատային համակարգում տարբեր պատկերների միաձուլում (օրինակ՝ սկաներային նկարների տեսանելի տիրույթում և ռադիոլոկացիոն նկարների համատեղում):

C-20. *Синоптичность геоизображений* - Synopticism of

geoimages - Երկրապատկերների սինտաքսիկություն – Գրաֆիկական կերպարների իրականության ամբողջական պատկերը միաժամանակ արտահայտելու հատկությունը, որով առավել օժտված են այն կերպարները, որոնք համատեղ արտահայտում են տարածքի ռելիեֆի, հողային և բուսական ծածկի, մարդածին և օդերևութաբանական իրավիճակները:

C-21. Синтактика картографическая - Cartographic syntactics - Քարտեզագրական սինտակտիկա - Ուսումնասիրում է քարտեզագրական նշանների կառուցման և օգտագործման կանոնները, դրանց կառուցվածքային հատկությունները և քարտեզի լեզվի քերականությունը:

C-22. Синтетическая карта - Synthetic map - Մինթետիկ քարտեզ - Քարտեզ, որը տալիս է օբյեկտի կամ երևույթի ինտեգրալ պատկեր՝ արտահայտված միասնական սինթետիկ ցուցանիշներով: Այն առավելապես արտահայտում է տարածքի տոպոլոգիական շրջանացումն ըստ համալիր ցուցանիշների (օրինակ՝ լանդշաֆտային, կլիմայական և այլ տիպի շրջանացում):

C-23. Синтетичность геоизображений - Synthetical character of geoimages - Երկրապատկերների սինթետիկություն – Գրաֆիկական կերպարների իրական և իդեալական օբյեկտների, գործընթացների և գործոնների ընդհանրացված, ինտեգրալ բնութագրերը հաղորդելու ունակություն, որով առավելապես օժտված են սինթետիկ գնահատման-կանխատեսման քարտեզները:

C-24. Система автоматизированного проектирования - System of automated designing - Նախագծման ավտոմատացված համակարգ - Ծրագրային, տեխնիկական, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ միջոցների համալիր, որի միջոցով ավտոմատացվում են նախագծման գործընթացները: Այս ծրագրային միջոցներն օգտագործում են նաև թվային քարտեզներ կազմելու համար:

C-25. Система геоизображений - System of geoimages - Երկրապատկերների համակարգ - Որոշակի կերպով կազմակերպված պարզ և կոմբինացված, հարթ, ծավալային, դինամիկ երկրապատկերների ամբողջություն:

C-26. Система спутникового позиционирования - System of satellite positioning - Արբանյակային դիրքորոշման համակարգ - *St u Глобальная позиционирующая система:*

C-27. Система управления базами данных - Database management sistem / DBMS - Տվյալների հենքի կառավարման համակարգ - Ծրագրային միջոցների համակարգ, որը նախատեսված է տվյալների հենքի ստեղծման և օգտագործման համար: Տվյալների հենքի կառավարման համակարգը ներառում է տվյալների ներմուծման, պահպանման, տեղափոխման, մշակման, համակարգման և թարմացման միջոցներ:

C-28. Систематическая ошибка измерений - Systematic error of measurements - Չափման սխատեմատիկ սխալ - Այն առաջանում է ոչ կատարելագործված գործիքի, արտաքին պայմանների և այլ ազդեցությունների պատճառով, փոփոխվում է որոշակի օրենքով և մնում հաստատուն՝ չափման նույն պայմաններում: Սխատեմատիկ սխալ միևնույն մեծությամբ և միևնույն նշանով պարունակում է յուրաքանչյուր չափում:

C-29. Ситуация - Situation - Իրավիճակ - Բնակավայրերի, հաղորդակցության, բուսականության, ջրային տարածքների և տեղանքի այլ առանձնահատկությունների պատկերների բազմազանություն՝ պայմանական նշաններով ներկայացված քարտեզի կամ հատակագծի վրա:

C-30. Сканер - Scanner [*անգլ. scan - ուշադիր ուսումնասիրել, վերանայել*] - Սկաներ - 1. Մարք, որը հնարավորություն է տալիս ավտոմատ սկանավորման միջոցով պատկերները փոխակերպել ռաստրային ֆորմատի և բարձր լուծաչափով ներմուծել համակարգիչ: 2. Մարք, որը տեղադրվում է օդային և տիեզերական ապարատներում՝ հեռահար հանույթի համար: Այն իրականացվում է օբյեկտի բազմաշերտ սկանավորման միջոցով՝ գրանցելով սեփական կամ անդրադարձվող ճառագայթումը:

C-31. Сканерная космическая съемка - Scanner space survey - Սկաներային տիեզերական հանույթ - Տիեզերքից բազմասպեկտրալ օպտիկամեխանիկական համակարգերի (սկաներների) մի-

ջոցով կատարվող հանույթ, որը բազմաթիվ առանձին, միմյանց հաջորդող պիքսելներից ձևավորում է պատկեր:

C-32. Сканирование - Scanning - Սկանավորում - Պատկերի փոխակերպումն անալոգաթվային ձևից ռաստրային թվային ձևի:

C-33. Склонение магнитное - Magnetic (Compass) declination - Մագնիսական հակում - Տե՛ս *Մագնիտное склонение*:

C-34. Скрипт - Script [*անգլ. script - համակարգի գործողությունների համառոտ նկարագրություն*] - Սկրիպտ - Ոչ մեծ ծրագրային սցենար, որը գրված է որոշակի ծրագրավորման լեզվով:

C-35. Скрытые графические образы - Latent graphic images / shapes / forms - Թաքնված գրաֆիկական կերպարներ - Գրաֆիկական կերպարներ, որոնց ճանաչման համար պահանջվում է բացահայտել երկրապատկերների տարրերի միջև ոչ պարզ հարաբերությունները և կապերը, ինչի համար անհրաժեշտ է նախապես կատարել գրաֆիկական, տրամաբանական կամ այլ տեսակի ձևափոխություններ:

C-36. Сложное нивелирование - Complex leveling - Բարդ նիվելիրացում - Տե՛ս *Нивелирование сложное*

C-37. Сло́й - Layer - Շերտ - Որևէ տարածքի սահմաններում միևնույն դասին և կոորդինատային համակարգին պատկանող տարածական օբյեկտների ամբողջություն: Տարբերում են կետային, գծային և պոլիգոնային (բազմանկյուն), ինչպես նաև եռաչափ օբյեկտների շերտեր:

C-38. Случайная ошибка измерения - Accidental error of measurement - Չափման պատահական սխալ - Այն առաջանում է անհայտ պատճառներից: Պատահական սխալները ենթարկվում են վիճակագրական օրինաչափությանը, բայց ոչ՝ անալիտիկ օրինաչափությանը: Վերջիններիս հատկություններից բխում է կարևոր հետևություն՝ անվերջ մեծ թվով չափումների դեպքում բոլոր պատահական սխալների միջին թվաբանականը հավասար է զրոյի, իսկ վերջավոր թվով չափումների դեպքում՝ ձգտում է զրոյի:

C-39. Смешанная индикатриса отражения - Combined /

Mixed indicatrix of reflection - Անդրաձարձման խառն ինդիկատրիս - Դա ընկնող ճառագայթման անդրադարձն է երկու առավելագույն ուղղություններով, որոնցից մեկը հայելային անդրադարձման ուղղությունն է, մյուսը՝ դեպի լուսի աղբյուրը:

C-40. Снимок - Photograph / Print / Copy - Պատկեր - Երկրի մակերևույթի օբյեկտների տարածաժամանակային մոդել, որը հնարավորություն է տալիս օբյեկտների մասին տեղեկություններ ստանալ թվային կամ այլ լուսանկարների տեսքով:

C-41. Собственная тень - Natural shadow - Սեփական ստվեր - Առարկայի չլուսավորվող մաս, որի ուրվագիծն արտահայտում է օբյեկտի ձևը և չափը:

C-42. Совместимость геоизображений - Compatibility of geoimages - Երկրապատկերների համատեղելիություն - Տարբեր երկրապատկերներում գրաֆիկական կերպարների համընկումը, ինչը դրսևորվում է նրանում, որ տարբեր աղբյուրներից ստացված օբյեկտները միասնական են, փոխադարձաբար լրացնում են միմյանց, ենթակա են համատեղ վերլուծության, մշակման և միավորման որպես սինթետիկ կերպարներ:

C-43. Солнечно-синхронные орбиты - Solar synchronous orbits - Արեգակասինխրոն ուղեծրեր - Հանույթի ուղեծրեր, որոնց դեպքում Երկրի մակերևույթի լուսավորվածությունը (Արեգակի բարձրությունը) երկար ժամանակ մնում է գրեթե անփոփոխ:

C-44. Сопоставительное дешифрирование - Contrastive interpretation - Համեմատական վերծանում - Երկրաշերտի (զոնայ) նկարների սերիաների համեմատում՝ օգտագործելով նկարում պատկերված օբյեկտների սպեկտրալ կերպարները: Այն ընդգրկում է հետևյալ փուլերը՝ նկարների միջոցով օբյեկտի սպեկտրալ պատկերների որոշում, դրանց համեմատումը հայտնի սպեկտրալ անդրադարձնող ունակության հետ, և օբյեկտի ճանաչում:

C-45. Составительский оригинал - Compilation sheet - Կազմողական բնօրինակ - Արտահայտում է բնօրինակ քարտեզի ճշգրիտ և ամբողջական բովանդակությունը, կազմվում է գրաֆի-

կական բարձր որակով՝ բոլոր կանոններին և պահանջներին համապատասխան:

C-46. Составление карт - Compilation of maps - Քարտեզների կազմում - Քարտեզի բնօրինակի գրաֆիկական կառուցում՝ որպես իրականության որոշակի կողմերի տարածական մոդել:

C-47. Спектр электромагнитных волн - Spectrum of electromagnetic waves [լատ. spectrum - տեսլականը] - էլեկտրամագնիսական ալիքների սպեկտր - Ըստ իրենց երկարության (կամ հաճախականության)՝ դասակարգված էլեկտրամագնիսական ալիքների հաջորդականություն:

C-48. Спектральная отражательная способность - Spectral reflecting ability - Լուսապատկերային (սպեկտրային) անդրադարձման ունակություն - Օպտիկական անդրադարձման ունակություն, որը կախված է օբյեկտի հատկություններից, վիճակից, ինչպես նաև տարվա եղանակից և օբյեկտի լուսավորվածությունից: Երկրի մակերևույթի տարբեր դասի օբյեկտները (լեռնային ապարներ, հողեր, բուսականություն, ջրային ավազաններ, ձյան ծածկույթ) ունեն տարբեր անդրադարձման հատկություն:

C-49. Спектральная шкала - Spectral scale - Սպեկտրային սանդղակ - Սպեկտրալ սանդղակների առաջացման պատճառ են հանդիսանում կանաչաշագանակագույն ավանդական սանդղակները, քանի որ ունեն ներդաշնակության թույլ էֆեկտ: Այդ սանդղակների վերին աստիճաններում շագանակագույնը փոխվում է նարնջագույնից կարմիրի, որն էլ ամպահովում է պատկերի ներդաշնակությունը: Իսկ ստորին աստիճաններում հազեցված կանաչ գույնը փոխարինվում է առավել բաց կանաչ գույնով:

C-50. Спектральное разрешение снимков - Spectral resolution of photographs - Նկարների սպեկտրային լուծաչափ - Հանույթի սպեկտրալ գոտիների լայնությունը, որը չափվում է նանոմետրերով (նմ) և միկրոմետրերով (մկմ):

C-51. Спектральные снимки - Multispectral photographs - Սպեկտրազոնալ նկարներ - Նկարներ, որոնք ստացվում են սպեկտրազոնալ լուսանկարչական ժապավենի միջոցով, սակայն աղավաղված գույներով, և որոնց վրա երևում են ուսումնասիր-

վող օբյեկտների գունային կոնտրաստները (հակադրությունները):

C-52. Спектрометрирование - Spectro-metring - Սպեկտրաչափություն - Սպեկտրալ պայծառության գործակիցների որոշում՝ հատուկ սարքավորումների միջոցով:

C-53. Спектрометрическая съёмка - Spectrometric survey - Սպեկտրաչափական հանույթ - Չափվում է տեղանքի լեռնային ապարների անդրադարձման ունակությունը, ինչի հիման վրա վերծանվում է տեղանքի ապարների կազմությունը: Տարբերում են այդ հանույթի հետևյալ տեսակները՝ 1. միկրոալիքային (0,3 սմ-1,0 մ), որը զերծ է մթնոլորտի ազդեցությունից, 2. Ինֆրակարմիր (ԻԿ) կամ ջերմային (0,30-1.000 մկմ), որը գրանցում է օբյեկտների ջերմաստիճանային անհամասեռությունները, 3. Տեսանելի և նրան մոտ ԻԿ սպեկտրի ճառագայթման սպեկտրաչափում:

C-54. Способ наименьших квадратов - least squares method - Նվազագույն քառակուսիների եղանակ - Չափման արդյունքների մաթեմատիկական մշակման եղանակ, որը հիմնված է տվյալները մոտարկող ֆունկցիայի և չափվող փոփոխականի արժեքների տարբերությունների քառակուսիների գումարի նվազարկման (մինիմիզացման) սկզբունքի վրա:

C-55. Спутниковая система позиционирования: Спутниковая система навигации - Sattelite navigation (positioning) System - Արբանյակային դիրքորոշման (նավիգացիոն) համակարգ - *Տե՛ս և Գլոբальная позиционирующая система:*

C-56. Среднемасштабная географическая карта - Medium scale geographic map - Միջին մասշտաբի աշխարհագրական քարտեզ - Ընդգրկում է 1:200.000-1:1.000.000 մասշտաբի (ներառյալ 1:1.000.000) քարտեզները:

C-57. Среднемасштабные топографические карты - Medium scale topographic maps - Միջին մասշտաբի տեղագրական քարտեզներ - 1:100 000-1:200.000 մասշտաբի քարտեզներ:

C-58. Средний меридиан - Mean / Average meridian - Առանցքային միջօրեական - Յուրաքանչյուր գեոդեզիական գո-

տու (Գրինվիչից սկսած 60° պարբերությամբ) միջին կամ առանց-
քային միջօրեականը:

C-59. Средняя ошибка - Average error - Միջին սխալ - St' u
Ошибка средняя:

C-60. Средняя квадратическая ошибка - Average quadratic
error - Միջին քառակուսային սխալ - St' u *Ошибка средняя квад-*
ратическая:

C-61. Стереограф - Stereograph [*հուն. stereos - ծավալային, եռաչափ և grapho - գրել*] - Տարածագրիչ (ստերեոգրաֆ) - Սարք՝ տարածական (ծավալային) տեղագրական հանույթի համար:

C-62. Стереоскопатор - Stereocomparator - Տարածահամեմատիչ (ստերեոկոմպարատոր) - Սարք, որը նախատեսված է նկարի կետերի հարթ կոորդինատների և պարալաքսների որոշման համար (սովորաբար 0,01 մմ-ից ոչ պակաս ճշտությամբ):

C-63. Стереоскоп - Stereoscope - Տարածադիտակ (ստերեոսկոպ) - Սարք, որը նախատեսված է տարածական (ծավալային) դիտարկման և գույգ նկարներում պարզ չափումներ կատարելու համար:

C-64. Стереоскопическая съёмка - Stereoscopic survey - Տարածադիտական (ստերեոսկոպային) հանույթ - Լուսանկարահանման գործողություն, որի ընթացքում օբյեկտը նկարահանվում է երկու (կամ ավելի) տարբեր կետերից: Դրա արդյունքում լուսաժապավենի վրա ստացվում են օբյեկտի երկու պատկերներ, որոնք կոչվում են տարածական (ստերեո) գույգ: Հատուկ դիտակների օգնությամբ օբյեկտի (օրինակ՝ ռելիեֆի) գույգ պատկերները դիտելիս դիտորդը ստանում է ծավալային տպավորություն:

C-65. Стереоскопическое зрение - Stereoscopic(eye) sight - Ծավալային (ստերեոսկոպային) տեսողություն - Աչքի հատկություն, որը հնարավորություն է տալիս միավորել երկու տեսողական պատկերները մեկում՝ առաջացնելով տարածական խորության ընկալում, ինչպես նաև հնարավորություն է տալիս ճշգրիտ գնահատել օբյեկտների տարածական բաշխումն ու ընկալել դրանց եռաչափ տեսքը:

C-66. Стереотопографическая съёмка - Stereotopographic

survey - Տարածատեղագրական հանույթ - Ст' u Съёмка стерео-топографическая:

C-67. Стереофотограмметрическая обработка снимков - Stereophotogrammetrical processing / Machining of photographs - Նկարների տարածական (ծավալային) լուսանկարաչափական մշակում - Տեղանքի կետերի բարձրությունների որոշում և դրանց ներկայացում թվերի (բացարձակ արժեք, վերագանցում) կամ գծերի (հորիզոնական, պրոֆիլ) տեսքով:

C-68. Стереофотограмметрия - Stereophotogrammetry - Տարածական (ծավալային) լուսանկարաչափություն - Եռաչափ երկրապատկերով լուսանկարաչափական որոշումներ, որը կատարվում է օպտիկամեխանիկական և օպտիկաէլեկտրոնային սարքերով:

C-69. Стереоскопическое визирование - Stereoscopic viewing / alignment - Ստերեոսկոպային դիտասեռում - Չափիչ սարքի միջոցով հատուկ դրոշմների տեղադրում տեղանքի ծավալային մոդելի վրա:

C-70. Структурометрия - Structure-metry - Կառուցվածքաչափություն - Օբյեկտի չափերի ու կառուցվածքի որակական գնահատումն՝ ըստ երկրապատկերի վրա նրա գրաֆիկական կերպարի:

C-71. Сферические координаты - Spherical coordinates - Սֆերիկ կոորդինատներ - Կազմված են երեք մեծություններից՝ շառավիղ-վեկտորից, երկրակենտրոն լայնությունից և երկայնությունից:

C-72. Сфероид - Spheroid [հուն. *sphaira* - գունդ և *eidos* - տեսք] - Սֆերոիդ - Մարմին, որը ձևով համընկնում է պտտման էլիպսոիդի հետ և համապատասխանում է հավասարակշիռ ու համասեռ հեղուկ գանգվածով մարմնի:

C-73. Схематизация - Schematization - Մխեմայացում (Պարզեցում) - Երկրորդական դետալների հեռացում և քարտեզագրական պատկերի ներկայացում՝ պարզ տեսքով:

C-74. Сцена - Scene - Տեսարան - 1. Համակարգչային գրաֆիկայում եռաչափ տարածություն՝ այնտեղ գտնվող օբյեկտների

հետ միասին: 2. Հեռահար զոնդավորման տերմին. տարածության մաս, որը գտնվել է հանույթ կատարող սարքավորման տեսադաշտում և գրանցվել որպես անալոգային կամ թվային պատկեր:

C-75. **Сшивка** - Map joining - Կցակարում - Երկու առանձին հարակից թվային քարտեզների կամ USZ շերտերի ավտոմատացված միավորում, ինչպես նաև առանձին թվային նկարների կամ այլ թվային (ռաստրային ֆորմատով) պատկերների մոտաժ՝ քարտեզ, պատկեր, շերտ ստանալու նպատակով: Այս պրոցեսի մեջ մտնում է համատեղման գործողությունը: Կցակարի հետադարձ գործողությունը կոչվում է մասնատում:

C-76. **Съемка аэрофототопографическая** - Aerophoto - topographic(al) survey - Օդալուսանկարչական տեղագրական հանույթ - Տեղագրական հանույթ, որն իրականացվում է թռչող սարքերի վրա տեղադրված բարձր ճշտություն ունեցող սարքերով և ծավալատեղագրական ու կոմբինացված մեթոդներով:

C-77. **Съемка вертикальная** - Vertical survey - Ուղղաձիգ հանույթ - Հանույթ, որն իրականացվում է տեղանքի կետերի բարձրությունների որոշման նպատակով:

C-78. **Съемка гидролокационная** - Hydrosonar survey - Հիդրոլոկացիոն հանույթ - Ծովային շելֆի կամ այլ ջրային ավազանի հատակի մակերևույթի հանույթ՝ հիդրոլոկատորի միջոցով՝ նախնական տվյալներ ստանալու նպատակով:

C-79. **Съемка горизонтальная** - Horizontal survey - Հորիզոնական հանույթ - Տեղագրական հանույթի տեսակ, որի արդյունքում ստանում են տեղանքի հատակագիծն առանց ռելիեֆի բարձրության նիշերի:

C-80. **Съемка гравиметрическая** - Gravimetric(al) survey - Ծանրաչափական (գրավիմետրական) հանույթ - Ծանրաչափական աշխատանքների ամբողջություն, որն իրականացվում է Երկրի տվյալ հատվածի ծանրաչափական դաշտի ուսումնասիրման համար: Տարբերում են ցամաքային, ծովային և օդածանրաչափական հանույթներ:

C-81. **Съемка инструментальная** - Instrumental survey - Գործիքային հանույթ - Մենզուլային տեղագրական հանույթ,

որն, ի տարբերություն թեթև մենզուլաներով իրականացված կիսագործիքային հանույթի, իրականացվում է, այսպես կոչված, մեծ մենզուլաների միջոցով:

С-82. Съёмка комбинированная - Combined survey - Կոմբինացված հանույթ - Լուսանկարչական տեղագրական հանույթի տեսակ, որի դեպքում ռելիեֆի հանույթը և վերծանումը իրականացվում է դաշտում՝ նախապես պատրաստված լուսանկարչական հատակագծի վրա:

С-83. Съёмка стереотопографическая - Stereotopographic(al) survey - Տարածատեղագրական հանույթ - Լուսանկարչական տեղագրական հանույթ, որի դեպքում տեղանքի մասին տվյալները ստանում են օդալուսանկարների միջոցով:

С-84. Съёмка тахеометрическая - Tacheometrical survey - Տախեոմետրական (հեռաչափական) հանույթ - Տեղագրական հանույթ, որը կատարվում է թեոդոլիտի, տախեոմետրի, չափաձողի կամ անդրադարձիչի միջոցով, ինչի արդյունքում ստացվում է իրադրության և ռելիեֆի պատկերմամբ տեղանքի հատակագիծը:

С-85. Съёмка - Survey - Հանույթ - Տեխնոլոգիական պրոցես, որի հիմնական նպատակն է տեղանքի բնական կամ արհեստական օբյեկտների մասին սկզբնական չափերի մետրական, իմաստաբանական (սեմանտիկական) և տոպոլոգիական տեղեկատվության ստացումն ու գրանցումը:

С-86. Съёмочная трапеция - Surveying trapezium - Հանութային տրապեցիա (սեղան) - *Տե՛ս Կ Կր. Трапеция съёмочная.*

С-87. Съёмочное обоснование - Surveying justification - Հանութային հիմնավորում - Գեոդեզիական ցանցի կետեր, որոնք օգտագործվում են տեղագրական հանույթի համար:

T-1. Тахеометр - Tacheometer [*հուն. ταχέος- արագ*] - Տախեոմետր (հեռաչափ) - Գեոդեզիական սարք, որը նախատեսված է հորիզոնական և ուղղաձիգ անկյունների, գծերի երկարությունների և վերագանցումների չափման համար: Կիրառվում է տեղագրական հանույթի և ինժեներագեոդեզիական խնդիրների լուծման համար:

T-2. Тахеометрический ход - Tacheometric course Տախեոմետրական (հեռաչափային) ընթացք - Տե՛ս *Ход тахеометрический*:

T-3. Тахеометрия - Tacheometry - Տախեոմետրիա (հեռաչափություն) - Տեղանքում կետերի տեղադիրքի որոշման մեթոդ ուղղաձիգ և հորիզոնական անկյունների միջոցով, ինչպես նաև կետերի միջև հեռավորությամբ:

T-4. Телевизионная космическая съемка - Television space survey - Հեռուստատեսային տիեզերական հանույթ - Օպերատիվ հանույթ, որը կատարվում է տիեզերքից հեռուստատեսային սարքավորումների միջոցով՝ սպեկտրի տեսանելի և մոտակա ինֆրակարմիր տիրույթներում:

T-5. Телекоммуникационное картографирование - Telecommunication mapping - Հեռահաղորդակցական քարտեզագրում - Քարտեզների և այլ երկրապատկերների կազմում՝ հեռակապը համակարգչային ցանցով տարածելու և օգտագործելու նպատակով:

T-6. Тело - Body - Մարմին - Ծավալային տարածական օբյեկտ: Ռաստրային եռաչափ մարմինները կազմվում են խորանարդային տարրերի «ոքսելներից», իսկ վեկտորայինը՝ TIN մոդելի եռաչափ տարատեսակով:

T-7. Тематическая карта - Thematic map - Թեմատիկ քարտեզ - Բնական, հասարակական երևույթների, դրանց զուգակցումների և քարտեզների տեսակ: Թեմատիկ քարտեզի բովանդակությունը որոշվում է կոնկրետ թեմայից ելնելով (օրինակ՝ երկրաբանական, սոցիալ-տնտեսական, դեմոգրաֆիական և այլն): Պատկերվող երևույթների ամփոփման աստիճանից կախված

տարբերվում են վերլուծական, համալիր (կոմպլեքսային) և սինթետիկ քարտեզներ:

T-8. Тематическая морфометрия - Thematic morphometry - Թեմատիկ ձևաչափություն - Ձևաչափության բաժին, որն զբաղվում է թեմատիկ քարտեզների և այլ երկրապատկերների տվյալներով, օբյեկտների ձևի և կառուցվածքի չափումներով:

T-9. Тени в углублениях - Shades in hollows - Ստվերը խորություններում - Պատկերների մութ հատվածները, որոնք առաջանում են լույսի բազմակի անդրադարձի հետևանքով:

T-10. Теодолит - Theodolite - Թեոդոլիտ - Գեոդեզիական անկյունաչափական գործիք, որի միջոցով դաշտային պայմաններում կատարվում է հորիզոնական անկյունների, ուղղաձիգ անկյունների և հեռավորությունների չափում: Թեոդոլիտը կազմված է երեք հիմնական մասից՝ հորիզոնական և ուղղաձիգ սկավանակներից ու դիտակից:

T-11. Теодолитная съемка - Theodolitic survey - Թեոդոլիտային հանույթ - Տեղանքի հորիզոնական գեոդեզիական հանույթ, որն իրականացվում է թեոդոլիտի միջոցով՝ տեղանքի ուրվագծային հատակագիծ կազմելու համար: Ի տարբերություն հեռաչափական (տախեոմետրական) և լուսանկարչական-թեոդոլիտային հանույթի, թեոդոլիտային հանույթի դեպքում տեղանքի ռելիեֆի բարձունքային բնութագրիչները չեն որոշվում:

T-12. Теория геоизображений - Theory of geoimages - Երկրապատկերների տեսություն - Գեոիկոնիկայի (երկրապատկերաբանության) բաժին, որն ուսումնասիրում է երկրապատկերների հատկությունները, դրանց փոխադարձ համատեղելիության հարցերը, ինֆորմատիվության գնահատման և բարձրացման եղանակները, գրաֆիկական կերպարների ճանաչման հիմունքները և տեսողական ընկալման օրինաչափությունները:

T-13. Теория ошибок измерений - Theory of measurement errors - Չափման սխալների տեսություն - Հավանականության տեսության բաժին, որի հիմնական խնդիրն է բացահայտել չափման սխալների հավանական մեծությունը և բաշխման օրենքները:

T-14. Тепловая инфракрасная съемка - Thermal infrared survey - Ջերմային ինֆրակարմիր հանույթ - Երբ գրանցվում է Երկրի մակերևույթի սեփական ջերմային ճառագայթումը միջին (1,35-3,5մկմ) և հեռավոր (3,5-1.000 մկմ) ինֆրակարմիր տիրույթներում: Կարող է կատարվել գիշերային ժամերին:

T-15. Тепловое разрешение снимков - Thermal resolution of photographs - Նկարների ջերմային լուծաչափ - Տարբեր օբյեկտների ջերմաստիճանների տարբերություն, որը հնարավոր է գրանցել ջերմային սկաների միջոցով (լավագույն նկարների ջերմային լուծաչափը կազմում է մեկ աստիճանի տասներորդ մասը (0,1C°):

T-16. Топографическая карта - Topographic map - Տեղագրական քարտեզ - 1:10.000 և ավելի մանր մասշտաբի ընդհանուր տեղագրական քարտեզներ:

T-17. Топографическая съемка - Topographic survey - Տեղագրական հանույթ - Տեղագրական քարտեզներ և հատակագծեր կազմելու աշխատանք:

T-18. Топографические условные знаки - Topographic symbols / Map symbols / Conventional signs - Տեղագրական պայմանական նշաններ - Տեղագրական օբյեկտների նշանակման միասնական համակարգ, որը հորիզոնականների հետ միասին քարտեզի վրա պատկերում է տեղանքի իրական պատկերը:

T-19. Топография - Topography [հին հուն. *τόπος* - տեղ և *γραφω* - գրել] - Տեղագրություն (Տոպոգրաֆիա) - Գիտության և գործնական հետազոտությունների ուղղություն՝ գեոդեզիայի և քարտեզագրության սահմանին, որն ուսումնասիրում է տեղանքի երկրաչափական և աշխարհագրական առանձնահատկությունները՝ կատարելով տեղագրական հանույթ և կազմելով տեղագրական քարտեզներ ու հատակագծեր:

T-20. Топологизация - Topologization [հուն. *tipos* - տեղ և *logos* - բան, ուսմունք] - Տոպոլոգիզացիա - Իրականացվում է վեկտորային ոչ տոպոլոգիական մոդելը տոպոլոգիական վեկտորային տեսքի բերելու գործողության արդյունքում:

T-21. Топология - Topology [*հին հուն. τόπος - տեղ և λόγος - բան, ումունք*] - Տոպոլոգիա - 1. Մաթեմատիկայի ճյուղ, որն ուսումնասիրում է մարմինների այն հատկությունները, որոնք հիմնված են անսահման մոտիկության հասկացողության վրա: 2. ԱՏՀ-ում, տարածական օբյեկտների նկարագրության մաս, որը ներկայացնում է երկրաչափական օբյեկտների և դրանց հատվածների փոխադարձ դիրքը:

T-22. Топонимия - Топоним / place name [*հին հուն. τόπος - տեղ + ὄνομα - անուն, անվանում*] - Տեղանվանացանկ - Քարտեզագրման օբյեկտների սեփական աշխարհագրական անվանումները, այդ թվում՝ լեռնագրական, ջրագրական և այլ միավորների անվանումները:

T-23. Точечный способ - Point contact method - Կետային եղանակ - Քարտեզագրման եղանակ, որը կիրառվում է զանգվածային, բայց ոչ համատարած երևույթների պատկերման համար: Յուրաքանչյուր կետ ունի որոշակի «կշիռ» և ներկայացնում է քարտեզագրվող երևույթի որոշակի քանակ: Այս եղանակով սովորաբար արտահայտում են գյուղական բնակչության թիվը, ցանքատարածությունները և այլն:

T-24. Точка - Point - Կետ - Զրոչափ օբյեկտ, տարածական օբյեկտների չորս հիմնական տեսակներից մեկը (նաև գիծ, բազմանկյուն, մակերևույթ), որը բնութագրվում է կոորդինատներով և ատրիբուտներով: Կետային օբյեկտների ամբողջությունը ձևավորում է ԱՏՀ կետային շերտ:

T-25. Точка геодезическая - Geodetic point - Գեոդեզիական կետ - Տեղանքում ժամանակավոր նշանով ամրագրված գեոդեզիական կառույցների տարր, որի կոորդինատները և բարձրությունը որոշվում են գեոդեզիական չափումներով:

T-26. Точка нулевых искажений - Point of zero distortions - Զրոյական աղավաղման կետ - Կետ, որտեղ բացակայում է աղավաղումը և պահպանված է գլխավոր մասշտաբը:

T-27. Точность графическая предельная - Maximum graphic exactness - Սահմանային գրաֆիկական ճշտություն - Տվյալ մասշտաբի քարտեզի ճշտությունը համարվում է տեղանքում մեկ-

րերով արտահայտված այն տարածությունը, որը համապատասխանում է քարտեզի վրա 0,1 մմ երկարությամբ զծի հաստվածին:

T-28. Точность масштаба карты предельная - Maximum exactness of map scale - Քարտեզի մասշտաբի սահմանային ճշտություն - Տեղանքում գտնվող տարածություն, որը համապատասխանում է քարտեզի 0,1 մմ-ին: Դա առավելագույն ճշտությունն է, որը հնարավոր է չափել կամ տեղադրել քարտեզի վրա:

T-29. Точность результатов дешифрирования - Exactness of interpretation results - Վերծանման արդյունքների ճշտություն - Վերծանված հայտնի ուրվագծերի տեղադիրքի սխալի չափը՝ գեոդեզիական հիմքի կետերի կամ միմյանց նկատմամբ:

T-30. Транспортир - Protractor [*ֆր. transporteur, լատ. transporto - տեղափոխում*] - Անկյունաչափ - Գործիք, որը ծառայում է հարթության վրա անկյունների կառուցման և չափման համար: Այն պատրաստում են մետաղից կամ այլ նյութերից՝ կիսաշրջանի տեսքով, որն անշարժ կերպով միացված է լինում քանոնին:

T-31. Трансформация проекций - Transformation of projections [*լատ. transformatio - փոխարկում*] - Պրոյեկցիաների ձևափոխություն - Տարածական օբյեկտների երկչափ պայմանական ուղղանկյուն կոորդինատների փոխակերպման գործողություն, որը կատարվում է քարտեզագրական մեկ պրոյեկցիայից մյուսին անցնելիս:

T-32. Трансформированные аэроснимки - Transformed aerial photographs - Ձևափոխված օդալուսանկարներ - Ст' u Аэроснимки трансформированные.

T-33. Трапеция съемочная - Surveying trapezium [*հին լատ. траπέζιον - տեղանիկ, տրապեչա - տեղան, ճաշի տեղան*] - Հանույթային տրապեցիա - Երկրային էլիպսոիդի մակերևույթի հաստված՝ սահմանափակված միջօրեականներով և զուգահեռականներով, որոնք որոշվում են տեղագրական քարտեզների անվանացանկով (նումենկլատուրայով):

T-34. Трасса космического летательного аппарата - Course / direction of space aircraft - Տիեզերական թռչող ապարատի

ուղեծիր - Թռչող սարքի ուղեծրի պրոյեկցիան, որը գտնվում է պտտվող Երկրի մակերևույթին՝ որոշակի կետերով նրա անցնելու ժամանակի նշումով:

T-35. **Триангуляция** - Triangulation [*լատ. triangulatio - եռանկյունիների կազմ*] - Եռանկյունավորում - Գեոդեզիական ցանցի կառուցման եղանակ, որտեղ ցանցը ներկայացվում է որպես հարթ եռանկյունիների համակարգ: Այն կառուցելու համար անհրաժեշտ է ունենալ եռանկյունիների չափված ներքին անկյուններն ու առնվազն մեկ եռանկյան կողմի երկարությունը և մեկ գագաթի կոորդինատները: Ցանցի մյուս եռանկյունիները ստացվում են եռանկյունաչափական կառուցման միջոցով:

T-36. **Триангуляция Делоне** - Delone's triangulation - **Դելոնեի եռանկյունավորում** - Եռանկյունային ցանց, որը կազմվում է կետային օբյեկտների բազմությունից: Կետերը միմյանց հետ միացվում են չհատվող հատվածներով: Օգտագործվում է հիմնականում TIN մոդելում՝ ռելիեֆի թվային մոդել կառուցելու նպատակով:

T-37. **Тригонометрическое (геодезическое) нивелирование** - Trigonometric (Geodetic) leveling - **Եռանկյունաչափական (գեոդեզիական) նիվելիրացում** - Ст' u *Нивелирование тригонометрическое (геодезическое)*:

T-38. **Трилатерация** - Trilateration [*լատ. trilaterus - երեք կողմերով*] - **Տրիլատերացիա** - Տեղանքում գեոդեզիական կետերի դիրքերի որոշման եղանակ, որն իրականացվում է տեղանքում կից եռանկյունների համակարգի կառուցման միջոցով: Եռանկյունների կողմերի երկարությունները որոշվում են հեռաչափով, իսկ անկյունները և գագաթների կոորդինատները հաշվարկվում են անալիտիկ եղանակով (կոսինուսների բանաձևով):

Կ-1. Увеличение зрительной трубы - Magnification of telescope - Դիտակի խոշորացում - որոշվում է դիտակի օբյեկտիվի և օկուլյարի կիզակետային հեռավորությունների հարաբերությամբ:

Կ-2. Угол вертикальный - Vertical angle - Ուղղաձիգ անկյուն - Տե՛ս *Вертикальный угол*.

Կ-3. Угол горизонтальный - Horizontal angle - Հորիզոնական անկյուն - Գեոդեզիայում չափվող անկյունների կողմերը սովորաբար չեն գտնվում մեկ հարթության մեջ: Այդպիսի տարածական անկյան պրոյեկցիան հորիզոնական (քարտեզի կամ հատակագծի) հարթության վրա կոչվում է հորիզոնական անկյուն:

Կ-4. Угол дирекционный - Directional angle - Դիրեկցիոն անկյուն - Տե՛ս *Дирекционный угол*.

Կ-5. Угол наклона - Slope / Declinity angle - Թեքության անկյուն - Լանջի տարածական կողմնորոշման ձևաչափական բնութագրիչներից մեկը: Թեքության անկյունը տվյալ կետում կազմվում է նրա առավելագույն թեքության ուղղությամբ և հորիզոնական հարթությամբ: Հաշվարկվում է ռելիեֆի թվային մոդելի տվյալներով՝ որպես բարձրությունների ածանցյալ մեծություն:

Կ-6. Угол сферический - Spherical angle - Սֆերիկ անկյուն - Գնդի երկու մեծ շրջանների հարթություններով կազմված երկնիստ անկյուն, որը չափվում է այդ երկու հարթություններով կազմված հարթ անկյամբ:

Կ-7. Узел - Knot - Հանգույց - Տարածական օբյեկտների վեկտորատոպոլոգիական ներկայացման մեջ (գծահանգուցային մոդելում) աղեղների սկզբի և վերջի կետերը: Հանգույցները բնութագրվում են աստիճաններով, որոնք սահմանում են նրա կայերը այդտեղ հաստիվող բոլոր աղեղների հետ:

Կ-8. Указатель географических названий - Index / Marker of geographic names - Աշխարհագրական անվանումների ուղեցույց - Այբբենական կարգով դասավորված աշխարհագրական անվա-

նումներ և դրանց կից համապատասխան ինդեքսների համա-
կարգ:

У-9. Уклон местности - Declivity of area / locality - Տեղանքի
թեքություն - Տեղանքի թեքության ցուցանիշ գեոդեզիայում, որի
մեծությունը հավասար է դիտարկվող ուղղությամբ բարձրու-
թյունների տարբերության հարաբերությանը հորիզոնական տա-
րածության մեջ մինչև այն կետը, որտեղ այդ տարբերությունը
դիտարկվել է:

У-10. Уклонение отвесной линии - Deviation of sheer /
vertical line - Ուղղաձիգ գծի խտորում - Տվյալ կետում ուղղաձիգ
գծի և երկրային էլիպսոիդի մակերեսի ուղղահայացի (նորմալի)
միջև եղած անկյունը:

У-11. Ультрафиолетовое излучение - Ultra-violet radiation -
Ուլտրամանուշակագույն ճառագայթում - Էլեկտրամագնի-
սական ալիքներ՝ 0,01-0,40 մկմ երկարության տիրույթում:

У-12. Управление генерализацией - Management of
generalization - Ընհանրացման կառավարում - Ընդհանրացման
նպատակաուղղված գործողություն, որի արդյունքում ստանում
են նախանշված ընդհանրացման մակարդակ ունեցող երկրա-
պատկերներ: Գործողությունը կատարվում է համաձայն սահ-
մանված պարամետրերի և նախատեսված ալգորիթմների:

У-13. Уравнивание - Equalization / Compensation - Հա-
վասարեցում - Գեոդեզիական չափումների մշակման մաթեմա-
տիկական եղանակ, որի նպատակն է ստանալ Երկրի մակե-
րևույթի կետերի գեոդեզիական կոորդինատների առավել հավա-
նական արժեքները և հաշվարկների ճշտության գնահատականը:

У-14. Уровенная поверхность - Level surfice - Մակար-
դակային մակերևույթ - Ст' u Поверхность уровенная:

У-15. Уровень геодезический - Geodetic level (gauge) -
Գեոդեզիական հարթաչափ - Մարք, որը ծառայում է ուղղաձիգ
ուղղության նկատմամբ գեոդեզիական գործիքի և նրա հանգույց-
ների դիրքը որոշելու համար:

У-16. Уровни генерализации аэрокосмических снимков -
Levels of generalization of aerospace photographs - Օդատիե-

գերական նկարների ընդհանրացման մակարդակներ - Տարբեր նկարներ, որոնք միմյանցից տարբերվում են մասշտաբով և պատկերը ձևավորող հիմնական բաղադրիչներով: Առանձնացնում են ընդհանրացման հինգ մակարդակ՝ մանրամասնից մինչև զլոբալ, որոնք մեկը մյուսից հաջորդաբար տարբերվում են մասշտաբի 3-4 անգամ նվազեցմամբ:

У-17. Условия проведения геодезических измерений - Conditions of of geodetic measurements - Գեոդեզիական չափումների պայմաններ - Արտաքին գործոններ (կլիմայական, մեխանիկական, էլեկտրամագնիսական, լուսային, աղմկային և այլն), որոնք առկա են տվյալ աշխատանքային վայրում՝ գեոդեզիական չափումներ կատարելու ժամանակ:

У-18. Условные знаки топографические - Topographic map signs / sybols - Տեղագրական պայմանական նշաններ - St u Топографические условные знаки:

У-19. Условные знаки - Sumbols / Conventional signs / Map symbols - Պայմանական նշաններ - Գրաֆիկական սիմվոլներ, որոնց միջոցով քարտեզի վրա արտահայտվում են օբյեկտների տեսքը, տեղադիրքը, ձևը, չափերը, քանակական և որակական բնութագրիչները:

У-20. Условные проекции - Conventional projections - Պայմանական պրոյեկցիաներ - Նախապես որոշված պայմաններով կառուցված քարտեզագրական պրոեյկցիա, որի պայմանները կարող են վերաբերել քարտեզագրական ցանցի տեսակին, միջօրեականների և զուգահեռականների ձևին, անկյունների և մակերեսների առավել թույլատրելի չափին: Դրանց թվին են պատկանում կեղծ ազիմուտային, կեղծ կոնային, կեղծ զլանային և այլ պրոյեկցիաները:

У-21. Утолщенная горизонталь - Thick contour - Հաստացված հորիզոնական - Հատման բարձրության հնգապատիկ մեծությանը համապատասխանող հոծ հորիզոնական, որը հորիզոնականների հաշվարկը դյուրացնելու նպատակով ցույց է տրվում հաստացված զծով:

Փ-1. Файл - File - Ֆայլ - 1. Էլեկտրոնային կրիչների վրա միատեսակ գրանցումների անվանված ամբողջություն: 2. Արտաքին հիշողության (օրինակ՝ մագնիսական սկավառակ) անվանված տիրույթ:

Փ-2. Физикографическая карта (геоизображение) – Physiographic map (geoimage) - Ֆիզիոգրաֆիկ քարտեզ (երկրապատկեր) - Ցամաքի կամ ծովի հատակի ռելիեֆի քարտեզագրական նկար, որը տալիս է մակերևույթի պլաստիկ, ծավալային տպավորություն: Այս տեսակի քարտեզների համար օգտագործվում են հատուկ պայմանական նշաններ կամ հեռանկարային տեղաշարժով հորիզոնականներ:

Փ-3. Фиксированная графическая среда - Fixed graphic environment - Ֆիքսված գրաֆիկական միջավայր - Ֆիքսված գրաֆիկական միջավայրը համակարգ է երկրապատկերները կրող կոշտ հիմքերով:

Փ-4. Фильтрация - Filtration / Seepage / Percolation [*լատ. filtrum - ֆալիթր*] - Չտում - Փոխակերպում, որի արդյունքում որոշակի խնդրի լուծման համար ավելորդ տեղեկատվությունը հեռացվում է, իսկ անհրաժեշտը առաջ է բերվում, և հեշտանում է նրա օգտագործումը:

Փ-5. Фокальная плоскость объектива аэрофотоаппарата - Focal plane of aerial camera objective - Օդալուսանկարչական խցիկի օբյեկտիվի կիզակետային հարթություն - Հարթություն, որտեղ հատվում են օբյեկտիվում բեկված այն ճառագայթները, որոնք անդրադառնում են նկարահանվող օբյեկտից:

Փ-6. Фокусное расстояние аэрофотоаппарата - Focal distance (interval) of aerial camera - Օդալուսանկարչական խցիկի կիզակետային հեռավորությունը - Խցիկի օբյեկտիվի կենտրոնից մինչև լուսանկարվող մակերևույթն եղած հեռավորությունը:

Փ-7. Формат - Format [*լատ. forma - տեսք, արտաքինը*] - Չևաչափ (Ֆորմատ) - 1. Տվյալների դասակարգման և ներկայացման կարգ, միջոց, որը գտնվում է համակարգչի հիշողությունում, տվյալների հենքում, փաստաթղթերում կամ արտաքին կրիչներ-

րում: 2. ԱՏՀ-ում, մեքենայական գրաֆիկայում կամ պատկերի մշակման մեջ տարածական տվյալների կամ կոնկրետ համակարգի տվյալների ձևաչափի, ծրագրային միջոցների, տվյալների ստանդարտացման, տվյալների փոխանակման մեքենայական գործողությունների իրականացման ընդհանուր անվանումը:

Փ-8. **Форматы хранения цифровых снимков - Formats of numerical photographs storage** - Թվային նկարների պահպանման ձևաչափեր - Պահպանման նպատակով կրիչների վրա (սկավառակ, մագնիսական ժապավեն, USB և այլն) տեղեկատվության գրանցման ձևաչափեր:

Փ-9. **Фотоблок-диаграмма - Photoblock-diagram** - Լուսանկարային բլոկ-դիագրամ - Ծավալային դիագրամ, որի մակերեսին պատկերված է տեղանքի լուսանկարը:

Փ-10. **Фотограмметрия - Photogrammetry** - [հին հուն. *φῶς - լույս, γράμμα - գրառում, պատկեր, μετρέω - չափում*] - Լուսանկարաչափություն - Գիտատեխնիկական ուղղություն, որը մշակում է չափագրման մեթոդներ և, օգտագործելով պատկերների չափագրման տվյալները, որոշում է օբյեկտների տարածական տեղադիրքը, ձևը, չափերը:

Փ-11. **Фотокарта - Photographic map** - Լուսանկարչական քարտեզ - Տպարանային եղանակով տպագրված տեղանքի լուսանկարչական պլան՝ կազմված որոշակի քարտեզագրական պրոյեկցիայում, որը կրում է անհրաժեշտ տեղեկատվություն (կոորդինատային ցանց, հորիզոնականներ, բնակավայրեր և այլն):

Փ-12. **Фотометрия - Photometry** - Լուսանկարաչափում - Լուսանկարների գրաֆիկական կերպարներով օբյեկտների օպտիկական ճառագայթման բնութագրիչների չափումն ու հաշվարկը:

Փ-13. **Фотоплан - Aerophotographic plan** - Լուսանկարչական հատակագիծ - Չևափոխված օդանկարների մոնտաժում՝ կոշտ հիմքի վրա, որն իր ճշտությամբ համապատասխանում է նույն մասշտաբի տեղագրական քարտեզին:

Փ-14. Фотопортрет - Photographic portrait - Լուսանկար - Երկրների, մայրցամաքների, մոլորակների լուսանկարչական, հեռուստատեսային կամ սկաներային երկրապատկեր, որն արտահայտում է դրանց արտաքին տեսքի բոլոր մանրամասներն ու բնական գույները, այնպես, ինչպես դրանք երևում են տիեզերքից:

Փ-15. Фоторельеф - Photographic hill shading - Լուսանկարչական ռելիեֆ - Քարտեզի վրա ռելիեֆի կիսատոնային պատկերը, որը ստացվում է տեղանքի ծավալային մոդելի թեք լուսավորության ներքո՝ նկարահանման միջոցով: Լուսանկարչական ռելիեֆը տպվում է թեմատիկ քարտեզների վրա տպագրական եղանակով և տալիս է ռելիեֆի բարձրորակ պլաստիկ պատկեր:

Փ-16. Фоторепродукция карт - Photoreproduction of maps - Քարտեզների լուսանկարչական վերարտադրություն - Քարտեզի բնօրինակի փոխակերպումը լուսանկարչական ձևի:

Փ-17. Фотоснимок (или снимок) - Photograph / Print - Լուսանկար (կամ նկար) - Վերջավոր չափերով պատկեր, որը ստացվել է լուսանկարչական եղանակով և արտաբերվել է ժապավենի, թղթի վրա կամ էլեկտրոնային եղանակով:

Փ-18. Фотосхема - Photomontage / Aerophotographic sketch - Լուսանկարչական սխեմա - Սովարաթղթի կամ գծագրական թղթի վրա պլանային օդանկարների աշխատանքային մակերեսի մոնտաժ (իր ճշտությամբ համապատասխանում է տեղանքի հատակագծին):

Փ-19. Фототеодолит - Phototheodolite - Լուսաթեոդոլիտ - Գործիք, որի միջոցով լուսանկարահանման եղանակով որոշվում է կտրտված ռելիեֆով տեղանքի, բաց հանքերի, կառույցների դիրքը, ձևը, չափերը: Կազմված է թեոդոլիտից և լուսանկարչական խցիկից:

Փ-20. Фототеодолитная съёмка - Phototheodolitic survey - Լուսաթեոդոլիտային հանույթ - Թեոդոլիտով լուսանկարահանում Երկրի մակերևույթից, որն օգտագործվում է բարձր լեռնային շրջանների ինժեներական հետազոտման և տեղագրական քարտեզագրման նպատակով:

Փ-21. Фототопография - Phototopography – Լուսանկարչական տեղագրություն - Տեղագրության բաժին, որը զբաղվում է երկրային լուսանկարների նյութերով տեղագրական քարտեզներ կազմելու մեթոդների ուսումնասիրմամբ և իրականացմամբ:

Փ-22. Фототрансформатор - Phototransformer – Լուսանկարների փոխակերպիչ - Սարք, որի միջոցով թեքությամբ տեղադրված օդալուսնկարչական խցիկի լուսանկարը փոխակերպվում է անհրաժեշտ մասշտաբով հորիզոնական լուսանկարի: Օգտագործվում է տեղանքի լուսանկարչական հատակագծեր կազմելու նպատակով:

Փ-23. Фототриангуляция - Phototriangulation – Լուսանկարչական եռանկյունավորում - Օդալուսանկարների վրա լուսանկարաչափական սարքավորումներով կետերի տեղադիրքի որոշման մեթոդ: Տարբերում են տարածական և հարթ լուսանկարաչափական եռանկյունավորումներ:

Փ-24. Функциональные возможности ГИС - Functional possibilities of GIS - ՄՏՀ գործառնության հնարավորությունները - Աշխարհագրական տեղեկատվական համա-կարգերի գործառնությունների և դրանց համապատասխան միջոցների ամբողջություն:

X

X-1. **Ход высотный** - High-altitude course - Բարձունքային ընթացք - Գեոդեզիական հանույթ, որն իրականացվում է հանույթային ցանցերի կետերի՝ տարբերանշանների և բարձունքների բարձրությունների որոշման նպատակով: Իրականացվում է երկրաչափական կամ եռանկյունաչափական նիվելիրացման եղանակով:

X-2. **Ход геодезический** - Geodetic course - Գեոդեզիական ընթացք - Գեոդեզիական հանույթ տեղանքում՝ բեկյալ գծեր կառուցելու նպատակով:

X-3. **Ход мензальный** - Plane-table course - Մենզուլային ընթացք - Մենզուլային տեղագրական հանույթի սկզբնական գործողություն, որն իրականացվում է մենզուլայի և կիպրեզեի օգնությամբ: Ընթացքի կետերի դիրքերը պլանում որոշվում են գրաֆիկական եղանակով՝ փոխհատումների միջոցով:

X-4. **Ход нивелирный** - Levelling course - Նիվելիրային ընթացք - Գեոդեզիական ընթացք, որն իրականացվում է նիվելիրի միջոցով՝ երկրաչափական նիվելիրացման եղանակով: Օստայում է նիվելիրային նիշերի բարձրությունների որոշման համար:

X-5. **Ход тахеометрический** - Tacheometric course - Հեռաչափական (տախեոմետրական) ընթացք - Տեղանքում բեկյալ գիծ կառուցելու գործողություն՝ կողմերի երկարությունների, նրանց միջև հորիզոնական ակյունների և բեկյալի բոլոր զագաթների բարձրությունների որոշմամբ: Հանույթը իրականացվում է օպտիկական կամ էլեկտրոնային տախեոմետրով, որոշվում են հանույթի կետերի կոորդինատները և բարձրությունները:

X-6. **Хроматическое поглощение** - Chromatic absorbing - Քրոմատիկ կլանում - Լույսի ընտրողական կլանում, քրոմատիկ են սպեկտրի գույները՝ կարմիրը, նարնջագույնը, դեղինը, կանաչը, երկնագույնը, կապույտը և մանուշակագույնը:

Ա

Ա-1. Цвет - Colour - Գույն - Տեսողական զգացողություն, որն առաջանում է տեսողական օրգանների վրա տարբեր երկարության էլեկտրամագնիսական ալիքների ազդեցությունից: Գույնը քարտեզների ձևավորման հիմնական միջոցներից է:

Ա-2. Цветовая модель - Colour spectrum model - Գունային մոդել - Համակարգչային գրաֆիկայում գույների ներկայացման համակարգ, որը որոշում է պիքսելի գունային բաղադրիչների անալիտիկ բանաձևը տարբեր գունային բազիսներում, որոնցից են՝ RGB, CMYK, HSL, HSV և այլն:

Ա-3. Цветовая палитра - Colour spectrum palette - Գունային ներկապնակ - Համակարգչային գրաֆիկայում գույների և երանգների որոշակի խումբ, որը հնարավոր է իրականացնել ֆիզիկապես և թվային եղանակով:

Ա-4. Цветовая пластика - Colour spectrum plastic arts - Գունային ներդաշնակություն - Գույների յուրահատուկ տեսողական ընկալում, երբ քարտեզի տարբեր գունավորված մասերը դիտողն ընկալում է ինչպես իրենից տարբեր չափով հեռացած տարածքներ: Օգտագործվում է ռեյլիեֆի գունային պատկերման նպատակով:

Ա-5. Цветовой охват - Colour spectrum inclusion - Գունային ընդգրկում - Գույների և նրանց երանգների բազմազանությունը, որը ստացվում է տպագրության ընթացքում երեք հիմնական գույների սինթետիկ համադրումից: Սև գույնն էապես հարստացնում է գունային ընդգրկումը:

Ա-6. Цветовой тон - Colour spectrum tone - Գունային երանգ - Գույնի հատկություն, որով հնարավոր է նրան համեմատել որևէ սպեկտրալ գույնի հետ:

Ա-7. Ценз отбора - Worth / Value of selection [*լատ. censeo* - կատարել գույքագրում] - Ընտրության ցենզ - Օբյեկտի մեծությունը կամ նշանակությունը սահմանող ցուցանիշ, ըստ որի՝ այն պահպանվում է քարտեզի ընդհանրացման ընթացքում: Ցենզի օրինակներ են՝ քարտեզում պահպանել այն անտառները, որոնք ունեն 10 կմ²-ից ավել տարածք, կամ, ընդհանրացման դեպքում, պահպանել բոլոր վարչական կենտրոնները:

Ц-8. Центр геодезического пункта - Centre of geodetic post / point [հին հուն. κέντρον - ծայր, կենտրոնացում] - Գեոդեզիական հիմնակետի կենտրոն - Սարք, որը կրում է գեոդեզիական կոորդինատներ:

Ц-9. Центрир (геодезический) - Centrir (geodetic) - Կենտրոնադիր (գեոդեզիական) - Գեոդեզիական գործիք, որը նախատեսված է կետը մի մակերևույթից մյուսին պրոյեկտելու համար:

Ц-10. Центрирование геодезического прибора - Centring / centering of geodetic instrument - Գեոդեզիական սարքի կենտրոնավորում - Գեոդեզիական գործիքի ուղղահայաց առանցքի համատեղումը գեոդեզիական կետի կենտրոնով անցնող ուղղաձիգ գծի հետ:

Ц-11. Цилиндрические проекции - Cylindrical projections - Գլանային պրոյեկցիաներ - Երկրագնդի մակերևույթի պրոյեկտումը շոշափող կամ հատող գլանի մակերևույթին: Տարբերում են՝ 1. նորմալ գլանային պրոյեկցիա, երբ գլանի առանցքը համընկնում է Երկրագնդի պտտման առանցքին, 2. լայնակի գլանային պրոյեկցիա, երբ գլանի առանցքը համընկնում է Երկրագնդի հասարակածի հարթությանը, 3. շեղ գլանային պրոյեկցիա, երբ գլանի առանցքը, երկրագնդի հասարակածի հարթության նկատմամբ, կազմում է որոշակի անկյուն:

Ц-12. Цифрование - Digitizing / Digitalization - Թվայնացում - 1. Տվյալները թվային տեսքի փոխակերպելու գործընթաց, որն իրագործվում է թվային մեքենայական միջավայրում տարբեր թվայնացուցիչների միջոցով: 2. Գեոինֆորմատիկայում, համակարգչային գրաֆիկայում և քարտեզագրության մեջ՝ գրաֆիկական և քարտեզագրական նյութերի փոխակերպումը թվային գրանցումների, ինչը թույլ է տալիս տարածական տվյալներն արտահայտել վեկտորային տեսքով:

Ц-13. Цифровая карта - Digital map - Թվային քարտեզ - Տեղանքի թվային մոդել, որը ստացվում է քարտեզագրական աղբյուրների թվայնացման, հեռագննման տվյալների լուսանկարաչափական վերծանման, դաշտային հանույթի տվյալների թվային գրանցման և այլ միջոցներով: Այն մտնում է քարտեզագրական տվյալների հենքի կազմի մեջ, հանդիսանում է ԱՏՀ տեղեկա-

տվական ապահովման հիմնական տարրերից մեկը և կարող է հանդիսանալ նաև ԱՏՀ գործողությունների արդյունք:

Ա-14. *Цифровая модель местности, ЦММ* - Digital model of terrain, DMT - Տեղանքի թվային մոդել, ՏԹՄ - Տարածական օբյեկտների թվային ներկայացում, որը համապատասխանում է տեղագրական քարտեզի և հատակագծի օբյեկտիվ կազմին: Օգտագործվում է թվային և տեղագրական քարտեզներ կազմելու համար:

Ա-15. *Цифровая модель рельефа* - ЦМР-Digital elevation model, DEM - Ռելիեֆի թվային մոդել, ՌԹՄ - Երկրի մակերևույթի և այլ եռաչափ տարածական օբյեկտների թվային արտահայտման միջոց՝ եռաչափ (x, y, z) տվյալների տեսքով, որպես բարձրությունների կամ խորությունների նիշերի (z կոորդինատների) ամբողջություն: Այդ կոորդինատները կարող են ներկայացվել կանոնավոր (grid) կամ անկանոն TIN ցանցի հանգույցներում կամ իզոգծերի (հորիզոնականների, իզոբաթերի և այլն) ձևով:

Ա-16. *Цифровая фотограмметрия* - Digital photogrammetry - Թվային լուսանկարաչափություն (ֆոտոգրամետրիա) – Ֆիզիկական օբյեկտների ձևերի, չափերի և տեղադիրքի որոշում՝ երկրային, օդային կամ տիեզերական թվային պատկերների միջոցով: Թվային լուսանկարաչափության յուրահատկությունը կայանում է նրանում, որ այն հենվում է միայն թվային պատկերների վրա: Թվային լուսանկարաչափության հասկացությունն ընդգրկում է տեղանքի թվային մոդելների միջոցով ռելիեֆի տարբեր ձևերի չափման եղանակները և մեթոդները: Թվային լուսանկարաչափությունը գիտություն և տեխնոլոգիա է, որը թվային պատկերների միջոցով թույլ է տալիս ստանալ հավաստի տեղեկություն շրջակա միջավայրի մասին:

Ա-17. *Цифровой аэрокосмический снимок* - Digital aerospace photograph - Օդատիեզերական թվային նկար - Կարգավորված թվերի զանգված՝ տեսանելիացվող երկչափ պատկերի տեսքով, ընդ որում՝ յուրաքանչյուր թիվ համապատասխանում է Երկրի մակերևույթի տարրական հատվածին և կախված է իր ինտեգրալ պայծառությունից:

Կ-1. Частный масштаб - Particular scale - Մասնակի մասշտաբ - Տվյալ կետում քարտեզի և Երկրի մակերևույթին օբյեկտի չափերի հարաբերությունը:

Կ-2. Черчение - Drawing / Skeiching - Գծագրություն - Առարկայի պատկերումը նրա չափերի և ձևի ճշգրիտ վերարտադրմամբ: Գծագրության հիմնական տարբերակը գծագրական երկրաչափության օրենքներով բնօրինակի պրոյեկցիաների կազմումն է:

Կ-3. Четырехмерное геоизображение - Four-dimensional geoimage - Քառաչափ երկրապատկեր - Բնութագրվում է երեք աշխարհագրական կոորդինատներով և ներկայացնում է օբյեկտի կամ գործընթացի փոփոխությունը ժամանակի ընթացքում:

Կ-4. Численный масштаб - Numerical scale - Թվային մասշտաբ - Թվային կոտորակ, որի համարիչը մեկ է, իսկ հայտարարը ցույց է տալիս, թե քանի անգամ են փոքրացված տեղանքի գծերի հորիզոնական պրոյեկցիաները հատակագծի վրա:

Կ-5. Читаемость знака - Readability of mark - Նշանի ընթեռնելիություն - Քարտեզի արագ և դյուրին ընկալումը: Պայմանական նշանների ընթեռնելիություն՝ պայմանավորված նշանի պարզ գծագրմամբ, կոմպակտությամբ, դիտողականությամբ և գեղարվեստականությամբ:

Կ-6. Читаемость шрифта - Readability of font - Տառատեսակի ընթեռնելիություն - Քարտեզի ընթերցման ժամանակ տառատեսակի արագ և դյուրին ընկալումը:

Կ-7. Чувствительность уровня - Sensibility of gauge - Հարթաչափի զգայունություն - Գործիքի պղպջակի գծային տեղափոխության չափը նրա առանցքի 10՝ թեքվելու դեպքում: Տեղափոխության չափը և արագությունը պայմանավորված են գործիքի որակով:

III

III-1. Широта географическая - Geographic(al) latitude - Աշխարհագրական լայնություն - Տե՛ս *Географическая широта*:

III-2. Широта геодезическая - Geodetic latitude - Գեոդեզիական լայնություն - Տե՛ս *Геодезическая широта*:

III-3. Шкала заложений - Scale of equivalent - Թեքվածքների սանդղակ - Հատուկ գրաֆիկ, որի օգնությամբ որոշվում է լանջի թեքությունը: Տպագրվում է տեղագրական քարտեզների վրա գծային մասշտաբի հետ մեկտեղ:

III-4. Шкала - Scale [*լատ. scala - սանդղակ*] - Սանդղակ - Գույների, դրանց խտության հաջորդական փոփոխության գրաֆիկական պատկերում: Քարտեզում սանդղակների միջոցով արտահայտում են երևույթների քանակական հատկանիշների փոփոխությունը:

III-5. Шрифт картографический - Cartographic script / Type [*գերմ. schrift-schreiben - գրել*] - Քարտեզագրական տառատեսակ - Քարտեզի վրա անվանումների և բացատրությունների համար օգտագործվող տառատեսակ, այն պետք է լինի հստակ, ընթեռնելի և կոմպակտ:

III-6. Штатив - Tripod / Base [*գերմ. stativ - եռոտանի (հուն. τρι - երեք + πόδι - ոտք)*] - Շտատիվ - Եռոտանի հենարան, որին ամրացնում են գեոդեզիական գործիքը: Այն տեղադրում են տեղանքի անշարժ կետում և բերում են աշխատանքային վիճակի:

Յ-1. Экваториальные координаты - Equatorial coordinates - Հասարակածային կոորդինատներ - Երկնային կոորդինատային համակարգերից մեկը: Այդ խմբի համակարգերի հիմնական կոորդինատային հարթությունն էրկնային հասարակածի հարթությունն է: Պահպանելով նշված պայմանը, որպես կոորդինատներ կարող են օգտագործվել տարբեր մեծություններ՝ երկնային մարմնի շեղումը, բևեռային հեռավորությունը, ժամային անկյունը:

Յ-2. Экер - Eker [ֆր. *équerre*, հին լատ. *exquadro* - ստեղծել քառանկյունի] - էքեր - Պարզ և դյուրատար գեոդեզիական գործիք, որը թույլ է տալիս տեղանքում կառուցել 90°, 45° կամ այլ ֆիքսված մեծության բազմապատիկ անկյուններ:

Յ-3. Экерная съёмка - Eker survey - էքերային հանույթ - էքերի օգնությամբ ստացված տեղագրական ուրվագծային հանույթ:

Յ-4. Эклиметр - inclinometer [հուն. *ekklíno* - թեքել և *մետր*] - էկլիմետր - Գեոդեզիական սարք, որը նախատեսված է տեղանքում հորիզոնի նկատմամբ գծի թեքման անկյունն ու Երկրի մակերևույթի կետերի բարձրություններն արագ որոշելու համար:

Յ-5. Экономика и организация картографического производства - Economics and organization of cartographic production - Քարտեզագրական արտադրության էկոնոմիկա և կազմակերպում - Աշխարհագրության բաժին (հարակից՝ քարտեզագրությանը և տնտեսագիտությանը), որի շրջանակներում ուսումնասիրվում են քարտեզների արտադրության օպտիմալ կազմակերպման, քարտեզագրական սարքավորումների և նյութերի, աշխատանքային ռեսուրսների, աշխատանքի արտադրողականության բարձրացման և տնտեսական արդյունավետության ինդիքները:

Յ-6. Экспертная система - Expert system - Փորձագիտական համակարգ - Արհեստական բանականության (ինտելեկտի) համակարգ, որն ընդգրկում է գիտելիքների հենք, որոշակի կանոններ և դուրսբերման «մեքենա» կամ մեխանիզմ: Համակարգը

հնարավորություն է տալիս օգտագործողի կողմից տրված փաստերով ճանաչել իրադրությունը, կանխատեսել դրա զարգացումները և տալ առաջարկներ:

Ձ-7. Экспозиция - Aspect [*լատ. expositio - ցուցադրում, ցուցահանդես*] - Կողմնադրություն - Ռելիեֆի ձևաչափական բնութագրիչներից մեկը, որը մակերևույթի թեքության հետ մեկտեղ հաշվարկվում է ռելիեֆի թվային մոդելից և թվապես հավասար է հորիզոնական հարթության վրա լանջին ուղղահայաց պրոյեկցիայի ազիմուտին:

Ձ-8. Эксцентриситет алидады - Eccentricity of alidade - Ալիդադի արտակենտրոնությունը - Ալիդադի պտտման կենտրոնի և լիմբի բաժանման օղակի կենտրոնի շեղումը միմյանցից:

Ձ-9. Эксцентриситет лимба - Eccentricity of limb - Լիմբի (բաժնօղակի) արտակենտրոնությունը - Լիմբի պտտման կենտրոնի և իր բաժանման օղակի կենտրոնի շեղումը միմյանցից:

Ձ-10. Элевационный винт - Elevation screw [*ֆր. elevation - բարձրացնող, բարձունք*] - Բարձրացնող (էլևացիոն) պտուտակ - Սարք, որը ծառայում է գեոդեզիական գործիքների դիտակի և միաժամանակ դրա հետ կապված հարթաչափի թեքության փոփոխման համար: Հիմնականում օգտագործվում է նիվելիրներում:

Ձ-11. Электронная карта - Electronic map - Էլեկտրոնային քարտեզ - 1. Քարտեզագրական պատկեր, որը տեսանելիացվել է թվային քարտեզների կամ ԱՏՀ տվյալների բազաների հիման վրա: 2. Քարտեզագրական պատկեր, ներկայացված թվային տվյալներով և դրանք տեսանելիացնող ծրագրային միջոցներով (բրաուզերներով): 3. Քարտեզագրական պատկեր, որը ստեղծվում է մոնիտորի վրա համակարգչի կամ այլ գրաֆիկական պատկերման սարքի միջոցով:

Ձ-12. Электронно-лучевая трубка - Electronic-radial tube - Էլեկտրոնաճառագայթային խողովակ - Համակարգչի մոնիտորի էկրանին տվյալների ներկայացման էլեկտրոնային սարքերի կառուցվածքային մաս:

Ձ-13. Электронный атлас - Electronic atlas - Էլեկտրոնային ատլաս - 1. Էլեկտրոնային քարտեզների վիզուալացման համակարգ: 2. Էլեկտրոնային քարտեզագրական ստեղծագործություն, որը նման է էլեկտրոնային քարտեզի: Բացի քարտեզագրական պատկերներից էլեկտրոնային ատլասը ներառում է տեքստեր, աղյուսակային տվյալներ, անիմացիաներ, տեսագրություններ և այլն:

Ձ-14. Элементы внешнего ориентирования кадровых воздушных и космических снимков - External orientation elements of aerial and space photographs - Կադրային օդային և տիեզերական նկարների արտաքին կողմնորոշման տարրեր - Մեծություններ, որոնք որոշում են նկարի և նրա պրոյեկցիայի կենտրոնների դիրքերը որևէ արտաքին կոորդինատային համակարգում: Այդ մեծությունների թվին են պատկանում երեք զծային (x , y , z) և երեք անկյունային մեծությունները՝ նկարահանման պահին օպտիկական առանցքի թեքության անկյունն ուղղաձիգի կամ նկարի հարթության նկատմամբ (α), օպտիկական առանցքի շեղումը սկզբնական միջօրեականի հարթության նկատմամբ (A), լուսանկարի պտտման անկյունն օդալուսանկարչական ապարատի օպտիկական առանցքի շուրջը (β):

Ձ-15. Элементы внутреннего ориентирования аэроснимка - Internal orientation elements of aerial photographs - Օդալուսանկարի ներքին կողմնորոշման տարրեր - Լուսանկարչական ապարատի կիզակետային հեռավորությունը (f) և նկարի գլխավոր կետի (O) կոորդինատները:

Ձ-16. Элементы карты - Map elements / Map features - Քարտեզի տարրեր - Դրանց թվին են պատկանում քարտեզագրվող տարածքը, բացատրագիրը և արտաշրջանակային տարրերը:

Ձ-17. Эллипс искажений - Ellipse of distortions - Աղավաղման էլիպս - Ցույց է տալիս քարտեզի վրա իրական մակերևույթի աղավաղման բնույթը և չափը: Այն անսահման փոքր էլիպս է քարտեզի կամայական կետում, որն արտապատկերում է Երկրագնդի համապատասխան կետում անսահման փոքր շրջանագիծը:

Ձ-18. *Эллипсоид* - Ellipsoid - Էլիպսոիդ - Եռաչափ տարածության մեջ մակերևույթ, որը բնութագրվում է երեք փոխադարձ ուղղահայաց, տարբեր երկարություն ունեցող առանցքներով: Այն դեպքում, երբ առանցքներից երկուսը հավասար են միմյանց, մակերևույթը կոչվում է պտտման էլիպսոիդ, որն առաջանում է էլիպսի՝ առանցքներից մեկի շուրջը պտտելու արդյունքում:

Ձ-19. *Эллипсоид земной* - Earth's ellipsoid - Երկրային էլիպսոիդ - Պտտման էլիպսոիդ, որը բնութագրում է Երկրի ձևը և չափերը: Ծառայում է երկարությունների, մակերեսների, գեոդեզիական երկայնության և լայնության, ազիմուտների հաշվարկման համար, ինչպես նաև քարտեզագրական պրոյեկցիաների կառուցման և այլ խնդիրներ լուծելու նպատակով:

Ձ-20. *Эллипсоид Красовского-Изотова* - Krasovsky-Izotov's ellipsoid - Կրասովսկի-Իզոտովի էլիպսոիդ - Ռեֆերենց էլիպսոիդ (ի պատիվ ռուս գեոդիզիստներ Ֆ.Ն.Կրասովսկու և պրոֆ. Ա.Ա.Իզոտովի), որի չափերը հաշվարկվել են առավել ճշգրիտ և 1946թ.-ից ընդունվել են ԽՍՀՄ-ում որպես գեոդեզիական աշխատանքների իրականացման հիմք:

Ձ-21. *Эллипсоид общий земной* - Earth's general ellipsoid - Ընդհանուր երկրային էլիպսոիդ - Պտտման էլիպսոիդ, որը մոտարկում է Երկիրն ամբողջությամբ, և որի մակերևույթին պրոյեկտում են բոլոր գեոդեզիական չափումները:

Ձ-22. *Эллипсоидальные координаты* - Ellipsoidal coordinates - Էլիպսոիդային կոորդինատներ - Կոորդինատներ, որոնք որոշում են Երկրի մակերևույթի կետի դիրքը երկրային էլիպսոիդի նկատմամբ: Կազմված են երեք մեծություններից՝ գեոդեզիական լայնությունից, երկայնությունից և բարձրությունից:

Ձ-23. *Эскизная карта* - Draft map - Ուրվագծային (էսքիզային) քարտեզ - Մոտավոր կամ ճանաչողական քարտեզի սխեմատիկ գրաֆիկական վերարտադրություն:

Ձ-24. *Эталон* - Standard - Էտալոն (չափման միավորի) - Գիտության և տեխնիկայի ներկայիս ճշտության պայմաններում չափման միավորը վերարտադրելու, պահպանելու և փոխանցելու չափանիշային առարկա կամ չափիչ սարք:

Ձ-25. Эталонное дешифрирование - Standard interpretation - Էտալոնային վերծանում - Գրասենյակային (կամերալ) վերծանում՝ վերծանման էտալոնների կիրառմամբ, որոնք ստեղծվում են դաշտում՝ տվյալ տարածքի համար նրա առանցքային հատվածներում:

Ձ-26. Этапы создания карт - Stages of map making - Քարտեզ կազմելու փուլերը - Իրականացվում է երկու ճանապարհով՝ դաշտային հանույթի և լաբորատոր պայմաններում: Լաբորատոր պայմաններում քարտեզ կազմելու փուլերն են՝ նախագծում, կազմում, հրատարակման նախապատրաստում և հրատարակում:

Ю

Ю-1. Юстировка - Regulating - Ճշտադրում - Գործողությունների ամբողջություն. չափման կամ օպտիկական սարքն աշխատանքային դիրքի կամ վիճակի բերելու նպատակով՝ ապահովելով գործողությունների ճշտությունը և հուսալիությունը:

Կ

Կ-1. Язык карты - Map language - Քարտեզի լեզու - Քարտեզագրության մեջ նշանների համակարգ, որը ներառում է պայմանական նշանները, քարտեզագրական պատկերների կառուցման, կիրառման և ընթերցման կանոնները:

Կ-2. Яркостные преобразования - Brightness transformations - Պայծառության փոխակերպումներ - Նկարի վրա պատկերի բարելավում, հաշվի առնելով նկարի սպեկտրալ պայծառության քվանտային տիրույթը, գունային սինթեզը, գունակոդավորումը, պայծառության մեծությունների գտումը և այլն:

Կ-3. Яркость - Brightness - Պայծառություն - Առարկայի լուսավորվածության չափ, որը միշտ փոքր է լուսավորությունից, քանի որ ընկնող լույսի մի մասը կլանվում է, իսկ մյուսը՝ ցրվում:

Կ-4. Ячейка - Cell / Grid / Grid cell - Բջջից - Երկչափ տարածական օբյեկտ, կանոնավոր ցանցի գծերով Երկրի մակերևույթի մասնատման տարր, տարածական օբյեկտների կանոնավոր բջջային արտահայատում: Տարբերվում է պիքսելից, որն առաջանում է ռաստրային գծերով պատկերի (ոչ թե Երկրագնդի մակերևույթի) մասնատման արդյունքում:

Ա

- Աբերացիա A-1.
 Աբստրակտ երկրաչափական նշաններ A-4.
 Ազիմուտ A-19.
 Ազիմուտային պրոյեկցիաներ A-21.
 Ալգորիթմ A-25.
 Ալիդադ A-26.
 Ալիդադի արտակենտրոնությունը Յ-8.
 Ակնապակու միկրոմետր M-41.
 Ադավադման էլիպս Յ-17.
 Ադել Դ-27.
 Անագլիֆային քարտեզ A-27.
 Անամորֆիկ քարտեզ A-35.
 Անդրադարձ մասնատված մակերևույթից O-44.
 Անդրադարձման (Լամբերտի) օրթոտրոպային ինդիկատորիս O-28.
 Անդրադարձման ինդիկատորիս H-22.
 Անդրաձարձման խառն ինդիկատորիս C-39.
 Աներոիդ A-36.
 Անընդհատացում K-70.
 Անընդհատություն H-14.
 Անկապակցություն H-12.
 Անկյունաչափ T-30.
 Անհրաժեշտ չափումներ H-7.
 Անհրաժեշտ չափումներ H-13.
 Անոտացիա A-38.
 Անուղղակի չափումներ H-6.
 Անուղղակի չափումներ K-86.
 Անվանական մասշտաբ H-21.
 Աշխարհագրական ազիմուտ A-16.
 Աշխարհագրական անվանումների գրացուցակ K-35.
 Աշխարհագրական անվանումների ուղեցույց Y-8.
 Աշխարհագրական բևեռ Γ-14.
 Աշխարհագրական բևեռ Π-45.
 Աշխարհագրական երկայնություն Γ-7.
 Աշխարհագրական երկայնություն Դ-24.
 Աշխարհագրական լայնություն Γ-12.
 Աշխարհագրական լայնություն III-1.
 Աշխարհագրական կոորդինատներ Γ-13.
 Աշխարհագրական կոորդինատներ K-77.

- Աշխարհագրական
միջօրեական
M-26.
- Աշխարհագրական
տեղեկատվական համակարգ
Դ-8.
- Աշխարհագրական
տեղեկատվություն Դ-46.
- Աշխարհագրական ցանց Դ-11.
- Աշխարհագրական քարտեզ
Դ-9.
- Աչքաչափական հանույթ Դ-66.
- Ապարատային ապահովում
A-40.
- Առանձնացված սերվեր B-38.
- Առանցքային միջօրեական C-
58.
- Աստիճանական ներկում Դ-90.
- Աստիճանացանց Դ-91.
- Աստղաբաշխական ազիմուտ
A-15.
- Աստղաբաշխական ազիմուտ
A-45.
- Աստղաբաշխական
զեռոդեզիական կետ A-49.
- Աստղաբաշխական
զեռոդեզիական ցանց A-48.
- Աստղաբաշխական
ծանրաչափական
նիվելիրացում
A-50.
- Աստրոլյաբիա A-44.
- Ավտոմատացված կամ
ալգորիթմական
ընդհանրացում
A-9.
- Ավտոմատացված
քարտեզագրական
համակարգ
A-10.
- Ավտոմատացված
քարտեզագրություն A-5.
- Ավտոմատացված
քարտեզագրություն A-7.
- Ատլաս A-51.
- ԱՏՀ Դ-63.
- ԱՏՀ գործառույթային
հնարավորությունները Փ-24.
- ԱՏՀ համացանցում Կ-34.
- Ատրիբուտ A-53.
- Արբանյակային դիրքորոշման
համակարգ C-55.
- Արբանյակային դիրքորոշման
համակարգ C-26.
- Արդիականացում A-23.
- Արեալ A-43.
- Արեզակասինխրոն ուղեծրեր
C-43.
- Արևադարձ Դ-3.
- Արևահեռ կետ A-54.
- Արևելյան հակում B-36.
- Արևմտյան հակում 3-5.
- Արհեստական
բանականություն
Կ-49.

Արտամասշտաբային
պայմանական նշաններ B-33.
Արտաքին սարքեր II-8.
Աքրոմատիկ կլանում A-55.

Բ

Բազմագույն լուսավորվող
սանդղակներ M-46.
Բազմակոնային
պրոյեկցիաներ
II-41.
Բազմանկյունաչափական
կետ II-39.
Բազմանկյունաչափական
հիմնակետ II-94.
Բազմանկյունաչափություն
II-40.
Բազմասպեկտրալ հանույթ
M-45.
Բազմատիրույթ հանույթ
M-43.
Բազմատիրույթ հանույթի
սկզբունք M-44.
Բաթիմետրական սանդղակ
B-9.
Բարդ նիվելիրացում H-25.
Բարդ նիվելիրացում C-36.
Բարձունքային ընթացք B-46.
Բարձունքային ընթացք X-1.
Բարձունքային նիշ B-45.
Բարձրագույն գեոդեզիա Γ-32.
Բարձրաչափ B-47.
Բարձրացնող պտուտակ Յ-10.

Բարձրություն B-39.
Բարոմետրական
նիվելիրացում
H-20.
Բացատրական պայմանական
նշաններ II-52.
Բացարձակ բարձրություն
A-3.
Բացարձակ բարձրություն
B-40.
Բերզտրիխ B-11.
Բևեռային կոորդինատներ
K-81.
Բևեռային կոորդինատներ
II-46.
Բլանկային քարտեզ B-12.
Բլոկ դիագրամ B-14.
Բոլոտովի եղանակ B-15.
Բուֆերային զոտի B-19.
Բուֆերային շերտ B-20.
Բջիջ Я-4.
Բրաուզեր B-16.

Գ

Գազետիր Γ-1.
Գամմա ճառագայթներ Γ-2.
Գեոդեզիա Γ-31.
Գեոդեզիական (էլիպսոիդալ)
բարձրություն B-41.
Գեոդեզիական (էլիպսոիդալ)
բարձրություն Γ-18.
Գեոդեզիական ազիմուտ A-17.

Գեոդեզիական
աստղաբաշխություն A-46.
Գեոդեզիական
աստղաբաշխություն Դ-16.
Գեոդեզիական բազիս B-3.
Գեոդեզիական բազիս Դ-26.
Գեոդեզիական գիծ Դ-21.
Գեոդեզիական գործիքը
հորիզոնական դիրքի բերելը
Դ-85.
Գեոդեզիական գործիքների
ստուգում II-25.
Գեոդեզիական երկայնություն
Ա-25.
Գեոդեզիական ընթացք X-2.
Գեոդեզիական ընթացք Դ-29.
Գեոդեզիական լայնություն
Դ-19.
Գեոդեզիական լայնություն
Դ-24.
Գեոդեզիական լայնություն
III-2.
Գեոդեզիական կետ T-25.
Գեոդեզիական
կոորդինատներ Դ-25.
Գեոդեզիական
կոորդինատներ
K-78.
Գեոդեզիական հակադարձ
խնդիր 3-1.
Գեոդեզիական հարթաչափ
Դ-28.
Գեոդեզիական հարթաչափ

Y-15.
Գեոդեզիական հիմնակետ
Դ-27.
Գեոդեզիական հիմնակետ
II-91.
Գեոդեզիական հիմնակետի
կենտրոն II-8.
Գեոդեզիական մեծություն
B-9.
Գեոդեզիական մեծություն
Դ-17.
Գեոդեզիական միջօրեական
M-27.
Գեոդեզիական նիվելիրացում
Դ-30.
Գեոդեզիական նշան 3-17.
Գեոդեզիական չափումներ II-5.
Գեոդեզիական չափումների
արդյունքների մշակում O-4.
Գեոդեզիական չափումների
միասնականություն E-1.
Գեոդեզիական չափումների
պայմաններ Y-17.
Գեոդեզիական սարքի
կենտրոնավորում II-10.
Գեոդեզիական ցանց Դ-23.
Գեոդեզիական ցանց C-15.
Գեոդեզիական ցանցի
հիմնակետերի ստուգում O-5.
Գեոդեզիական փոխհատում
Դ-20.

Գեոդեզիական փոխհատում
3-8.
Գեոդինամիկական պոլիգոն
Ս-38.
Գեոիդ Դ-35.
Գեոինֆորմատիկա Դ-39.
Գեոինֆորմացիոն
արդյունաբերություն Դ-40.
Գեոինֆորմացիոն կրթություն
Դ-42.
Գեոինֆորմացիոն նախագիծ
Դ-44.
Գեոինֆորմացիոն շուկա Դ-45.
Գեոինֆորմացիոն
տեխնոլոգիաներ Դ-43.
Գեոինֆորմացիոն
քարտեզագրություն
Դ-41.
Գեոկոդավորում Դ-47.
Գեոմատիկա Դ-48.
Գեոմոդելավորում Դ-54.
Գերպատկերային
տեսանելիացում Դ-62.
Գիծ (գծային օբյեկտ) Մ-6.
Գիտելիքների հենք Ե-2.
Գլանային պրոյեկցիաներ
Ա-11.
Գլխավոր մասշտաբ Դ-65.
Գլոբալ դիրքորոշման
համակարգ Դ-67.
Գլոբուս Դ-68.
ԳԼՈՆԱՍՍ Դ-69.
Գծագրական սարք Դ-102.

Գծագրություն Կ-2.
Գծային մասշտաբ Մ-5.
Գործիքային հանույթ Ի-26.
Գործիքային հանույթ Ը-81.
Գույն Ա-1.
Գունային բնօրինակ Կ-92.
Գունային երանգ Ա-6.
Գունային ընդգրկում Ա-5.
Գունային մոդել Ա-2.
Գունային ներդաշնակություն
Ա-4.
Գունային ներկապնակ Ա-3.
Գունային նմուշ Կ-91.
Գունաչափում Կ-53.
Գրադ (գոն) Դ-89.
Գրասենյակային
աշխատանքներ
Կ-6.
Գրավիմետրական հանույթ
Դ-87.
Գրաֆ Դ-93.
Գրաֆիկական միջավայր
Դ-97.
Գրաֆիկական
բեռնվածություն Դ-95.
Գրաֆիկական կերպար Դ-101.
Գրաֆիկական տարրեր Դ-99.
Գրաֆիկական
փոփոխականներ Դ-98.
Գրաֆիկացում Դ-94.
Գրինվիչի միջօրեական Դ-103.
Գրինվիչի միջօրեական Մ-28.

Դ

- Դասավորվածք K-60.
Դելոնեի եռանկյունավորում
T-36.
Դիգիթայզեր / դիջիթայզեր
Ճ-15.
Դինամիկ երկրապատկերներ
Ճ-20.
Դինամիկ ընդհանրացում
Ճ-17.
Դինամիկ
լուսանկարաչափություն
Ճ-19.
Դինամիկ
քարտեզաչափություն
Ճ-18.
Դիտախողովակ 3-22.
Դիտակի խոշորացում Y-1.
Դիտակի տեսադաշտ II-33.
Դիտասևեռման քանոն B-23.
Դիտասևեռման քանոն Ղ-4.
Դիտասևեռում B-25.
Դիտողականություն H-3.
Դիտոց (վիզիբ) B-22.
Դիրեկցիոն անկյուն Y-4.
Դիրեկցիոն անկյուն Ճ-21.

Ե

- Եզրագիծ K-72.
Ելակետային գեոդեզիական
հիմնակետ II-92.
Ելակետային նկարներ II-55.

- Եռանկյունաչափական
նիվելիրացում H-26.
Եռանկյունաչափական
նիվելիրացում T-37.
Եռանկյունավորում T-35.
Երթուղի M-10.
Երթուղու օդային
լուսանկարահանում M-11.
Երկայնակի պարալաքս II-68.
Երկնային կոորդինատներ
K-80.
Երկնային կոորդինատներ H-
10.
Երկնային հորիզոն Դ-73.
Երկնային միջօրեական M-30.
Երկնային միջօրեական H-11.
Երկրագնդի մագնիսական
դաշտ M-1.
Երկրագնդի սեղմվածություն
C-18.
Երկրաժամանակաչափու-
թյուն
Դ-56.
Երկրակենտրոն
կոորդինատներ
Դ-57.
Երկրակենտրոն
կոորդինատներ K-79.
Երկրահեռակետ (ապոգեյ)
A-39.
Երկրային էլիպսոիդ 3-13.
Երկրային էլիպսոիդ Յ-19.
Երկրային սֆերոիդ 3-12.

Երկրաչափական
նիվելիրացում
Դ-51.
Երկրաչափական
նիվելիրացում
Ի-21.
Երկրաչափություն Դ-53.
Երկրապատկեր Դ-36.
Երկրապատկերագիտություն
Դ-37.
Երկրապատկերաչափություն
Դ-38.
Երկրապատկերի
«քառակուսի»
Կ-37.
Երկրապատկերի լուծաչափ
Ք-15.
Երկրապատկերի
կոնկրետություն Կ-69.
Երկրապատկերի մասշտաբ
Մ-12.
Երկրապատկերի
միարժեքություն Օ-12.
Երկրապատկերների
ընտրողականություն Ի-3.
Երկրապատկերների
համակարգ Ը-25.
Երկրապատկերների
համատեղելիություն Ը-42.
Երկրապատկերների
մասշտաբների դաշտ Ս-34.
Երկրապատկերների
մեկնաբանում Ի-39.

Երկրապատկերների մշակում
Օ-3.
Երկրապատկերների
սինթետիկություն Ը-23.
Երկրապատկերների
սինտպտիկություն Ը-20.
Երկրապատկերների
տեսություն
Թ-12.
Երկրավերլուծություն Դ-6.
Երկրատարածաչափություն
Դ-55.
Երկրի մակերևույթի
լուսավորվածություն Օ-29.

Ջ

Ջենիթ 3-14.
Ջենիթային հեռավորություն
3-15.
Ջուզահեռական Ս-4.
Ջտում Փ-4.
Ջրոյական աղավաղման գիծ
Ո-7.
Ջրոյական աղավաղման կետ
Թ-26.
Ջրոյի տեղը Մ-34.

Է

Էլեկտրոնաճառագայթային
խողովակ Ծ-12.
Էլեկտրոնային ատլաս Ծ-13.
Էլեկտրոնային քարտեզ Ծ-11.

Էլեկրամագնիսական
ալիքների սպեկտր C-47.
Էլիպսոիդ Յ-18.
Էլիպսոիդային
կոորդինատներ Յ-22.
Էկվիմետր Յ-4.
Էտալոն Յ-24.
Էտալոնային վերծանում Յ-25.
Էքեր Յ-2.
Էքերային հանույթ Յ-3.

Ը

Ընդլայնական մասշտաբ II-48.
Ընդհանուր
աշխարհագրական
քարտեզներ O-6.
Ընդհանուր երկրային
էլիպսոիդ O-7.
Ընդհանուր երկրային
էլիպսոիդ Յ-21.
Ընդհանրացում Γ-5.
